

ԲԱԳԻՆ *Pakine*

ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2010, ԽԸ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4




ՅԱԽԵՐԺՈՒԹԻՒՆ

ԶՈՐԳ



ԱՆԱՀԻՏ



ԶՈՒԳԱՆՈՒԱԳ



ԲՈՒՈՐ ՃԱՄԲԱՆԵՐԸ
ԿԸ ՏԱՆԻՆ ԵՐԵԻԱՆ

◆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

◆ ԱՐՈՒԵՍՏ

◆ ԻՄԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յնկոթ Պելեան

ՓՈԽ ԽՄԲԱԳԻՐ
Սեդա Գրիգորյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուհ Թրոյան (Լիբանան)
Սարգիս Կրիստոսյան (Լիբանան)
Մոսիս Հերպելյան (Լիբանան)
Շուհի Տասնադեսյան (Լիբանան)
Հրանդ Մարգարյան
(Միջին Արևելք)
Ահեսա Հաճյան (Նիդերլանդներ)
Արթուր Լիպարյան
(Հայաստան)
Յարոսլավ Դեմյան (Գերմանիա)
Յնկոթ Տեր Դոմինգոս (Լիբանան)
Զարա Բեյրության (Լիբանան)

Գեղարվեստական նպաստող
Եւսթակիոս Մոսիս Ծիրան

Էջարդոն
Անի Փելլիպանյան-Սարգիսյան


Հասցե՝
Պոստ Համոս
Շնորհքյան Կեդրոն
Բ. յուր
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տղամարդկան
Համազասպյան
«Վազ Բեյթան»
Տղամարդ

Յրոհուհի Կեդրոն
Համազասպյան
Գրասարան,
Շնորհքյան Կեդրոն,
Պոստ Համոս
Հեռ. (01) 241263/4
Փաքս՝
(01)260329
Փոստային՝
80-1096 Պ. Համոս
E-mail:
imphamaz@inco.com.lb



Հրատարակություն
Համազասպյան
Կեդրոնական Վարչություն



ԲԱԳԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ,
ՆՈՅԵՄԲԵՐ
ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2010
ԽԸ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԼՍԵԼ՝ ԵՐԲ ԲԱՌԵՐԸ ԿԸ ՊԱՏՄԵՆ ԻՐԱԽՈՒՆՔ ԵՒ ԱՆՅԱԾ ՈՒՂԻ Բ. -1

• ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՕՐՀԱՍԱԿԱՆ - ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ - 3
ՀԱՄՅՔԻ ՏՂԱՅ - Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ -10
ԿՂԵՈՊԱՏՐԱՅԻՆ - Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ -13

• ԱՐԶԱԿ

ՄԵՆԱԿԵԱՅԸ ԵՒ... - ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ -15
ՍԱԼԱՄ, ԶԻՆԿԻՋ - ԼԱԼԱ ՄԻՍԿԱՐԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ - 29
ԵՒԱ -ԿՈԼԵԱ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ -38

• ՄՇԱԿՈՅԹ

ՏԵՂԱԲՆԻ՞Կ Է ԱՐԴԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԸ...
«ՂԱՐԱԲԱՂ» ԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ - ԱՐԹՈՒՐ ՆԱԽԱՐԱՐԵԱՆ - 45
ՀԱՅԵՐԷՆԸ՝ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՆՋԱՐԱՆՈՒՄ -
ՄԵՐԻ ՀԵՐՈՒՆԻ-ՍԱՐԳՍԵԱՆ - 53

• ԳՐԱՆՕՍԱԿԱՆ

«ԱՐԴԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ - ՍՓԻՒՌ» -ՇՈՒՇԻԿ ՏԱՄԵՂԵՏԵԱՆ - 62

• ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՈՒՅՆԸՐ ՄԱՐԻԱ ՌԵԼՔԷ - ՀԱՅԱՅՈՒՅ՝ ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ - 64
ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԱԺՇԱԳԷՏԸ ԵՒ ՀԱՅ ՊԱՐՈՒՀԻՆ - ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՆՍԵԱՆ (ԱՄՆ)
ԱՐԾՈՒԻ ԲԱՆՊԻՆԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) - 68

• ԸՆԹԵՐՅՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ 2010 - 71

• ԱՐՈՒԵՍ

ՀԵՏԵՒԻԼ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԵՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ
ԱՂԱՍԻԻ ԲԱՋՄԱՇԵՐՏ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ - ԲԱԳԻՆ -73

• ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 2010 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1, 2, 3, 4 ԹԻԻԵՐՈՒ - 78

• ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - 80

Կողքի նկարները եւ քանդակները՝ Աղասիի

ԼՍԵԼ՝ ԵՐԲ ԲԱՌԵՐԸ ԿԸ ՊԱՏՄԵՆ ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ԱՆՅԱԾ ՈՒՂԻ

Բառերը ինքնատիպ գոյություններ են, կը ձամբորդեն, կը փոխուին, կը յիշեն, սոսկ հաղորդակցական նշաններ չեն, կ'ընկերանան այն ժողովուրդին որուն լեզուին մէջ կը գտնուին: Անոնք մարդեղութեան յատկանիշ են: Յաճախ մտածած եմ ֆրանսացի իմաստասէր Լէոն Դրէօնշվիկի հետեւեալ քանի մը բառերով բանաձեւուած գաղափարի մասին, որ կ'ըսէ. «Բառերու ժառանգութիւն, գաղափարներու ժառանգութիւն» (*Héritage de mots, héritage d'idées*), որոնցմով կը կազմուի տարբեր ժողովուրդներու իւրայատուկ ինքնութիւնը, զորս հոգեվերլուծող Քարլ Կիւսդաւ Եունկ կը սահմանէ որպէս *archétype*, նախատիպար, որ կը մնայ ուղեղի քջիջներուն մէջ: Երբ անհատ եւ հաւաքականութիւն չեն ժառանգեր բառերով ինչ որ հասած է, կը սկսի ինքնութեան այլասերումը, ձեւաւորելով նոր ինքնութիւն:

ԲԱԳԻՆԻ այս համարով Արթուր Նաւասարդեան (էջ 45) եւ Մերի Հերունի Սարգսեան (էջ 53) կը խօսեցնեն բառերը եւ անոնք կը պատմեն «հրաշուրթ վէպ» մը, պիտի ըսէր Կոստան Զարեան: Այդ բառերը աշխարհագրութեան եւ երկրաբանութեան դասեր են, հողի պատմութիւն՝ բնիկ ժողովուրդի լեզուով, երբ Արթուր Նաւասարդեան կը խօսի Հրազդան գետի մասին, կամ Արցախ-Ղարաբաղի: Բնիկ ժողովուրդն է որ իր բառերով մկրտած է զանոնք, երբ տակաւին անգիր էր պատմութիւնը: Անոնք աննիթական կոթողներ են: Բառերը կը պատմեն նաեւ ժողովուրդներու աներեւակայելի յարաբերութիւններու մասին: Մերի Հերունի, բառերու բաղդա-



տութեամբ, ցոյց կու տայ որ մեր նախնիները հանդիսացած են քաղաքակրթական հզօր ազդակ, հեռաւոր աշխարհներ տանելով գիտութիւն եւ արհեստներ, աստղադիտարաններ եւ ձուլագործութիւն, մինչեւ Եւրոպայի ծայրամասերը եւ Կեդրոնական Ամերիկա, չեն սպասած Քրիստափոր Գոլոմպոսը:

Կեդրոնական Ամերիկա... Հայերէն բառարմատներու եւ այմարներու լեզուին բաղդատութիւնը երեւակայական գիտութեան վէպի (science fiction) կը նմանի... Եթէ խորացուին ուսումնասիրութիւնները, թերեւս կը կրկնուի Ժիլ Կեռնի Նոթիլիւսի պատմութիւնը, գիտական երազանքը իրականութիւն դարձնելով:

Արթուր Նաւասարդեանի եւ Մերի Հերունիի էջերու ընթերցումը կը թելադրէ այն յստակ իմացութիւնը որ մարդը կը կազմուի իր լեզուով, որ ենթագիտակիցը կը դրոշմէ նախնիներու պատմութեամբ, որ ինքնութիւն կը կերտէ: Այսինքն, ազգային լեզուն եւ անով ստեղծուող մշակոյթը էական նշանակութիւն ունին ազգի գոյացման, կազմաւորման եւ շարունակման համար:

Հետեւաբար, ինչպէս անցեալին, այսօր աւելի քան երբեք, մեր գոյապայքարի առանցքին կը գտնուին լեզուն, գրականութիւնը եւ մշակոյթը: Երբ կը կորսուի լեզուն, հայը կը դառնայ ծագումով հայ, եւ Վիգէն Խեչումեանի բառերով կը դադրի նախնիին շարունակութիւն ըլլալէ:

«Բ.»

ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ

Օ Ր Հ Ա Ս Ա Կ Ա Ն

Ծառայներն են
որ նստեր են
վրան կեանքին
ու բնաջինջ ըրեր
վկան
տիեզերքին

ծառայներն են
որ կը սոնքան
տպաւորուած
իրենց չափով

ծառայներն են որ կը խնդան
անասնական
հրձուանքով

ծառայներն են որ զարմանքով
կը հիանան
ծառայներու ձակատագրով

ծառայներն են
որ

յանկարծուստ

կը չքանան
առանց հետքի

ու նոր ծիլեր կը բողբոջին
սիւներն ի վեր
գոռոգութեան
ու բաղեղներ կը պլլուին
խորանն ի վեր
հին կրօնին
ու գիտութեան

ու նոր կեանքեր
անփութութեամբ

զինաթափող

կ'ելլեն ոտքի

«ՄՏԱՏԱՆՋՈՒԹԻՒՆ»
Գործ՝ ՊԱՅԾԱՌ ԿԱՆԹԵՂԻ



ու եռանդով

ժիր քորթի

կը ժպրհին
կը բզըքտեն
կը կոխկոտեն

անհպելին

ու կեանքն է որ

վերջին պահուն եկած խելքի

կ'արհամարհէ
ծաւալապաշտ
նենգութիւնը
իր անցեալին

Բայց նոյն պահուն
ու նոյն պորտէն

ծաւալներն են

որ կը ծնին

նոյն աւիւնով ահարկու

ու կը կանգնին
վրէժխնդիր

բրտօրէն

անէութիւնն իրենց կ'ըլլայ բանտ

լռին

եւ լռութիւնն իրենց

մարմին խաւարի

ծաւալներն են
որ չեն զգար
ու մայր չունին

որ կը տենչան
ու մահ չունին

կ'ապրին կեանքով
անարի
մանրախնդիր
թուաբան
ու բնագդով

անթերի

կ'ապրին կէս քուն կէս արթուն
դռնփակ
ու անանուն

ծաւալներն են
որ մէկէն
գիշերուան մէջ
վեր կը նետուին

սարսափով

ու կը նային իրարու

ծաւալներն են
որ կը յիշեն
նողկանքով

մռութն իրենց

որ ոխով
կը ջարդոտեն հայելին

եւ կը ձգնին

մարմինն իրենց

ազատել

մէկգմէկու անցեալէն

Ու ծաւալներ որոնք զիրար կը փնտռեն

որոնց արեան գռիհներէն

կոյր ու բեղուն

կ'երթեւեկեն մանրէները

գրկանքին

փոխակերպուած ծիներու

այլանդակ
ու անմեկին

կ'երթեւեկեն կատաղութեամբ շուներու
կառչած այսպէս

մէկգմէկու
որկորին

դատապարտուած
իրարու

Ու ծաւալներ որոնք այսպէս տմարդ ու սին

հեծած ուսին
սամարացի

նոյն մարդուն

նստած այսպէս քաշով լկտի
աչք տնկելով իր կեցոյթին

իր դարաւոր տունն
ու այգին

յափշտակած

թուղթն այս շինծու
բռնած քթին
իր ապշահար

կը պահանջեն
վերջին ծուէնն իր տիրոյթին

վերջին հիւլէն յիշողութեանն

իր կամակոր

վերջին փշրանքն
այս նշխարին

ամէն առտու
ծայրը ծայրին
կը ձշգուի
կը հերքուի
մեր չարչարուած
ինքնութիւնը

Ու ծաւալներ
որոնք այսպէս պիտի ապրին մեր հաշուոյն

որոնք պիտի
կիրակիէ կիրակի

«ԲՆԱՆԿԱՐ - ԱՅՆՃԱՐ»
Գործ՝ ՅՈՎՍԷՓ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ



մտնեն մատուռ
երկրպագեն
կանգնին ոտքի
խաչակնքեն

խոստովանին
պարտքերն իրենց
բայց լրբօրէն

քալեն դուրս

օր ցերեկով
խղճով հանգիստ

մաս-մաքուր

Ներքին հեղեղ որ կը հոսի գիշեր ու զօր
որ կը լեցնի անդունդն այս խոր
որ կը մաքրէ մարմինն այս մերկ իր դողերէն
որ կը լլկէ վերջին հիւլէն

ներքին խմոր որ կը տաղուի մութ բոցերով
կը հրկիզուի խոհերով շէկ
շիւ շողերով աներեսոյթ

ներքին արեւ որ կը ժայթքէ
հուրն իր խռով
բորբոքելով
կիրքեր մեծդի
տենչեր կիզող
ու անօթի
ներքին ամպրոպ
որ կը յառնէ
կոյր վիհերէն
որ կը շաչէ
ահագնօրէն
որ կը ջնջէ
ցեղերն ամէն
որ կը խառնէ
հետքերն արեան
գծուած հողիդ
թռնէ ի թռռ

ծաւալներն են
որ կը սպառնան

այս
վայրկեանին

օրհասական

որ կը սեղմեն
շղթան վզիդ
քեզ կը հրեն
պատերէն ներս
վերջին բերդիդ
քու հայրական
անցքերէն ներս

անվերջ լռող

Կռքիկոսիդ

տապանն այս հին կը տատանի ու չի հասնիր
իր ավին

ափդ ինծի մօտեցուր
ու ոտքդ դիր հեռուէ հեռու
այս հողին

գտիր հետքերն

արինիդ

Ու վերջապէս

հին քաղաքին տագնապահար բեկորներէն
կանուխ կամ ուշ
պիտի ծնի
լոյսի նոպան
անոնց տարտամ խաժամուժէն
պիտի նորէն ծիածանուի չեղեալ ու բեկ առաւօտը
մարմիններէն իր ազագուն
պիտի պոկուի ձիչն այս մանկան
պիտի նորէն կանգնի խրոխտ մերկութիւնը
այս Մհերին

ծաւալներու կարծր քարին պիտի նորէն

փշրէ գանկն իր վայրաբարոյ
ու ապստամբ

խենթութիւնը

պիտի նորէն գոյներ պոռոտ
յանդգնօրէն

խաչածետուին
սկայորդիք
դուրս գան նորէն
այս կիզանուտ
ջրվէժներէն
դուրս գան ցասկոտ
ու պահանջկոտ
դուրս գան անգութ
ու կորովի

դուրս գան հզօր

շրջեն ուղին

ջարդուփշուր պիտի ընեն
ձեր փայփայած յախճապակին

Եւ վերջապէս
հօրմէ որդի

ու թռնորդի

կանգնած հողին
այս ամրակուռ

շարտելով
պատուանդանէն
ու քարշ տալով
դռնէ ի դուռ

Առաջ Աստուած

պիտի տօնենք
ծաւալներուն
շռնդագին
որոտընդոստ
ու վերջնական

լիահատոյց

պարտութիւնը



Ապրիլ 2010

Ուաշինկթըն

Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀՄԱՅՔԻ՝ ՏՂԱՅ

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԿԵԼԵԱՆԻՆ

Ոչ որ ըսաւ հէգ տղայ արդեօք ինչո՞ւ կը մխայ...

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ



ՊԵՏԻԿ ՀԵՐԿԵԼԵԱՆ
Գործ՝ ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ



«ՏՐՏՈՒՆՔԸ»
Գործ՝ ԲԱՐՍԵՂ ՀԱՊԷՔԵԱՆԻ

Մխացիք դուն անուանակցիդ նման
Ջարաշուք օր մը
Օր մը անոպայ

Բանաստեղծի քղամիդը
Տակաւին նո՛ր հանգչեցուցած
Կեանքի
Մարդու
Հայրենագուրկ մեր գոյութեան
Բազում հոգով ծանրաբեռն
Հայու դալուկ ուսերուդ վրայ...

- Հմայքի՜ տղայ -

* * *

Բարակ մաղուող անձրեւ մը
Անգթօրէն քեզ վերացուց մեր աշխարհէն
- Հմայքի՜ տղայ -

Մինչ ապրումներդ համայնական
Զերթ մանանայ դուն ցօղեցիր
Ողբի
Կոծի
Սեւ սարսափի
Անհրապոյր մեր առօրեան փերուդ մէջ կծիկելէն
Ու հոգւոյդ մէջ տրտմաթախիծ
Նոր երկինքներ արարելէն
Սլացար դուն

- Այնքա՛ն արագ ու խելավազ -

Դառն ժպիտիդ միաձուլած
Ասք ու փառքի առեղծուածն...

* * *

Հմայքի՜ տղայ
- Մուսա լերան ըմբոստներու համա՛կ ոգի-

Դո՛ւրս խոյացար դուն անվհատ
Լիբանանի գեհեճական պատմութեանէն
Դէպի նորոգ հայելացումն արտագնայ
Քու պապերուդ կիրճերէն
մինչեւ Թարթառ եւ Ասկերան
Ու անթափանց մառախուղին մէջ տուայտող
Ստրկամիտ մեր օրերուն
Դուն ներքնականջ լապտերներդ վառեցիր
Արցախեան յորդ մրրիկներու
Սաղմնաւորուող թաւալքին հետ

- Այնքան իրաւ ու բերկրալի՜ -

Որ ամրացար իբրեւ եզերք ու տիեզերք
Այնձարի հայ այգիներու տերեւանման գարունքին մէջ
Ու առկայծող Հայ Պայքարի Բագինին
Լիզպոնի հինգ «խենթ»երուն
Առասպել լը բորբոքեցիր
Մխանքիդ մէջ հեւասպառ...

* * *

Այսօր արդեօք
Սկիւտարն իր «Սոխակ»ին դեռ կը հայի՞

- Հմայքի՜ տղայ -

Իբրեւ քերթողն անանցեալ
Բոլոր օրերու

Ու հայ հոգիներ

Կ'աւաղե՞ն մահը
ամենադժբախտ այն վաղաժամին
Որմէ անուն ու ձակատագիր
Ջարմանալի տենդով մը հասեր են քեզի
Կարծես ըլլային քնքուշ մէկ ապտակն Մե՞ծ Անծանօթին...

- դարերո՞ւն բոլոր -

- Բանի՞ն անսուաղ -

... Մինչ Նազովրեցի մեծ սուրբին պէս
Աւարտած բոլոր տեսակի
Դաշինք
Ուխտ

Խաչելութեան մայրամուտեր

- Նոյնատարի ք հասակի մէջ -

Յարեալ կեանքով նոր ու անմահ
Կը սաւառնիս դուն բարձրերէն մարդերուն

- Հմայքի՞ տղայ -

Վերելներո՞ւն կը հանգչիս..

27 Հոկտեմբեր, 2010



«ՄԻՆՆՔ»
Գործ՝ ՕԳԷՆԱՆԻ

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Le nez de Cléopâtre, S'il eut été plus court, toute la face de la terre aurait change.

PASCAL

Օր մը ըսին, թէ քիթը քու՝
Եթէ քիչ մը ըլլար կարճ,
Ըլլար փոքր ու նրբագեղ,
Ողջ հոլովոյթը պատմութեան՝
Տարբեր ընթացք պիտի առնէր...

Բայց ես կը զգամ, կը հաւատամ,
Թէ քիթը քու եթէ երբեք ըլլար գողտրիկ,
Ոչինչ, ոչինչ պիտի փոխուէր
Ճակատագրէն աշխարհի.
Եւ թէ նոյնիսկ սադրանքներով սպառազէն
Պատահար մը աննշան
Ըլլար որքան ալ մահաբեր,
Պիտի երբեք չկրնար
Լոկ քու քիթիդ պատճառաւ
Դրդապատճառը դառնալ՝
Բախումներու աշխարհաւեր...

Նեղոս գետը պիտի դարձեալ ոռոգէր
Արեւախանձ դաշտերն համակ եգիպտական՝
Լուսակարկաչ նոյն ջուրերով կենարար:
Արմաւենեաց ստուերին տակ զովասուն,
Ուղտապաններն ամրան շոգէն ընդարմացած՝
Պիտի խանդով երգէին
Սրնգահեծ մեղեդիներ հովուական...

Եւ տարփատենչ զօրավարներն Հռովմի,
Կայսերական իրենց շքեղ վեհութեամբ,
Պիտի դարձեալ դարպասէին,
Ծնրադրէին քու առջեւ՝
Խենթ սիրահարի անզուսպ ոգետրութեամբ,
Նոյն տենդերով սիրազեղ,
Նոյն տենդայոյզ ջերմութեամբ...

Պիտի դարձեալ ապրէիր
Շիրմախորհուրդ մտերմութեան մէջ բուրգերու,
Որոնց քարէ շուրթերէն
Կը քաղէիր դուն յաճախ
Երազանքներ անվերծան՝
Սիրոյ մասին ու մահուան:

Մէրը դարձեալ պիտի դառնար
Ուղեցոյցը քու սրտիդ,
Որուն խոհուն թելադրանքին հետեւէիր՝
Հաւատաւոր յանձնառութեամբ...

Բայց քու քիթը, Կղէուպատրա,
Պիտի մնայ քեզի հետ,
Քու էութեան իբրեւ մէկ տարրն անբաժան,
Որ արծուային իր հմայքով
Եւ իր տեսքով առինքնող՝
Յաւերժագեղ կախարդանք մը ընձեռէ քեզ՝
Տարուէ տարի մակընթացող վայելչութեամբ...

4 Հոկտեմբեր 2010

ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ

ՄԵՆԱԿԵԱՅԸ ԵՒ...

Հարթակին վրայ թեթեւ-թեթեւ հպումներէ ու ցնցումներէ ետք օդանաւը կանգ առաւ օդակայանին մէջ: Սամիի քովը նստող տարեց կինը խաչակնքեց: Լայն շունչ մը առաւ: Հանդարտած էր: Հակառակ որ, շատ հեզասահ էջք մը կատարած էր օդաչուն: Ապա կինը ձեռքի պայուսակը բացաւ: Պզտիկ հայելի մը հանեց: Ստուգեց դէմքին շեշտուած չպարը: Կրկին ներկեց, արդէն ներկուած շրթունքները: Ձեռքի թեթեւ հպումներով շտկուտեց ոսկեգոյն ներկուած մազերը: Սակայն չկրցաւ ծածկել դէմքը ակօսող կնճիռները: Տարիները դրոշմած էին իրենց կնիքը: Կարծես կը մերժէր ընդունիլ: Ապրելու ակորժակ ունէր տակաւին: Սակայն Սամիին արգելք կ'ըլլայ դուրս ելլելու: Սամի ջղայնութեան նշաններ ցոյց կու տար: «Օթէս»ը նշմարեց: Ազդարարեց կնոջ, որ աճապարէ: Կինը անուշահոտի սրուակը չկրցաւ գործածել: Ծուռ-ծուռ նայեցաւ «Օթէս»ին, Սամիին:

Օդակայանի մաքսատան ձեւակերպութիւնները երկար տեւեցին: Երեսուն տարուան ընթացքին ոչինչ փոխուած էր: Միայն շէնքը ընդարձակած եւ կահաւորած էին: Միշտ արտաքին երեւոյթի արժէք կու տային: Սամի վերադարձողները չէր սիրեր: Ընկրկումի, պարտութեան լեզի համ մը կու տային իր պարագային: Երեսուն տարի առաջ լաւ յիշատակներով չէր մեկնած: Ձեռով մը ինքզինք աքսորած էր այս քաղաքէն, իր ծննդավայրէն:

Մեկնած էր՝ ցրիւ, առատ սեւ մազերով: Երիտասարդի յատուկ խանդավառութեամբ եւ ակնկալութեամբ: Կը վերադառնար յիսունը անց, պատրանաթափ, սպիտակ, ցանցառ մի քանի թելեր գլխուն վրայ:

Դուրսը զինք սպասող չկար: Ոչ իսկ շուրջը նայեցաւ: Ինքնաշարժ մը կեցուց: Երբ պանդոկին հասցէն տուաւ, վարիչը փոխեց իր կոշտ վարմունքը: Հարցուց ուրկէ կու գար: Որքան պիտի մնար: Յաջորդ օրը եթէ ինքնաշարժի պէտք ունէր: Հետաքրքրուեցաւ, թէ ո՞ր սորված էր արաբերէնը: Երբ Սամի հասկցուց, թէ քաղաքին զաւակն էր, վարիչին շատախօսութիւնը պակսեցաւ:

Սամի կը դիտէր շուրջը: Տակաւին որոշ տեղեր եղբայրասպան կռիւներու հետքեր կը գտնուէին: Կիսաքանդ տուններ, շէնքեր: Սակայն մեծ մասամբ նորոգուած էին: Երկնասլաց շէնքերը բազմացած էին: Պուրճի հրապարակը կորսնցուցած էր Միջին Արեւելքի յատուկ, նախկին երանգաւորումը: Նորակառուց շէնքերով կը նմանէր որեւէ մէկ քաղաքի հրապարակին: Սամի կը նախընտրէր նախկին խայտաբղէտ Պուրճը՝ իր կանանչութիւններու, ձկնավաճառներու, ոսկերիչներու շուկաներով: Աւելի մարդկային էր, կենսունակ: Կեանք մը կ'եռեւեփէր:

Ֆենիսիա պանդոկին մէջ գիշերելը Սամիին երիտասարդութեան երազներէն

մին եղած էր: Սակայն այդ շրջանին իր նիւթական վիճակը չէր ներեր: Նոյնիսկ քաղաքէն չմեկնած, գիշեր մը մասնաւոր եկած էր եւ դիտած այդ գեղեցիկ իջեւանը, որ լոյսերու մէջ կը լողար: Գուցէ տղայական ապուշ քմայք մըն էր, զոր պիտի իրականացնէր:

Ծովահայեաց պատշգամով սենեակ մը տրամադրած էին իրեն: Լոգանքէն ետք չուզեց ճաշարան իջնել: Սպասեակին հեռաձայնեց: Երբ ներկայացաւ, անոր «Հալլում» ճերմակ պանիր ապսպրեց: Պնակ մը «Ֆուլ», աման մը «Լեպ-նի», ձիթապտուղ, գաւաթ մը օղի եւ «սաճ»ի հաց: Սպասեակը շուարած իրեն կը նայէր: Ըսաւ թէ՝ Փրանսական ընտիր, համեղ պանիրներ, գինիներ ունէին եւ թարմ «պակէթ»ներ:

- Երեսուն տարիէ ի վեր Ֆրանսա կ'ապրէի,- ըսաւ Սամի՝ ժպտելով: - Կլկլա-կի մըն ալ խորոժակ ունիմ, բայց չեմ յանդգնիր ապսպրել:

Այս պանդոկին մէջ վարժ չէին կարծես պարզութեան: «Մնուկութիւն»ը միշտ տիրական էր: Սպասեակը ապսպրանքները պատշգամի սեղանիկին վրայ տեղադրելէ ետք՝ մեկնեցաւ: Միշտ շուարած վիճակ մը ունէր:

Գարնանային աստղազարդ գիշեր մըն էր: Ախտանուշ երազանքներու մթնոլորտ մը կը տիրէր: Կարօտներու, մեղադրանքներու, արդարացումներու առիթ կու տար: Օղիին առաջին ումպէն ամբողջ անցեալ մը պատկերացաւ աչքերուն:

-2-

Միշտ ալ սիրած էր ծովը: Ճակատագրական կապ մը կարծես հաստատուած էր իր եւ ծովուն միջեւ: Նոյնիսկ փոքր տարիքին չէր մասնակցեր թաղեցի տղոց խաղերուն: Ճպէյլի մէջ, իրենց տունէն քանի մը քայլ անդին կը գտնուէր ծովափը: Ժամերով կը նստէր աւազին վրայ եւ կը դիտէր ծովը:

Ալիքներուն խաղերը: Անոնց փշրուիլը ժայռերու կողքին: Անաղարտ բնութեան վայրի գեղեցկութիւնը կը բնորոշէր ծովը: Կարելի չէ երեւակայել ջուրին երանգաւորումները, տարուան եղանակներուն համեմատ: Ամպերու խաղերը ու անոնց շուքերուն ցոլացումը ջուրերուն մէջ: Անոնք կը բեկբեկուէին ալիքներուն մէջ, ապա կը վերամիանային: Պատանեկան օրերու ծովը օրօրած էր իր երազները: Իսկ երիտասարդութեան, իրեն մտածել տուած էր, կեանքի այլազան երեւոյթներու մասին:

Ֆրանսացի Յիսուսեան հայրերու համալսարանը յաջող ձեւով աւարտած էր: զնահատած էին իր պատրաստած թեզը: Իբրեւ վարձատրութիւն՝ Սամին որոշած էին Փարիզ ղրկել: Ան թէ՛ իրենց հաստատութեան մէջ պիտի դասաւանդէր եւ թէ՛ ազատ ժամերուն՝ Սորպոնի մէջ իր դոկտորականը պիտի պատրաստէր: Առանց վարանելու Սամի ընդունած էր:

Սամի միշտ ալ Փարիզը անմատչելի երազ մը նկատած էր իրեն համար: Լոյսի այդ քաղաքը: Արուեստի տիտաններու այդ ծննդավայրը: Փիլիսոփայութիւններու օրրանը: Յեղափոխութիւններու, գաղափարականներու հնոցը: Ամբողջ հուլիսներ, տարիներէ ի վեր, անոնց ոգիով թրծուած էր: Միթէ կարելի՞ էր մերժել:

Մինչեւ այդ թուականը յիշատակելիք դէպք մը չէր պատահած իր կեանքին մէջ: Երբ հօրը իմացուցած էր, փոթորիկ մը փրթած էր տան մէջ: Հայրը խստա-

պահանջ մարդ մըն էր: Կ'ուզէին որ իրեն հնազանդէին, ձեռով մը տան բռնատէրն էր:

Միշտ ալ ծիծաղած էր Սամիրին ընտրած մասնագիտութեան վրայ: Երիտասարդական անցողակի քմայք մը նկատած էր: Հայրը փիլիսոփայութիւնը մտքի ապուշ մարզանք մը կը սեպէր: Ուրիշ ոչինչ: Վաճառականութիւնը իրենց գերդաստանին ժառանգական ասպարէզը եղած էր: Տարիներէ ի վեր հօրմէն գաւկին կը փոխանցուէր: Սամի պիտի խախտէր այդ անգիր օրէնքը: Հօրը համար դաւաճանութեան համազօր էր: Սամի չէր ուզած վաճառական ըլլալ: Ամառնային արձակուրդներուն հօրը օգնելու կ'երթար: Զէր հաշտուած ո'չ վաճառականական մտայնութեան, ոչ ալ միջավայրին: Այդտեղ մարդը մարդ խաբէր կը սորվէր: Հետզհետէ հօրը դիտողութիւնները անհանդուրժելի դարձած էին:

- Այս ընթացքով, մարդ չես ըլլար,- կ'ըսէր հայրը: Սամիրին համար մարդ ըլլալը տարբեր նշանակութիւն ունէր: Տարբեր խմոր կ'ենթադրէր: Համալսարանի տնօրէնութեան կողմէ այդ առաջարկը Սամիրին փրկութեան լաստ մը եղած էր: Քսանհինգ տարեկանին, յանդգնութիւնը ունեցած էր իր պատմական ոչը ըսելու՝ պահանջկոտ հօրը: Հայրը չչմած դիտած էր զինքը:

- Ուրեմն... ուրեմն «ապունա» պիտի ըլլաս,- ըսած էր...:

Հօրը դէմքը կարմրած էր: Ամբողջ մարմինը կը դողար: Սամի չէր ուզած պատասխանել: Ինչ հիման վրայ հայրը այդպիսի բան մը կ'եզրակացնէր: Զէր երկարած վէճը: Նայած էր մօրը: Ան՝ հլու-հնազանդ կին մը եղած էր իր ամուսնոյն: Մտահոգ՝ ձեռքերը իրարու կը շփէր խեղճ կինը:

Սամի լռելեայն իր սենեակը անցած էր: Մեկնումի օրը ծնողքը տունէն բացա-կայած էին:

Փարիզի բանուկ փողոցի մը մէկ ծայրամասին մէջ կը գտնուէր Յիսուսեան հայրերու այդ հաստատութիւնը: Ընկուզենի փայտէ, ամրակուռ, մեծղի դուռ մը ունէր: Յարգանք եւ լրջութիւն պարտադրող խուլ աղմուկով մը կը բացուէր ու կը գոցուէր: Ներսը սակայն հակապատկերն էր դուրսի ժխորին: «Միստիք» լռութիւն մը կը տիրէր: Քաղաքէն մեկուսացած երեւոյթ մը կը պարզէր: Հին, սեւցած քարերով, հնամեայ, ընդարձակ կառոյց մըն էր: Շրջապատող բարձր պատերուն մէջ պարփակուած էին նորընծայարանը, դասարանները, մատուռը եւ կրօնաւորներու բնակութեան սենեակները: Մասնաւորապէս տպաւորիչ էր խնամուած, կանաչազարդ, ընդարձակ պարտէզը: Հարիւրամեայ հաստ կոճղերով ծառերը իրենց շուքերը կը տարածէին: Հոգեկան անդորրութիւն փնտռողներու կատարեալ միջավայր մը: Խոկալու, ներքին վերլուծումներու առիթ տուող ապաստանարան մը:

Սամիրին խուցի նմանող սենեակ մը տրամադրած էին: Յաջորդ օրն իսկ, յանձն առած էր պաշտօնը:

Նորընծաներուն փիլիսոփայութիւն պիտի դասաւանդէր: Իսկ ազատ ժամերուն Սորպոն պիտի յաճախէր: Բարեբախտաբար, համալսարանը հեռու չէր վանքէն:

Յաճախ փորձած էր ծնողքին հեռաձայնել: Հազիւ լսէին իր ձայնը՝ կը գոցէին գիծը: Տակաւին քէն կը պահէին: Ապտոյին միջոցաւ տեղեակ կ'ըլլար ծնողքին իրավիճակին: Ապտօ թէ իր համալսարանի դասընկերն էր ու բարեկամը, թէ հօրը փաստաբանը: Վերջին անգամ Ապտոյէն իմացած էր, թէ հայրը թե-

Թեկնեմ կ'ուզէր գործը: Խանութին մէկը ծախած էր արդէն:

- Գործը շարունակող չկայ,- ըսած էր Ապտոյին: Փաստաբանը մօրն ալ այցե-
լած էր:

- Սամիրն համար միշտ կ'աղօթեմ,- ըսած էր մայրը:

- Ամէն Կիրակի եկեղեցի կ'երթամ, մոմ կը վառեմ Մարիամ Աստուածածնայ,
որ ողջ առողջ պահէ Սամիրն:

Ապա Ապտօ աւելցուցած էր, թէ քաղաքին ներքին վիճակը մտահոգիչ էր: Զի-
նարչաւ մը տեղի կ'ունենար: Համայնքները գէշ ձեւով իրարու դէմ լարուած
էին:

Ատելութեան հով մը կը փչէր: Միջնադարեան մտայնութիւն մը կը տիրէր
քաղաքին մէջ:

Սորպոնի դասընթացքները Սամիրն առջեւ անծայրածիր հորիզոններու
դուռ բացած էին: Սամի որոշ ժամանակ մը տատամսումներու շրջան մը ապ-
րած էր: Յստակ չէր գիտեր, թէ ի՞նչ կ'ուզէր, ի՞նչ կը փնտռէր: Մենակեաց
կեանք մը կ'ապրէր՝ ինքն իր մէջ կծկուած: Ինչուններու շարան մը կը խռովէր
զինք: Երբեմն այդպէս կը դիտէր կուսակրօն հայրերը: Աղօթագիրքը իրենց
ձեռքը, ինքնամփոփ: այդպէս կը ձեմէին: մթաստուեր կամարապատ նրբանցք-
ներուն մէջ: Կամ մատրան մէջ, ծնրադիր: վերացած կ'աղօթէին: Արդեօք
գտա՞ծ էին այդ ներքին անդորրը, գոր կը փնտէր Սամի:

Մեծաւոր հօր անունը Ինիաս էր: Գոհ էր իրմէ: Գէթ այդպէս տպաւորուած
էր Սամի: Մեծաւորը շուտով անդրադարձած էր Սամիրի մենակեցութեան հա-
կումին, յարմար թեկնածու մը կը նկատէր իրենց միաբանութեան: Նախ ուղ-
ղակի, ապա անուղղակի ձեւով զգացուցած էր Սամիր: Ինչու մեղքը ծածկէր,
Սամի ալ մտածած էր այդ մասին. սակայն պէտք եղած ոչ հաւատքը ունէր, ոչ
ալ կոչումը:

Առանց վարանելու, Սամի Մեծաւորին յստակօրէն եւ անկեղծօրէն հասկցու-
ցած էր: Փեր Ինիաս երկար չէր հանդուրժած Սամիրն մերժողական կեցուած-
քը: Առանց այլեւայլի գործէն արձակած էր զայն: Լուրջ եղած էր Սամիրն յու-
սախաբութիւնը: Աւելի լայնախոհ ու գիտակից կը կարծէր այդ կրօնաւորը:
Մեկնելու ժամանակ Մեծաւորը հարցուցած էր, թէ ինչո՞ւ վերջերս եկեղեցի չէր
յաճախեր: Սամի չէր կրցած զսպել իր ներքին դառնութիւնը:

- Անհաւատ մը չեմ,- ըսած էր,- եթէ պէտք զգամ Ամենակալին հետ հաղոր-
դակցելու, միջնորդի կարիք չունիմ:

Փեր Ինիաս չչմած իրեն նայած էր: Սամի թաքուն յոյսով մը, Արեւելքէն
Արեւմուտք եկած էր, ոչ թէ արքայութիւն փնտռելու, այլ տանելի միջավայրի
մը մէջ ապրելու: Սակայն քաւարանի մը հանդիպած էր, ուր մարդիկ կարծես
իրենց մեղքերը կը քաւէին:

Որոշ չափով Սամի ընտելացած էր քաղաքին, ապրելակերպին ու մտայնու-
թեան: Որոշ ծանօթութիւններ ալ մշակած էր: Դժուարութիւն չունեցաւ լայիք
հաստատութեան մը մէջ դասախօսի պաշտօն մը գտնելու: Այդ շրջանին Լիբա-
նանի քաղաքացիական, եղբայրասպան կռիւը սկսած էր: Թերթերէ դուրս, եր-
բեմն-երբեմն Ապտոյէն հատուկօր տեղեկութիւններ կը ստանար ծնողքին
մասին: Քարթիէ Լաթէնի մէջ սթիւտիօ մը վարձած էր: Երբեմն, մանաւանդ Կի-
րակի եւ տօնական օրերը, երբ Փրանսացիներուն «Քաֆար» ըսուածը իջնէր

վրան, երբ ամեն ինչ սեւ երեւէր աչքերուն, դիմացի Կասթոնի «Պիսթրո»ն կ'երթար: Մեկուսի սեղան մըն կար՝ մեկուսի մթաստուեր անկիւնի մը մէջ: Ընդհանրապէս դատարկ կ'ըլլար: Կարծես իրեն վերապահուած էր այդ անկիւնը: Այդպէս գինի խմելով, ժամերով կը դիտէր մարդիկը: Երբեմն դէմքերը այնքան արտայայտիչ էին, որ կարելի էր կռահել անոնց ներաշխարհը: Երբ «Պիսթրո»ն կ'ամայանար, Կասթոն կ'ընկերակցէր իրեն: Կը շաղակրատէին: Անոր ընտանիքը Պորտո կ'ապրէր: Ժամանակի ընթացքին անզգալաբար մտերմութիւն մը ստեղծուած էր իրենց միջեւ: Սամի պատմած էր անոր իր տատամսումները, իր յուսահաբուծութիւնը: Կասթոն շատ յաճախ խրատած էր գինը:

- Եթէ «փառք» պիտի չըլլաս, աղջիկ մը գտնելու ես, հետը ապրելու համար..., միայն աղօթքը չէ, գինին ալ կը դիւրացնէ կեանքը,- կ'աւելցնէր Կասթոն՝ բաժակը պարպելով:

Այդ օր, ուշ ժամուն, Սամի գլխու ցաւով վերադարձած էր դասատուներու ժողովէն: Շէնքի մուտքին Մատամ Գաթրին, չէնքին տիրոջը կինը, հեռագիր մը յանձնած էր իրեն: Փաստաբանէն էր: Երկու շաբթուան թուականը կը կրէր: Սամին կ'իմացնէր, թէ հայրն ու մայրը ռմբակոծումի մը ընթացքին սպաննուած էին: Հապճեպով կատարած էր թաղումը կռիւներուն պատճառաւ: Իր ցաւակցութիւնները կը յայտնէր:

Սամի դժուար բարձրացած էր իր սենեակը:

Ինքզինք անկողնին վրայ նետած էր: Մինակութեան զգացումը կարծես աւելի շեշտուած էր իր մէջ: Յստակ չէր գիտեր, թէ քանի՞ տարի է ի վեր չէր տեսած ծնողքը: Հաւանաբար երկար շրջան մը եղած էր: Քաղաքացիական այդ աղտոտ կռիւն ալ իր դերը ունեցած էր: Մեղադրանքներու, զղջումներու ալիք մը ողողած էր իր ներաշխարհը: Փորձած էր Ապտոյին հեռաձայնել: Գիծերը խանգարուած էին: Գուցէ իր կեանքին ամէնէն սեւ գիշերը լուսցուցած էր, այդպէս միտնակ, մութ առաստաղը սեւեռելով: Մինակութեան եւ օտարութեան ապրումներու ստեղծած թնձուկէն ձերբազատելու համար յաջորդ օրն իսկ ֆրանսական հպատակութիւն ստանալու դիմումը բրած էր: Ոչ մէկ բան գինը կը կապէր իր ծննդավայրին:

Մինչ այդ Սամի ստացած էր իր դոկտորականը:

Համալսարանը հրատարակած էր իր թեզը փոքր տպաքանակով, գրքոյկի ձեւով, աշակերտներու համար: «Հաւատքը՝ փիլիսոփայութեան մէջ» խորագրով: Փոյթը չէր եթէ Փեր Ինիաս դժգոհ ըլլար:

Թեր ու դէմ կարծիքներու, սուր վէճերու առիթ տուած էր: Լսարանին մէջ հանդիպում մը կազմակերպած էին: Այդտեղ Մակալին իր ուշադրութիւնը գրաւած էր: Պատմագիտութիւն կը դասաւանդէր: Բուռն ձեւով իր տեսակէտներուն հակառակած էր: Աւարտին ճաշի հրաւիրած էր: Հետաքրքրական աղջկայ մը տպաւորութիւնը ձգած էր իր վրայ: Միեւնոյն ժամանակ գրաւիչ էր: Սլացիկ, ծիծղուն մարմին մը ունէր: Մակալին մօտ մերժողական կեցուածք մը չէր նկատած իր մօտիկութեան: Ընդհակառակը, քաջալերանք մը նշմարած էր: Երկար չէին տնտնացած: Երեխաներ չէին: Սկսած էին կենակցիլ Սամիի սթիլտիոյին մէջ: Կասթոնին քով կը ճաշէին: Ան յաճախ կը կատակէր Մակալին հետ:

- «Փառք» պիտի ըլլար, թոյլ չտուի,- կ'ըսէր:

- Երբեք այդ խմորը իր մէջ չեմ նկատած,- կ'առարկէր Մակալի,- ընդհակա-

ռակը...

Երեքը մէկ կուշտ ու կուռ կը խնդային: Սամիրին համար կարծես կեանքը իր հունին մէջ մտած էր: Ֆրանսական հպատակութիւնն ալ ստացած էր: Չէր զանազաններ իսկական ֆրանսացիէ մը: Չէր գիտեր որքան տեւած էր իրենց կենակցութիւնը: Նոյնիսկ Սամիր կը մտածէր յարաբերութիւնը պաշտօնականացնել ամուսնութեամբ:

Այդ օր Սամիր տրամադրութիւնը տեղն էր: Պետական քննութեան արդիւնքները յայտարարած էին: Իր աշակերտները փայլուն միջիններով յաջողած էին: Սթիւտիօ վերադարձած էր Մակալիին հաղորդելու համար: Մակալին գտած էր անկողնին մէջ, իր աշակերտներէն մէկուն հետ: Կը ճանչնար այդ գեղադէմ տղան: Նոյնիսկ գիտէր անունը: Վիքթոր էր: Մակալիին գաւակը կրնար ըլլալ: Մի քանի անգամ հանդիպած էր անոնց համալսարանի «Քանթին»ին մէջ: Միշտ ալ խորհած էր, թէ ուսուցչուհիի եւ աշակերտի պարզ տեսակցութիւն մըն էր: Նման անհաւատարմութիւն մը երբեք չէր ակնկալեր Մակալիէն: Անոնք նկատած էին Սամիր ներկայութիւնը: Փորձած էին ծածկուիլ: Իրենց արարքէն աւելի, կարծես իրենց մերկութենէն կ'ամչնային: Սամիր լռելեայն հեռացած էր:

Ժամերով թափառած էր Փարիզի մութ փողոցներուն մէջ: Նստարանի մը վրայ դիտած էր Սէն գետի սեւ ջուրերը: Անզգալաբար թաւալած էին տարիները:

Անծանօթ «Պիսթրո»յի մը մէջ յստակ չէր գիտեր, թէ քանի՞ գաւաթ խմած էր: Կասթոնին քով հասած էր գրեթէ հարբած: Կասթոն առանց շաքարի սուրճ պատրաստած էր: Ապա ըսած էր, թէ Մակալին զինքը կը փնտռէր: Մոնփելիէ կ'երթար ծնողքին մօտ: Ամառնային արձակուրդի մէջ կը գտնուէին: Կասթոն հետաքրքրուեցաւ, թէ ի՞նչ պատահած էր իրենց:

- Ոչինչ..., - ըսած էր Սամիր, - պարզ յոստիսաբութիւն մը, ուրիշ ոչինչ...:

Կամաց-կամաց, մտածկոտ բարձրացած էր տան աստիճանները: Խմիչքին պատճառած թմրութիւնը փարատած էր: Մակալիին նամակը նշմարած էր սեղանին վրայ: Չէր կարդացած: Պատուած եւ նետած էր: Մակալի արդարանալու պէտք չունէր: Ազատ էր իր ապրելակերպը տնօրինելու: Սամիր մասնաւոր ձեւով չէր տառապած: Ռոմէոյի եւ Ժիւլիէթի սէրը տարբեր ըլլալու էր: Առանց ամուսնանալու ամուսնալուծուած էին: Ճիշդ այդպէս, առանց աղմուկի:

Վերամուտին, Մակալի, սովորականին պէս, գործի վերադարձած էր: Ձեռքը թօթուած էր Սամիրին հետ ու համբուրուած, ինչպէս սովորութիւն էր: Սամիր արեւելքի մտայնութիւնը դժուար հանդուրժած էր այդ վարմունքը: Եթէ ձպէյի մէջ պատահած ըլլար նման դէպք մը, հաւանաբար արիւն կը հոսէր:

Չմեռնային գիշեր մը Սամիր սթիւտիօ կը վերադառնար: Շէնքի մուտքին, մայթի վրայ պարմանուհիի մը հանդիպած էր: Աղաչական ձեւով իրեն կը նայէր: Կարծես օգնութիւն կ'աղերսէր: Շրթներուն վրայ, չորցած արեան հետքեր ունէր: Չգալի էր: Ծեծած էին: Մայթերուն վրայ աշխատող պոռնիկ մը ըլլալու էր: Չես գիտեր ինչո՞ւ Սամիր հետը սթիւտիօ հանած էր:

- Կ'ուզե՞ս ճաշել, - հարցուցած էր Սամիր:

- Ո՛չ, - ըսած էր: - Քուն... քուն ունիմ...:

Փորձած էր մերկանալ: Սամիր թոյլ չէր տուած: Ապա աղջիկը աւելցուցած էր,

Թէ այդ գիշերը աշխատիլ չէր ուզած: Ինքզինք անհանգիստ կը զգար: Հանրատան տղոցմէ մին ծեծած էր գինք: Ապա մայթին վրայ հրած էր: Աղջիկը ամէն վտանգ աչք առնելով խոյս տուած էր: Դժուար չէր երեւակայել անոր ապրած ողբերգութիւնը: Այդպէս կիսամերկ, այդ ցուրտ օդին: Մանաւանդ այդ տարիքին: Տիւանին վրայ երկնցած էր եւ վայրկենական քնացած: Սամի ծածկած էր՝ ցուրտէն փշաքաղուած անոր մարմինը: Կիրակի գիշերները Սամի միշտ այսպէս քուն չէր ունենար: Անորոշ թուրութիւն մը, յուսալքում մը կը համակէր գինք: Արդէն պատանեկան օրերէն ի վեր Սամի Կիրակի օրերը չէր սիրեր: Անվերջանալի կը թուէին: Մարդիկ աւելի կը ձանձրանային, աւելի կը յօրանջէին:

Սամի Լիլին կը դիտէր: Աղջկան անունն էր: Կտրուկ-կտրուկ կը հագար: Երբեմն-երբեմն կը ցնցուէր: Քունին մէջ իսկ մղձաւանջ կ'ապրէր: Մարդկային կատարեալ խլեակ մը: Եւ ըսել, թէ մարդկային ջերմութիւն փնտռելու եկած էր: Ամէն տեղ կեանքը նոյնն էր, ոչ աւելի, ոչ պակաս: Հրամցուածը լեղի պատառ մըն էր: Սակայն հարկ էր ճաշակել, այսպէս կամ այդպէս:

Յաջորդ առտու Սամի նախաճաշը կը պատրաստէր, երբ Լիլի արթնցած էր: Շուարած շուրջը նայած էր: Զեռքերը պտտցուցած էր հագուստին վրայ: Կը զարմանար, թէ մերկ չէր: Շուարած Սամիին նայած էր: Պատրաստուած էր մերկանալու, Սամի կրկին թոյլ չէր տուած:

- Ինչո՞ւ ... «Փափքէ» ես,- հարցուցած էր Լիլի:

- Ո՛չ,- ըսած էր Սամի խնդալով,- ուսուցիչ եմ:

- Ի՞նչ կը սորվեցնես:

- Փիլիսոփայութիւն:

Լիլի աչքերի պուտած էր: Կարծես բան մը յիշել կը փորձէր:

- Եթէ ըսեմ, Աստուած չկայ... ինչո՞ւ աշխարհ եկած եմ... կեանքը ապուշ բան է... մարդիկը չար են... փիլիսոփայութիւն ըրած կ'ըլլամ:

Սամի ժպիտ մը ունեցած էր:

- Եկուր... նախաճաշը պատրաստ է,- ըսած էր Սամի: Եթէ կ'ուզես հոս մնալ՝ ազատ զգայ, ապա թէ ոչ՝ վարը Մատամ Գաթրինին յանձնէ բանալին:

Լիլի աչքերը մեծ-մեծ բացած էր:

- Ինծի բանալի՞ կը վստահիս,- ըսած էր խեղդուկ ձայնով: Ապա կախած էր գլուխը: - Մարդիկ չար... չար են... դուն ինչո՞ւ այսքան բարի ես... այսքան լաւ...:

Աղջնակի մը երեւոյթը ունէր: Զծաղկած՝ չորցած կոկոնի մը կը նմանէր: Այդ օր քաղաքը արձակուրդի մէջ էր: Ամենայն Սրբոց տօնն էր: Այս քաղաքին մէջ տակաւին սուրբերու կը հաւատային, սակայն չէին հետեւեր անոնց օրինակին:

Վերադարձին Մատամ Գաթրին Սամիին բանալին յանձնած էր: Լիլի սթիլտիոն մաքրած էր: Տախտակամածը սրբած էր: Ամէն ինչ տեղաւորած էր: Նոյնիսկ գաւաթի մը մէջ կարմիր վարդերու փունջ մը նշմարած էր: Սամի միշտ անտարբեր էր ծաղիկներու նկատմամբ: Չէր գիտեր ինչո՞ւ խնամած էր այդ վարդերը: Փոխած էր ջուրը: Կարելի եղածին չափ երկարած էր անոնց կեանքը: Անօգուտ: Կեանքը խստապահանջ էր: Ունէր իր անգիր օրէնքները: Այն ինչ որ ծաղկէր, դատապարտուած էր չորնալու, ապա՝ փոշիանալու:

Մի քանի շաբաթ Լիլի չէր տեսնուած: Մերթ կը հանդիպէր՝ լաւ տրամադրուած: Կը ճաշէր: Կ'երգէր: Թռչունի նման կը ճռուողէր: Որոշ կենդանութիւն մը

կը ստեղծէր սթիլստիլոյին մէջ: Երբեմն ալ վատ վիճակի մէջ կ'ըլլար: Հագիւ կը բարեւէր: Ինքզինք տիւանին վրայ կը նետէր: Ժամերով կը քնանար:

Գիշեր մը ընկճուած վիճակ մը ունէր:

- Ի՞նչ ունիս,- հարցուցած էր Սամի:

- «Քաճար»...: - Ինծի փիլիսոփայութիւն սորվեցուր, գուցէ կեանքս աւելի տանելի կ'ըլլայ:

- Կամ ալ աւելի դժուար,- եզրակացուցած էր Սամի:

Ամիսներ տեւած էր այս կացութիւնը: Լիլիին հատ ու կտոր խօսակցութիւններէն, որոշ հափով տեղեկացած էր անոր կեանքին ելեւէջներուն: Գիւղէն եկած անփորձ աղջկան մը սովորական պատմութիւնն էր: Վերջին այցելութեան արտակարգ վիճակ մը ունէր: Չափազանցած էր չպարը:

- Շատ-շատ անօթի եմ,- ըսած էր:

Ճաշած էր: Առաջին անգամ ըլլալով գաւաթ մը գինի խմած էր: Սիկարէթ մըն ալ վառած էր: Երկար դիտած էր դիմացի պատին վրայ կախուած խաչափայտը: Ապա ընդոստ ոտքի ելած էր: Սամին փաթթուած էր եւ համբուրած: Աչքերը թրջուած էին:

- Մարդիկը չար... չար են... Աստուած չկայ... չկայ...,- կակազած էր եւ լացակումած, հապճեպով մեկնած էր:

Մի քանի օր վերջ անոր մարմինը գտած էին Սէն գետի սեւ ջուրերուն մէջ:

Սամին համար կեանքը կը շարունակուէր: Օրերը, ամիսները կը թաւալէին տափակ, միօրինակ կշռոյթով: Անցողակի սիրային արկածախնդրութիւններ կ'ունենար կիներու, աղջիկներու հետ, որոնց անունը անգամ յաջորդ օրը չէր յիշէր:

Երբ հանգստեան կոչուած էր, Ֆրանսայի գանազան շրջաններու մէջ շրջապատոյտ մը կատարած էր: Նորմանտին սիրած էր: Իր ծննդավայրը կը յիշեցնէր: Տուներու կղմինտրածածկ երդիքները կանաչութիւններու մէջ կորսուած էին: Մերթ տարտամ կարօտ մը կ'ունենար իր ծննդավայրին նկատմամբ: Հարազատութեան պակաս մը կը զգար: Օտարութիւնը կարծես այլեւս կը կշռէր ուսերուն: Կը փնտռէր կապոյտ երկինքը: Յորդառատ արեւը, մանաւանդ ու մանաւանդ իր ծովը... աննման ծովը...: Արդեօք Ապու Սէլիմը ո՞ղջ էր: Անոր կրպակը կանգո՞ւն էր: Անոր մօտ, մօրմէն գաղտնի, պաղպաղակ կ'ուտէր: Անգուսպ փափաք մը կ'ունենար երբեմն, այդպէս, ոտաբոպիկ, ոսկեգոյն աւազին վրայ քայլելու: Զգալու այդ ջերմութիւնը, որ ամբողջ մարմնիդ մէջ կը տարածուէր: Կը փնտռէր ձկնորսներուն անտաշ եւ անկեղծ բարեկամութիւնը: Հայրը կը մտահոգուէր որ ձկնորս ըլլայ հօրը պէս: Յաճախ մեծ հօր հետ ձկնորսութեան կ'երթար: Ան իրեն կ'ըսէր, թէ պէտք չունէր համալսարան երթալու, փիլիսոփայ դառնալու համար:

- Դիտէ ծովը,- կ'աւելցնէր, ձեռքը երկարելով դէպի ծովուն անսահմանութիւնը... Դէպի մշուշներուն մէջ կորսուած անծանօթ հորիզոնները:

- Դիտէ... քեզի մտածել կու տան կեանքի մասին... փիլիսոփայ կը դարձնեն...:

Թէ հայրը, թէ մեծ հայրը յուսախաբ մեկնած էին աշխարհէն:

Երկար նամակ մը ստացած էր փաստաբանէն: Սամի բոլորովին մոռցած էր այդ հարցը: Ճպէյլի, ծնողքին տունը եւ քովի հողաշերտը իրեն ժառանգ մնա-

ցած էին: Ինչպէս նաեւ որոշ գումար մը դրամատան մէջ: Ապտօ իր ներկայութեամբ անհրաժեշտ կը նկատէր՝ որոշում մը տալու համար: Ապա կը տեղեկացնէր, թէ կռիւը մի քանի տարիէ ի վեր դադարած էր: Քաղաքը վերստին սկսած էր շնչել: Կրնար ժամանել: Ոչ մէկ պատճառ այլեւս Սամին կը կապէր Ֆրանսայի: Կասթրոնին հետ բաժանումը յուզիչ եղած էր:

- Գիտեմ ինչ ըսել է տան կարօտը,- աւելցուցած էր Կասթրոն խուպոտ շեշտով մը:

Սամի ուզած էր Լիլիի դամբանը այցելել: Քաղաքապետարանին մօտ հետաքրքրուած էր: Սակայն անոր մարմինը հաւաքական փոսի մը մէջ նետած էին: Մարդկութիւնը երբեմն իրապէս սրտխառնուք կը պատճառէր: Լիլիին բերած այդ կարմիր վարդերը մարդկային միակ վերաբերումը եղած էին իրեն նկատմամբ:

-3-

Վեց ամիսէ ի վեր Սամի ձայնը իրենց տան մէջ կը բնակէր: Ապտոյին միջոցաւ ծախած էր հողաշերտը: Միայնակն իրենց տունը լքուած վիճակ մը ունէր: Մօտաւորապէս տարի մը տեւած էր նորոգութիւնը: Յարկաբաժին մը վարձած էր՝ հսկելու համար գործաւորներն ու աշխատանքը: Բնակիչներուն ապրելակերպին մէջ մեծ բան չէր փոխուած: Տակաւին ամէն թաղումի օդը կը կրակէին: Ամէն մեռնող հերոս կը նկատուէր: Հարսանիքի պարագային ալ նոյնն էր պատմութիւնը: Խառնուածքի հարց ըլլալու էր: Յագեցած չէին կարծես կռիւներու պայթումներէն: Կը սիրէին աղմուկը եւ աղմկելը: Իսկ Կիրակիները պաշտօնական իրենց զգեստը կը կրէին: Իրենց մէկ շաբթուան մօրութեամբ, դէմքի մորթը քերթելու աստիճան կ'ածիլէին եւ եկեղեցի կը յաճախէին:

Սամին առաջին քայլը եղած էր ցանկապատով անջատել պարտէզը: Դրացիները թէպէտ չէին գանգատած, սակայն դժգոհ կը թուէին: Տարիներու ընթացքին, իրենց երեխաներուն խաղաղալը դարձած էր: Ընդարձակ սենեակ մը տրամադրած էր գրադարանի եւ գրասենեակի: Այդ սենեակը իր նախասիրած վայրն էր: Ձեռով մը իր ապաստանարանը: Շուն մըն ալ գնած էր: Ճամպօ էր անունը: Դաստիարակուած շուն մըն էր: Շան հետ հաղորդակցելու համար Սամին ալ որոշ բացատրութիւններ եւ ցուցմունքներ տուած էին: Շուտով մտերմացած էր Ճամպոյին հետ: Կը հասկնային զիրար: Կը հնազանդէր իրեն: Ապու Սելիմ ողջ էր: Հակառակ յառաջացած տարիքին, ան կայտառ էր տակաւին: Պահած էր նաւահանգիստի նմանող այդ պզտիկ անկիւնը: Կրպակը ընդարձակած էր: Սամի նաւակ մըն ալ գնած էր: Ձկնորսներուն նաւակներու շարքին խարսխած էր: Ապու Սելիմին մօտ:

Ձայնը անցեալին փիւնիկեցիներուն նշանաւոր նաւահանգիստը եղած էր: Մինչեւ այսօր տեղացիները տարբեր հակում մը ունէին ծովուն նկատմամբ: Զբօսաշրջիկներու տեսարժան վայրը դարձած էր իր անցեալի հռոմէական կիսաքանդ դղեակներով ու սիւններով:

Սամի հին օրերու նման կը սիրէր դեղերի քարերով սալաշատակուած կամարապատ նեղ ճամբաներուն մէջ: Կը դիտէր անցեալը յիշեցնող, յիշատակներ ծախող միաստուեր կրպակները: Երեւակայութիւնը սահման չունէր ցուցադրը-

լած գործերուն մէջ: Շատեր ուղղակի արուեստի սահմանը կը հասնէին: Անցեալն ու ներկան ներդաշնակուած էին Ճպէյլի մէջ:

Այդ առտու Սամի Ճամպոյին հաջողութիւնն արթնցաւ: Կրկին դրացիին կատուն ըլլալու էր պատճառը: Այդ սեւ կատուն առիթը չէր փախցնէր Ճամպոյն ջղայնացնելու: Պարտիզական հանդարտեցուց Ճամպոյն: Ապու էլիասը շաբաթը երկու անգամ կու գար պարտէզը խնամելու: Սամի երբ դուրս ելաւ, պարտիզական մեկնելու վրայ էր: Ըսաւ, թէ սալորենին այլեւս լաւ վիճակի մէջ կը գտնուէր: Իրապէս ալ ծառը ծլարձակելու վրայ էր: Ճամպո Սամիին շուրջը կը դառնար: Ոտքերուն կը քսուտուէր: Մինչեւ որ Սամի չչոյէր անոր վզին տակ կախուած մորթը, չէր հեռանար: Միրիամը ներս մտաւ շուկայի մեծ պայուսակը ձեռքին: Գնումներ կատարած էր: Միջին տարիքով, այրի, պարկեշտ կին մըն էր:

- Ինչպէ՞ս է Միշոն,- հարցուց Սամի:
- Աւելի լաւ է... տաքութիւն չունի այլեւս:

Միշոն այդ կնոջ տասներկու տարեկան մանչուկն էր: Մօրը աչքին լոյսը:

Միրիամ ամէն առտու կու գար տան մաքրութիւնը կը կատարէր, ճաշը կը պատրաստէր ու յետմիջօրէին կը մեկնէր:

Ճամպո վիզը երկարեց: Սամի կաշեկապը անցուց: Առտուան իրենց սովորական պտոյտի ժամն էր: Ճամպո սիրուած էր թաղեցիներէն: Մանաւանդ երեխաներէն: Երբեմն Սամի ազատ կը ձգէր Ճամպոյն, որպէսզի անոնց հետ վազվզէր, գոլարձանար: Վերադարձին Սամի իր գրասենեակը կ'առանձնանար, կը կարդար, կամ ալ թուղթեր կը մրոտէր: Ճամպոյն ոտքերուն քով կամ կը մրափէր, կամ ալ այդպէս բարի-բարի իրեն կը նայէր: Կարծես ըսել կ'ուզէր, թէ ինչո՞ւ այսքան կը մտածէր ու կը մտածէր...:

Սամիին տրամադրութիւնը երբ վատ ըլլար, առտու կամ գիշեր, նաւակը կ'առնէր: Անգուսպ տենդէ մը մղուած, յափշտակուած անծանօթ հորիզոններու կանչէն, կը թիավարէր ծովուն բացերը: Ուժասպառ կը վերադառնար եւ քուրջի մը նման անկողին կ'իյնար:

Հաճելի ամառնային յետմիջօրէ մըն էր: Սամի պարտէզ նստած կը մրափէր խոտերուն մէջ: Միրիամին տղեկը, Միշոն, ներս մտաւ: Ճամպոյին խաղընկերն էր: Շունը տեղէն ցատկեց: Պոչը շարժելով Միշոն դիմաւորեց: Տղեկը գրկեց շունը: Շաբաթէ մը ի վեր չէին տեսնուած: Ապա սկսան ցատկուտել, վազվզել կարմիր գնդակին ետեւէն: Սամի ներս անցաւ, իր գրասենեակը:

Մթնելու վրայ էր: Միշո հեռասպառ ներս մտաւ, Ճամպոյն ալ ետեւէն: Շունը կարծես խաղը շարունակել կ'ուզէր: Սակայն տղեկը յոգնած կ'երեւէր: Միշո վայրկեան մը դիտեց գրասեղանի վրայ գտնուող թուղթերը:

- Ի՞նչ կը գրես,- հարցուց Միշո:

- Երբ մեծնաս, եւ եթէ տպուի, կը կարդաս: Կեանքի մէջ ամէն բան հաճելի չէ, տխուր բաներ ալ կան:

- Գիտեմ,- ըսաւ Միշո գլուխը կախ:

Անոր հայրը գիշեր մը ձկնորսութեան գացած էր եւ չէր վերադարձած:

Այդ տղեկը կարծես Սամիին որդեգիր գաւակը եղած ըլլար: Միշո կը հետաքրքրուէր անոր դասերով: Ուշիմ մանչուկ մըն էր: Դպրոցին մէջ ալ յառաջադէմ, ինչպէս կ'ըլլան նեղութեան մէջ աճող տղաքը: Այդ տարիքին անոր ուղ-

դած հարցումները ցոյց կու տային անոր հասունութիւնը:

Սամի անոր դպրոցական թոշակը ապահոված էր, բարերարի մը պիտակին տակ:

- Երբ մեծնաս, ի՞նչ կ'ուզես ըլլալ,- հարցուց Սամի:

- Չեմ ուզեր հօրս նման ձկնորս ըլլալ: Հայրը յիշեց: Մատներովը սրբեց այտին վրայ փայլող արցունքները:

- Չըսիր ի՞նչ կ'ուզես ըլլալ...

- Բժիշկ:

- Ինչո՞ւ,- հարց տուաւ Սամի:

- Մեր դրացին, Ապու Մրատը հիւանդ է... ցաւեր ունի... դրամ չունի որ բժիշկի երթայ... մեղք է... բայց մայրս կ'ըսէ, թէ բժիշկ ըլլալու համար շատ դրամ պէտք է:

Սամի տղուն մագերը խառնշտկեց: Տխրանուշ ժպիտ մը ունեցաւ:

- Նայէ, Միշօ, դուն դասերդ սորվէ, լաւ նիշեր բեր, գուցէ բարերար մը գտնուի:

- Ներկայիս արդէն բարերար մը դպրոցական թոշակս ապահոված է... բարի մարդ մը ըլլալու է... պիտի ուզէի շնորհակալութիւն յայտնել... բայց չեմ ճանչնար:

Վայրկեան մը տղեկը տատամսում մը ունեցաւ: Վարի չըթուենքները կը խածնէր:

- Թաղեցիները քեզ ինչո՞ւ մենակեաց կը կոչեն,- հարցուց Միշօ մէկ շունչով:

Սամի անակնկալի չեկաւ: Ժպտեցաւ: Նոյնիսկ Միշօ իր այդ հետաքրքիր բնաւորութեամբ ուշացած էր այդ հարցումը ուղղելու:

- Ես մինակ չեմ,- վրայ բերաւ Սամի,- դուն կաս... Ճամպուն կայ... ծովը... կը տեսնես մինակ չեմ...:

- Նաւակը մոռցար,- աւելցուց տղեկը ժպտելով:

Ապա Միշօ գրկեց Ճամպուն: Բաներ մը փսփսաց անոր ականջին: Շոյեց անոր գլուխը ու մեկնեցաւ: Մութը իջած էր:

Մենակեաց,- մռմռաց Սամի ինքնիրեն:

- Սիկարէթ մը վառեց: Թոքը ծուխով լեցուց: Դիտեց մրոտած թուղթերը: Արդեօք լուծո՞ւմ մըն էին անոնք: Վերջերս յաճախ այս մասին կը մտածէր: Զգաց որ կրկին «Քաֆար» ունէր: Այդ ճնշիչ նեղութիւնը: Ոչ մէկ բան արժէք կ'ունենար աչքերուդ: Յաճախակի դարձած էր այս հոգեվիճակը: Արդեօք ձախողած կեանքի տարակուսա՞նքն էր պատճառը:

Չուզեց տուն մնալ: Ծովափ գնաց ճաշելու: Ապու Սելիմին կրպակը միեւնոյն ժամանակ ձկնորսներուն իբրեւ ճաշարան կը գործածուէր: Ծերունիին սուր աչքերէն չվրիպեցաւ Սամիին մտազբաղ վիճակը: Սամիին սովորական մէկ գաւաթ օղին շուտով երեք, չորս գաւաթի վերածուեցաւ: Ապու Սելիմին համար Սամի միշտ կը մնար այդ համակրելի վառվռուն լակոտը, որ կրպակին անկիւնը պահոււրտած, մօրմէն գաղտնի պաղպաղակ կ'ուտէր: Սամիին դիմացը նստեցաւ: Առանց այլեւայլի հարցուց, թէ ինչո՞ւ կեանքի ընկեր մը չէր առներ: Շնորհքով աղջիկներ չէին պակսեր շուրջը:

- Գեղեցիկ տուն ունիս, նիւթական վիճակդ կը ներէ,- աւելցուց Ապու Սելիմ,- ո՞վ տէր պիտի ըլլայ այս բոլորին:

Ապուլ Սելիմին ոտքերը միշտ գետին եղած էին: Սամի նայեցաւ անոր կնճռոտած դէմքին: Այդ օր անոր պէսը դէպի վեր ոլորուեց էր:

- Տարիքս այլեւս չի ներեր,- ըսաւ Սամի:- Կեանքիս մէջ ես իմ բաժինս առած եմ կիներէն:

Ապուլ Սելիմ աջ ու ձախ օրօրեց գլուխը: Համաձայն չէր: Ապա վերցուց օղիին շիշը:

- Այս գիշեր բաւական խմեցիր, կը բաւէ,- ըսաւ:

- Սամի յուզուեցաւ Ապուլ Սելիմին այդ հոգածութենէն: Մարմրող աչքերով հետեւեցաւ անոր տատամսոտ, յոգնած քայլերուն: Այդպէս պարզ եւ անտաշ, տանելի ըլլալու էր կեանք ըսուածը:

Շաբաթ մը ամբողջ Սամի ոչ կըրցաւ գրել, ոչ ալ կարդալ: Մտազբաղ վիճակ մը ունէր: Նոյնիսկ օր մը մոռցաւ Ճամպոյին ճաշ տալ: Սակայն շունը քէն չպահեց: Միշտ շարունակեց այդպէս բարի-բարի իրեն նայիլ:

Այդ առտու Սամի Ապտոյին գրասենեակը կը գտնուէր: Եկած էր իր կատարած կտակներուն պետականօրէն վաւերացուած, Ապտոյին պատրաստած թուղթերը ստորագրելու: Միշտին կրթաթոշակը կ'ապահովէր մինչեւ համալսարանի ավարտը: Եթէ շարունակել ուզէր՝ մինչեւ մասնագիտութիւն: Հրատարակչատան հետ՝ իր վէպին հրատարակութիւնը: Ձրի պիտի բաժնուէր յարմար անձերու եւ հաստատութիւններու, իր կամ Ապտոյին հսկողութեան տակ: Իսկ տունը դժուար որոշեց: Վերջապէս յարմար տեսաւ կտակել որբանոցին, որ ձեռնային աշխատանք կը սորվեցնէր որբ մանուկներուն եւ հետագային անոնց գործ կ'ապահովէր:

- Ճամպոյին հարցը առկախ մնաց,- ըսաւ Ապտօ կատակելով:

- Ան իմ կեանքիս միակ միւլթարութիւնն է իր հաւատարմութեամբ ... թող ազատ ըլլայ...:

Ապա Ապտօ հետաքրքրուեցաւ, թէ ինչ էր վէպին նիւթը:

- Քսանամեայ բարի աղջիկ մը, որ Աստուած կը փնտռէր չար մարդոց... չար աշխարհի մէջ:

- Եւ չի գտներ,- եզրակացուց Ապտօ:

Փաստաբանը կուհած էր արդէն: Լաւ կը ճանչնար իր բարեկամը:

- Ինչո՞ւ պարզ ձեռով չես առներ կեանքը ինչպէս որ է...:

- Չեմ գիտեր,- ըսաւ Սամի,- գուցէ խառնուածքի հարց է: Երբեմն ես ալ այս հարցումը կ'ողողեմ ինծի:

Երբ դուրս ելաւ գրասենեակէն, ներքին անդորրութիւն մը Սամին համակած էր: Քիչ անգամ զգացած էր այդպիսի գոհունակութիւն մը: Դիտեց փողոցին մէջ աճապարող մարդիկը: Ժամանակին ծիծաղելի կը գտնէր այդ վազքը: Ներկայիս թէեւ մասամբ կ'ըմբռնէր, սակայն իրեն համար միշտ հարցական կը մնար այդ վազքին վերջնական հանգրուանը:

Յետմիջօրէին տուն հասաւ: Ճամպօ ծառին տակ կը մրափէր: Աչքերը հագիւ թարթեց: Միայն այդքան: Տրամադրութիւնը տեղը չէր: Սկսած էր տիրոջը նմանիլ:

Սամի գրասենեակ մտաւ: Վերջացնելու վրայ էր այլեւս այդ վէպը: Վերջին գլուխը հասած էր: Օրերէ ի վեր արդէն բաւերը մտքին մէջ դասաւորած էր:

Վերջիչեց Լիլին: Մայթին վրայ, այդպէս մինակ, անձրեւին տակ, ցուրտ

օգին: Արեան հետքերը չըթնեցողն ծայրը: Խեղճ աղջիկը այդ վիճակին մէջ իսկ կը փորձէր մերկանալ: Այդ տեսարանը կարծես Սամին կը հալածէր: Ինչպէս յանդգնած էին այդ բարի աղջնակը խոշտանգել: Վերջիչեց վերջին այցելութիւնը: Աստուած չկայ կակազելով, արցունքները սրբելով մեկնած էր: Այդ օր արտակարգօրէն չպարուած էր: Գեղեցկացած ուզած էր հրաժեշտ տալ կեանքին: Սամի չէր կրնար մոռնալ այդ կարմիր վարդերը: Անփորձ աղջկան մը անմեղութիւնը կը խորհրդանշէին: Մարդիկ չէին վարանած օգտագործելու եւ փողոց նետելու գինք:

Սամի վերցուց գրիչը: Առտուան առաջին շողերուն դադրեցաւ գրելէ եւ վերջակէտը դրաւ: Դատարկուած վիճակ մը ունէր: Ծաղիկ սիրող այդ աղջնակին կեանքը մարդկային անտարբեր չարութեան մէջ կը վերջանար:

Կիսամութին մէջ վայրկեան մը դիտեց մրոտած թուղթերը: Դէմքը չփեց: Կոպերը ծանրացած էին: Ննջասենեակ իսկ չանցաւ: Ինքզինք տիւանին վրայ նետեց: Նոյնիսկ մոռցաւ քնաբեր դեղահատը կլլել:

Աշնան տիտուր գիշեր մըն էր: Վէպին սրբագրութեան վերջաբանին հասած էր: Կը մտածէր բարեփոխել վերջին էջերուն մէջ կեանքին նկատմամբ արտայայտուած դառնութիւնը: Զեւով մը մեղմացնել մարդկային այդ չարութիւնը: Կարելի՞ էր արդեօք: Օրերէ ի վեր կը տատամսէր: Դաւաճանը պիտի չըլլա՞ր Լիլիի յիշատակին: Եթէ հասարակ պոռնիկ մը եղած ըլլար, վերջին այդ քայլը առած պիտի չըլլար: Իսկ Սամի եթէ սովորական մարդոց նման սովորական կեանք մը ապրած ըլլար, գուցէ նկատած պիտի չըլլար Լիլիին ողբերգութիւնը: Սամի միշտ ալ ուզած էր բնական կեանք մը ապրիլ, իր ըմբռնած ձեւով: Անկեղծ եղած էր, ինքն իր նկատմամբ: Սակայն ինչ յանցանք ունէր, եթէ կեանքը գինք նետած էր ինչոնեքու կրկէսին մէջ: Փոխանակ կեանքին լայն, դիւրին պողոտաներէն քալելու, ուր ամէն ինչ հեշտ էր, շլացուցիչ, սակայն կեղծ եւ խաբուսիկ, նախընտրած էր, այդ փողոցին զուգահեռ, արգելակուած կեանքի նեղ արահետը, ուր կեանքը անդրդուելի էր իր քմայքներով եւ առեղծոճներով:

Ճամպօ ոտքերուն քով բազմած էր: Զինք կը դիտէր: Սթափեցուց Ճամպոն:
- Եկուր ծովափ երթանք, ըսաւ,- կը բաւէ ինծի այդպէս բարի-բարի նայիս: Այո՛, կը յանդիմանես զիս... քանի օրէ ի վեր չեմ գացած... եկուր... գուցէ ծովը կը լուսաբանէ մեզ...:

Միասին դուրս ելան: Մութ էր: Շէնքերէն ծորող տարտամ լոյսերը հազիւ կը ստուերէին ճամբան: Կիսամութին մէջ անոնց քալուածքը նոյնանման էր: Հարցական ինչ մը ունէր: Ապու Սելիմին կրպակը գոց էր այդ ժամուն: Սամի աւագին վրայ նստեցաւ: Գրկեց Ճամպոն: Երկու ափերուն մէջ առաւ անոր գլուխը: Ճամպօ իր բարի նայուածքով կը դիտէր իր տէրը:

- Տարիներ հետո ապրելէ ետք դուն ալ ինծի նմանեցար... միշտ մինակ... միշտ օտար...:

Տարօրինակ փափաք մը ունեցաւ թիավարելու: Պէտք եղած ուժը ունէր տակաւին: Աշնան վերջաւորութիւնն էր: Տարուան այդ եղանակին ծովը տակաւին հանդարտ էր: Հարսի նազանք ունէր: Միայն թեթեւ հով մը կը փչէր: Ճամպօ կը հաջէր: Կարծես կը հակառակէր տիրող մեկնումին:

- Շուտ կը վերադառնամ,- ըսաւ Սամի,- զիս հոս սպասէ:


Նաւակը հրեց ծովուն մէջ: Սկսաւ թիավարել ծովուն բացերը: Կախարդուած

վիճակի մը մէջ կը գտնուէր: Չես գիտեր ինչ փնտռելու կ'երթար:

Այդ գիշեր անսպասելի այդ փոթորիկը խանգարած էր Ապու Սելիմին տունը: Առտուան դէմ շան մը կաղկանձներէն արթնցաւ: Փոթորիկը թեթեւցած էր: Ապու Սելիմ կրպակին դուռը բացաւ: Ապա շուրջը դիտեց, վնասները ստուգելու համար: Ծովափը շուք մը նշմարեց: Մօտեցաւ: Ճամպոն էր: Ալիքներուն ծովափ բերած նաւակի մը բեկորները կը հոտուրտար եւ կը կաղկանձէր: Ապու Սելիմ կռահեց պատահածը: Սամիրն նաւակը միւս նաւակներուն շարքին մէջ չէր գտնուեր: Այնքան ալ զգուշացուցած էր Սամիրն, որ այդ եղանակին ծովուն չվստահի: Լուրը շուտով տարածուեցաւ: Փրկարարները հասան: Միշօ վազելով եկած էր: Ուզեց փնտռտուքին մասնակցիլ: Թոյլ չտուին: Դժուար զսպեցին: Ճամպոյին փաթթուեցաւ եւ սկսաւ հեծկլտալ:

Մթնելու վրայ էր, երբ փրկարարները ձեռնունայն վերադարձան: Ծովը ալեկոծուելու վրայ էր: Միշօ փորձեց Ճամպոն իրենց տանիլ: Շունը գամուած տեղը մնաց: Ճարահատ, Միշօ լալով մեկնեցաւ:

Ճամպօ կրկին հոտուրտած նաւակին բեկորները: Շուրջը հաւաքուած մարդոց նայեցաւ տխրօրէն: Կիսամութին մէջ, աղեխարչ, երկարաձգուող կաղկանձ մը եւս արձակեց: Ապա, գլուխը կախ, ականջները գետին քսելով, լռեկայն, միշտ օտար ու մինակ, տիրոջը նման մեկնեցաւ չես գիտեր ո՛ր...



ԼԱԼԱ ՄԻՍԿԱՐԵԱՆ- ՄԻՆԱՍԵԱՆ

ՍԱԼԱՄ, ՉԻՆԿԻՉ

Սենեակը հակադրությունն էր շենքի ներքին մաշածութեան: Հին կարգերէն մնացած կոթողային կառույցը արտաքինապէս տակաւին կը պարտադրէր ինքզինք, բայց ներսէն արդէն կը զգացուէր նորոգութեան կարիքը: Մինչդեռ այս սենեակը աւելի քան նորոգուած էր՝ չքեղ վարագոյրներ, ոսկեզօծ բազկաթոռներ, տարաշխարհիկ բոյսեր ու նոյնիսկ պատերուն՝ կտաւներ: «Արուեստից է՞լ է բան հասկանում», անցաւ Արամի միտքէն, մինչ պաշտօնեան կը հրաւիրէր նստիլ:

- Լսում եմ, քաղաքապետը ներկայ չէ, չի կարող ընդունել: Ի՞նչ հարցով էք եկել:

Հայցողորները իրարու նայեցան. իրենց ժամադրությունը քաղաքապետին հետ էր:

- Մեր բակում անօրէն շինարարություն են սկսում, մենք բակի մարդկանց կողմից ենք եկել,- սկսաւ Աշոտը:

- Դա ո՞ր փողոցում է, ի՞նչ բակ է, տեղը նշեցէ՛ք:

Աշոտը բացատրեց, իսկ Աշխէնը չհամբերելով՝ առաջ նետուեցաւ.

- Ի՞նչ իրաւունքով են բակի մէջտեղը շէնք շինում, լոյսներս, արեւներս կտրում, արդէն բակը փոքր է, երեխաներին էլ խաղալու տեղ չմնաց...

Պաշտօնեան, պարարտ որովայնին արգելքը յաղթահարել փորձելով, քաղաքի յատակագծին վրայ ծռած՝ թաղը կը փնտռէր, կարծես Լոնտոնի յատակագիծն էր առջեւը. կը նայէր, առանց գլուխը վերցնելու ու ըսաւ.

- Տիկին, հանգիստ, իրաւունքը մենք ենք որոշում: Ոչ մի անօրէն բան էլ չկայ:

- Ինչպէ՞ս անօրէն բան չկայ, ո՞վ է տեսել բակի մէջ շէնք շինեն, շարժուելու տեղ չկայ, ի՞նչ է որ սովետը չկայ՝ մենք անտէ՞ր ենք, իրենց ուզածը պիտի անե՞ն...

- Տիկին, ես ձեզ ասում եմ՝ անօրէն բան չկայ, էդ մարդիկ փաստաթղթեր ունեն:

- Իսկ ինչպէ՞ս ունեն փաստաթուղթ, երբ անօրէն գործ են անում,- ըսաւ Արամը:

- Դա արդէն ձեր սահմանների մէջ չի մտնում, քաղաքային իշխանութիւնն է որոշում՝ ուր ինչ կարելի է կառուցել,- շտկուած, սեփական փորէն գոհ մարդու իշխող ձայնով ըսաւ պաշտօնեան:

- Ուրեմն ձուկը գլխից է հոտում. քաղաքային իշխանութիւնն է օրէնք խախտում,- յարձակումի անցաւ Արամը, մինչ Աշոտը, կացութիւնը հասկցած՝ անոր

նշաններ կ'ընէր լուերու:

- Լա՛ւ կ'անես, հասակիցդ վեր չբարձրանաս, գլուխդ առաստաղին կը խփես. զգո՛յ՛, կարծր է,- նետեց պաշտօնեան, արհամարհական երանգ տալով ձայնին:

- Ես էս բանը էսպէս չեմ թողնի, Երեւան կը գնամ, ախպերս նախարարու-
թիւնում է աշխատում,- թափ առաւ Աշխէնը, բայց պաշտօնեան նոյն քմծիծա-
ղով անոր դարձաւ:

- Տիկի՛ն, դուք մոռացէ՛ք ձեր սովետի ժամանակները. չէ՞ք ուզում՝ գնացէ՛ք
ուզած տեղներդ բողոքեցէ՛ք. հիմա հողը ոսկու գին ունի, ամէն ինչ փող արժի,
մենք համայնքի կարիքները պիտի հոգանք...

- Պարզ է, թէ ինչպէս էք հոգում,- նետեց Արամը ու դարձաւ ընկերներուն:

- Եկէ՛ք, գնացի՛նք, մէկի պոչը միւսի տակ է:

- Սահմանդ ճանաչի՛ր, երիտասա՛րդ, չգղջաս,- ձայնը բարձրացուց պաշտօն-
եան, բայց Արամը ետեւէն դուռը զարկաւ:

- Ուրեմն՝ «գլուխդ առաստաղին մի՛ խփի, կարծր է»,- չփորձեց էլ գոնէ խոս-
տումներով խաբել. լիտիաբար սպառնաց,- ըսաւ Արամը, երբ արդէն փողոցն
էին:

- Մենք էլ յոյսներս էս հանդիպումին էինք կապել... չէ՛, սա երկիր չի՛,- ար-
ձագանգեց Աշոտը:

Արամը անսպասելիօրէն պոռաց.

- Միայն էդ խօսքը մի՛ ասի: Մեր երկիր սա՛ է, ուրիշ չունենք:

- Որ չունենք, ինչո՞ւ չեն թողնում որ մարդ ապրի, ով հասնի՝ խեղդում է:
Երէկ էլ գործարանում ասում եմ՝ «Առաստաղը ծակեր ունի, անձրեւը ներս է
լցւում, հովանոցով ենք քայլում. հովանոց բռնե՞նք, թէ՞ աշխատենք. ամսա-
կաններն էլ չորս ամիս է չէք տուել»: Գիտե՞ս ինչ պատասխանեց «տէրը», «չես
հաւանում՝ մի աշխատի, ուզող շատ կայ»: Բա սա երկի՞ր է, մարդը մեզ ստրուկ
է դարձրել, իսկ ո՞վ պիտի հետեւի մեր իրաւունքներին: Հետաքրքիր է՝ ես
զգուեցի-հեռացայ, դու հեռացար, երկրում մարդ չի մնում, իրենք ո՞ւմ վրայ են
իշխան լինելու:

- Դիզած փողերի,- միջամտեց Աշխէնը,- ե՛րբ հասցրին էսքան ունենալ...

Պոլտոգերը բակին մէջ կը փորէր, հակառակ քանի մը կիներու ճճճոցին:
Դրացիներէն բաժնուեցաւ զայրոյթի ու նողկանքի զգացումներով: Անհովիւ
հօտ. գայլին հոգածութեան յանձնուած: Մենք փողոցը ինկած կոճակին ետին
ալ մարդուն կը խորհինք: Կ'ուզէր վանել եղածին պատկերը ու չէր յաջողեր:
Թուլութիւն կը զգար, խղճահարութիւն ու քամահրանք իրեն ու բոլորին հան-
դէպ:

* * *

Դուռին առջեւ ծնողներու պոռոցին ձայները առաւ: Կեցաւ: Հայրը Ռուսաս-
տանէն տասհինգ օր չեղաւ վերադարձած է ու արդէն՝ վէճ: Մայրը լալագին կը
խօսէր:

- Ի՞նչս ա պակաս, որ ինձ չես ուզում: Տարին տաս ամիս Ռուսաստան քէֆ
ես քաշում: Գոնէ բերած փողդ էլ մի բան լինէր: Ես էլ ճահէլ կին եմ, բա մե՞ղք

չեմ, ամբողջ օրը չան պէս աշխատում եմ տանն ու դուրսը... վրաս էլ չես նայում...

Աստիճաններէն իջաւ մեծ ոստիւններով, գրեթէ բախուելով երկրորդ յարկի ծեր դրացուհիին, որ կաթի շիշ մը ու կէս հաց առած՝ խանութէն կը դառնար, իր հինգ հազար թոշակի շքեղութիւնը վայելելու:

Բակին մէջ պոլտոգերը կը շարունակէր փորել. փոքր ծառեր արմատահան ինկած էին. Արամը ակռաները սեղմած դիտեց իր մանկութեան բարտիին տապալիլը: Երբ մեքենան անոր տակը փորուած փոսը խորացուց ու սկսաւ զարնել բունին, ծառը նախ տարօրինակօրէն սրսփաց, օրօրուեցաւ, ապա ճռնչալով, ամբողջ հասակով տապալեցաւ, իր տակ ձգելով մանուկներու օրօրոցը - միակ խաղափայլը: Ժիւղերը վայրէջքէն ետքն ալ ցնցուեցան պահ մը, տերեւները սրսփացին վերջին անգամ, ապա լռեցին՝ վարի ցեխը ճանչցած:

Քանի՜ անգամ գրկած էր ծառին հզօր բունը, քանի անգամ գլուխը անոր յենած՝ աչքերը ամուր գոցած ու մանկական զիւ ձայնով մինչեւ տաս համրած էր, ընկերներու հետ պահմտոցի խաղալու ատեն... Հեռուներէն ան իր բակին տեղը կը յայտնէր... Սիրահար տղաք իրենց ու սիրած աղջիկներու անուններ փորագրած էին վրան, նաեւ՝ նետահարուած սիրտեր... Քանի՜ տարուան ծառ էր... Բակային կեանքի առօրեայի անգամ էր, յիշողութիւններ ունէր... Ինչպէ՞ս ձեռքը կ'երթայ... Արամ գիտէր, որ անոր տապալումին սահմակեցնող կորագիծը պիտի չմոռնայ. տապալում մըն ալ իր մէջ էր:

Քանի մը կիներ, որ առակի փիղին վրայ հաջող շնիկներու պէս, կը ցատուտէին հզօր մեքենային շուրջը ու ծառին համար կը պայքարէին, անոր սպանութեան պահ մը սառեր-լուեր էին, ապա սթափելով՝ շարունակեցին ճլճալ ու անիծել. անոնք ալ լուացքի պարան կը կապէին ծառի բունէն ... ձայնը կը խեղդուէր աղմուկին մէջ՝ առանց հասցէատիրոջ հասնելու: Երկաթէ մեքենան անխոցելի էր:

Զառիվարէն կը քայլեր ցատկուտելով, հալածուողի պէս, թէեւ ահաբեկօրէն խորտուբորտ ճամբան մոռցած էր երբեք կուպրապատ եղած ըլլալը: Յաճախակի յորդ անձրեւները հեղեղներ կը քշէին անոր ակօսուած ու քանդուած մակերեսէն, սահանքներ կը գոյացնէին, ուր կը լողային ժամանակակից աղբի գոյնզգոյն նմոյշներ, քիչ մը կը յամենային դուրս ցցուած քարերուն քով ու կ'երթային տեղ մը անհետիլ հանրային պարտէզին մէջ:

Ոտքերը կը դնէր ուր պատահէր, առանց սահելէ ու ջրափոսերէ զգուշանալու: Ծամբեղերքը առատօրէն ու անկարգ աճած խոտերը կը քսուէին, կը թրջէին տաբատը, ասդին-անդին երկրաշարժէն յիշատակ մնացած թիթեղէ կամ փայտէ տնակները, խոտերու մէջ թաղուած՝ ընդհանուր խեղճութեան, լքուածութեան զգացում կ'արթնցնէին, որ միշտ կը վիրաւորէր հոգին, իսկ այսօր կը զայրացնէր: Բնութեան ինչպիսի՜ պարզեւ ու մարդու ինչպիսի՜ ապիկարութիւն:

Պարտէզներով առանձնատուներու լաբիւրինթոսէն ելաւ ու հասաւ սարին գագաթը՝ իր ներշնչարանը: Արեւը ելած ամպերու պաշարումէն, անձրեւէն ետքի շաղ ու շողի կախարդական պատկեր պարզած՝ հրաւէր էր՝ փռուիլ խոտերուն, ծաղիկներու բոյրերուն մէջ մոռնալ թշուառութիւնը քաղաքին, ծնողներուն, թշուառութիւնը իր տագնապահար հոգիին:

* * *

Վարը ծննդավայր քաղաքն էր՝ վեհ ու տխուր վերջալոյսի մէջ: Երբեմնի հանրապետութեան երրորդը իր կարեւորութեամբ, այսօր՝ լքուած, անխնամութեան, անտէրութեան ու թշուառութեան խարանը վրան: Հանդիպակաց լեռնապարերու միջեւ ձգուող նեղ հովիտին մէջ չբաւելով՝ սարերը մագլցած: Սարերը՝ աստուածային քմայքով, մէկ կողմէ ծառազուրկ՝ առատ, թարմ խոտի ու բազում ծաղիկներու հմայքով, իսկ միւս կողմի սարերը... ո՛չ, անոնք ալ ծառազուրկ են արդէն: ասդին-անդին մնացած ծառերը երբեմնի չքեղ անտառի կորստեան ողբը ու երկրաշարժի սահմուկեցուցիչ յիշատակներն են ընդամէնը: Իսկ սարալանջերուն սեւին տուող կտրուած ծառաբունները հեռուէն նայողին տպաւորութիւն կու տան, թէ քաղաքէն աւելի մեծ է սարերուն փռուած գերեզմանոցը... Հասարակարգի մը երկրաշարժին զոհ գացած ծառերուն:

Այսօր ալ քաղաքը կանաչ է. ինչ-ինչ, բայց բնութիւնը շուայլ է, միայն խնամքոտ հոգիի պակասը կը զգացուի: Իրենց կամքին ձգուած խոտերու ու թուփերու յորդիլը ամէնուր, մայթերուն բացուած ճեղքերուն ու մանաւանդ՝ նախկին հասարակաց կառոյցներու լքուած կտուրներուն՝ այրեցեալ գօտիի անտառներու ամենակուլ պատկերը կը յիշեցնեն: Կորսուող քաղաքակրթութիւն: Փոխաբերէ՛ն՝ ասդին-անդին կը փայլփլին, ուշադրութիւն կը հրաւիրեն նոր իշխաններու դղեակներ՝ ցանկապատելով իրենց՝ վերջէն տեսածի անչափելի ընչաքաղցութեան արգասիքը: Հովերու դիզած հարստութիւններ: Գարշահոտ հովերու: Իսկ հովին դիզածը այլ տեղեր ամբողջութեամբ մաքրած, աւլած ու մերկացուցած ըլլալ կ'ենթադրէ. փաստը քաղաքին կատարեալ լքուածութիւնն է՝ մարմնաւոր ու հոգեւոր առուծախի ենթակայ: Գնչուէն իշխան չ'ելլեր, կ'ըսէ առածը:

Արամը նստեցաւ քարի մը վրայ: Համայնապատկերը՝ հեռաւոր, երկնասլաց գագաթներու հորիզոններով կ'ամբողջանար ու լայն շնչառութիւն կու տար: Մայրամուտի հրդեհին մէջ անոնց խաղաղ վեհութիւնը անմեկնելի կարօտ կը ծնէր ու միտքը կը հրաւիրէր դէպի առեղծոքածային խորքերը յաւերժի. մինչ Արամին միտքին ստորոտներու քառսը կ'իշխէր: Գիտէր, որ ծնողները սիրով չէին, բայց այսչափը անսպասելիօրէն խոցող էր: Հայրը արտագնայ աշխատանքի կ'երթար եկամուտի համար, բայց ձեւով մը տունէն կը փախէր: Մայրը, օրն ի բուն լռիկ աշխատող՝ միշտ գուրգուրանքով էր հօր նկատմամբ ու հլու անոր կամքին: Հայրը՝ կարճ, կոշտ, անհրաժեշտ խօսքեր միայն կ'ըսէր: Այդ մէկը սովորական էր, քանի որ առնականութեան չափանիշը իր քաղաքին, գէթ ծանօթ շրջանակներու մէջ, այս ձեւով սահմանուած էր:

Ծիծեռնակները սուր ճիչերով երկինքը կը թրատէին. ի՞նչ է անոնց թռիչքներուն նպատակը. սնո՞ւնդ հայթայթել, խաղա՞լ, ազատութեան հրճուա՞նքը ապրիլ, թէ՞ սիրահետել... անոնց թռիչքի մէջ նազանք ու սիրոյ քմայքոտ խաղեր կային: Արամը հայեացքով կը հետեւէր, մինչ ծիծեռնակի թեւեր չունէր հասնելու իր ալ երազին ետեւէն: Ո՛չ միայն երազին. գէթ այս անշարժութենէն ազատէր: Ո՞վ է ինք հոս, հասուն երիտասարդ՝ ինչ ունի սեփական, որով ապագայի հիմք մը ունենալ կարծէ: Գեղանկարիչ է. որո՞ւ ի՞նչ. այս փոքրիկ երկրի ամէն

մէկ փողոցի մէջ քանի՜ երգող, պարող ու գծող կը գտնես. տաղանդի պակաս չկայ, ոչ ալ՝ ձգտումի, բայց ինքզնիքը ըլլալու համար այս քաղաքը շատ սեղմուած է սարերու միջեւ. սարերէն անդին չես երեւիր ու չես տեսներ: Ու դեռ գլուխդ առաստաղին զարնելու վտանգը կայ... Կարինէն... երեք ամիս է՝ ոչ մէկ նամակ անկէ...

Շատ որոշակի միտք մը փայլեցաւ, Կարինէի չվերադառնալու լուրը ստանալու պահուն ծնած, բայց կը մնար անորոշ բաղձանք միայն. հիմա յստակ ու շօշափելի կեցաւ առջեւը, հեռանալ այս քաղաքէն, այս երկրէն. անմիջապէ՛ս, առանց երկմտանքի, առանց միջոցներու խտրութեան: Ազատիլ այս դանդա՛ղ, մաշեցնող, ջլատի՛չ անորոշութենէն, անշարժութենէն: Կարինէն դուրսը անմիջապէս նկատեցին. ինք մնաց հոս. կը մեղադրէր ալ, որ ան ձգեց հայրենի քաղաքը: Ինք կը կարծէր, թէ պիտի տոկար ու երկրին վերականգնումը տեսնէր, սեփական ձեռքերով օգնէր անոր. բայց ո՛վ տեղ կու տայ քեզի, նոյնիսկ եթէ ինքնամոռաց բանելու պատրաստ ես: Ինք կ'արհամարհէր գացողները ու ցաւով կ'անցնէր հերթական պարպուած տունի քովէն: Մարդոցմէ սպասել, որ անգործ, անեկամուտ նստին ու վերէն քարոզուող վերացական հայրենասիրութեամբ՝ չհեռանան երկրէն, երբ աչքի առջեւ բացայայտ առուծախ կ'ընթանայ վերին «լաւ» տղոց միջեւ. անգործ տղամարդու նուաստացումը կրելով անվերջ, գլուխը օրական քիչ մը աւելի հակելով ու կիններու օրէցօր աւելի բարձրացող ձայներու տակ կ'ըլլէր... Ինք ալ անգործ կը թափառէ. բեռ է ծնողքին, քաղաքին, երկրին... մինչ Կարինէն հոն ո՛ւր կը հասնի: Իրեն միշտ թուացեր էր, որ իրենք անբաժան են. մանկութենէն միասին էին գծազրուութեան դասերուն ու դպրոցը. միշտ միասին. ու այդ բնական էր: Անոր չվերադառնալը դանակի հարուածի պէս զարկած էր. պահ մը խորհած էր ինք ալ երթալու մասին, նոյնիսկ հետաքրքրուած էր միջոցներով...

Ելաւ տեղէն. արդէն գիտէր, որ ծննդավայրը պիտի լքէ. մինչ ծաղիկներու բոյրը կախարդական էր, իսկ գոյնէ՛րը...

* * *

Տուն դառնալը կը ձգձգէր, բայց ո՞ւր երթալ. քաղաք, ուր ոչ մէկ զբաղում կ'ընաս գտնել: Ուսուցիչին տունը ուղղուեցաւ: Յաճիրիկ ցանկապատէն ներս քանի մը պտղատու ծառեր, բայց մանաւանդ անձրեւէն լողցած, ցողապատ ծաղիկներ ու վարդենիներ կը բուրէին: Փոքրիկ առանձնատունին դուռը միշտ բաց էր: Ճերմկած մազ ու մօրուքի մէջ կորսուած տղամարդը վրձինը ձեռքն էր: Բնականաբար մըն էր գծածը՝ արեւով ողողուած պայծառ գոյներով: Շուրջը ասդին անդին պատերուն ու գետինը նկարներ էին՝ ընդհանուր պայծառ տրամադրութեամբ:

- Հը, ի՞նչ ես ծռել երեսդ,- նետեց հիւրին:
- Ի՞նչը չիտակ է, որ երեսս չիտակ լինի, - թոնթորաց Արամը:
- Ա՛յ տղայ, աշխարհը երբեք էլ ինքը իրեն չիտակ չի եղել. շտկողներ են պէտք:
- Վարպէտ, երանի քո հաւատին. ո՞ր մէկը շտկես, ինչպէ՞ս, ի՞նչ կարողութիւն կայ ձեռքիդ: Սրանք ամէն ինչ իրենց ձեռքն են վերցրել. գլուխդ մի քիչ բարձրացնես՝ առաստաղին կը դիպչի, որ կարծր է,- ըսաւ ու նստեցաւ գունա-

գեղ զարդանախշ կարպետով ծածկուած թախտին:

- Ամէն ինչ միանգամից չի լինի, դու քո նեղ շրջանակից սկսիր, շրջապատիդ մարդկանց յո՛յս տուր:

- Ես յոյս ունե՞մ, որ ուրիշին տամ:

- Տղա՛յ, ի՞նչ եղաւ քեզ:

- Վարպէտ, դու քո պարտէզում նստել, ծաղիկ ես նկարում. դու էս մարդկանց հետ չես շփուում, սրանց լկտիութեան ու ազահութեան մասին գաղափար չունես:

- Քո կարծիքով ես աչք չունե՞մ. ես էս քաղաքում չե՞մ ապրում, չուրջս չե՞մ դիտում, էս համատարած խեղճութիւնից չե՞մ ճգմուում:

Արամ լուռ մնաց: Ան շարունակեց.

- Բայց նստելով ու լալով կամ հայհոյելով ի՞նչ կը փոխուի:

- Բայց ի՞նչ անենք, ձեռքներիցս ի՞նչ է գալիս:

- Ահա՛, նկարի՛ր, վերջին անգամ ե՞րբ ես ձեռքդ առել վրձինը:

- Էս խաւարի մէջ ինչպէ՞ս լոյս նկարեմ, - անոր գծածները ցոյց տալով ըսաւ

Արամը:

- Քո՛ մէջի լոյսը տուր, դա է քո առաքելութիւնը՝ խաւարի մէջ լոյս տալը. վերամբարձ է, բայց այդ է:

- Վարպէտ, հիմա լոյսին նայող չկայ, ո՞վ պիտի նայի մեր նկարներին, ո՞ւմ են պէտք, ո՞վ պիտի առնի: Մեր ժողովուրդը մի քանի տարուայ մէջ գերիրապաշտ դարձաւ՝ նիւթ ու միա՛յն նիւթ:

- Լոյսը միշտ ու բոլորին էլ պէտք է, դա ըմբռնեն թէ ոչ. դու քո գործը արա, նրան լոյս տուր, նա ի վերջոյ պիտի զգայ տարբերութիւնը: Մի օր պիտի զգան բանաստեղծի ասած «ոգու սովը»:

- Ես չեմ կարող սպասել, ուզում եմ նիւթի այս գիշատիչ տիրապետութիւնից ու ստրկութիւնից դուրս գալ, աւելի բարձր ու գեղեցիկ ոլորտներ մտնել:

- Աւելի գեղեցիկ քան վիրաւորին ու զրկեալին ամոքե՞լը... երբ դու երգում ես եկեղեցում՝ շատ աւելի մեծ գործ ես անում, քան այդ «բարձր» ոլորտներում լինէիր:

- Բայց նախ ինքս ինձ պէտք է գտնեմ, հաստատեմ, որ կարենամ ուրիշին տալու աստիճանին բարձրանալ. ուզում եմ այլ մտածողութեան մարդկանց, նոր գաղափարների, նոր ձեւերի շփուել...

- Հա՛, դասալիք լինել. ամենահեշտը, հիմա հասկացայ՝ խօսքդ ուր ես տանում: Դու էլ թող ու գնա՛. դու էլ գնալուց առաջ ասա՝ «էս ապրելու երկիր չի՛». գնա՛, դրա՛խտ փնտռիր: Բոլորդ եւրոպացի՛ դարձէք, բոլորդ ջանացէք նրա՛նց նմանուել, նոյնիսկ նրանց աղբանոցի՛ն... մեզ ե՞րբ պիտի նմանուենք, թէ՞ արժանի բան չկայ...

Արամը կը նայէր ուսուցիչի խամրած, մաշած հագուստներուն ու սիրտը կը ցաւէր. այս անշուք շրջապատը որքա՛ն հարազատ էր իրեն. իսկ ուսուցիչը... վերջիններէն մին, զոր նիւթը չէ կրցած ճգմել: Բայց շարունակեց.

- Լա՛ւ, մեզ խաբենք՝ թէ երկի՞ր է: Եթէ երկիր է, ինչո՞ւ է գաւազները դուրս մղում: Ահա, դո՛ւ. ընտանիքդ Եւրոպա, նստել ես հստեղ, ի՞նչ ես փոխում, գնա՛լիր, դու էլ մի բանի կը հասնէիր:

- Ես իմ հասնելիքիս հասել եմ. իմ գործը հստեղ մնալն է, ձայնը բարձրացուց

ուսուցիչը,- էս սարերին պահակ է պէտք. ես պահա՛կն եմ, պահա՛կը:

- Վարպէ՛տ, բայց, կը ներես, պահակը երիտասարդ պէտք է լինի, քանի գայ-
լերը սարը պատել են, իսկ ո՞ւր են մեր երիտասարդ պահակները. քաղաքը, եր-
կիրը ծերանոց է դարձել, արիւն ենք տալիս աշխարհին:

- Արամ, էս հողում իմ պապերն են թաղուել. ահա, էն գերեզմանոցից պապս
մատը վրաս թափ է տալիս. ե՛ս էլ էս հողը պիտի պարարտացնեմ: Մի օր դա կը
հասկանաս, գնացողներն էլ կը հասկանան...,- ձայնը ներքին ու խուլ էր: Վրձի-
նը բարձր բռնած, աչքերուն մէջ հեռու ակերէ բխող փայլք. մարգարէ մը, մո-
լեռանդ մը, գաղափարի ժամանակավրէժ պիտուր մը կը թուէր Արամին, ու
սիրտը կը ցաւէր: Զգաց, որ ուսուցիչը, այսինքն՝ արուեստագէտի ազատ հո-
գին, կրնայ հաշտուիլ իր մեկնումին, մինչդեռ դիմադրողը հայն է, որ իր ալ
տաղանդը խեղդեր է իր սարերու սիրոյն: Անխօս ելաւ:

* * *

Հանրային պարտէզին մէկ անկիւնը նստեցաւ: Բացակայ հայեացքով կը դի-
տէր: Քիչ անց ծառուղիին հակադիր կողմէն երկու երիտասարդներ յայտնուե-
ցան՝ սեւ տաբատ, ճէփ-ճերմակ վերնաշապիկով: Հոս տղաքը այսպէս չեն հագ-
ուիր: Մէկ հայեացքը բաւական էր ճանչնալու՝ աղանդաւորներ են, անոնք կը
վիտան քաղաքը: Կը մօտենային, ճամբու վրայ երբեմն ոմանց հետ կենալով ու
ինչ որ գրքոյկներ տալով: Զօրաւոր դիտելու եւ գնահատելու կարողութիւնը
ունին, կը մօտենան միայնակներու, լքուածներու, անգործներու... իսկ հոս
քանի՞ հոգի այդ խումբերու մէջ չէ... «Որսը առատ է», խորհեցաւ ու ներսը բան
մը քմուկեցաւ: Կ'ուզէր առաջին մարդուն վրայ բնագոյով վրայ յարձակիլ ու ծե-
ծել: Անկախութեան առաջին օրերէն սկսեալ ինք եկեղեցւոյ դպիր է. հայոց եկե-
ղեցւոյ մասին գիտցածը վարդապետ մը չի գիտեր. բայց ի՛նչ կը փոխուի ատկէ.
քաղաքին կէսը աղանդաւոր դարձուցին. տէրերը խնճոյքի են, շուները շղթայ-
ուած, գայլերու առջեւ փարախը՝ բաց...

«Ահա փրկութիւնը - կայծակեց միտքին մէջ,- սրանց միացիր, շուտով ու-
զածդ երկիրը կարող ես գնալ ու գործ ունենալ»: Երեսը ծռմռեց: Անոնք կը մօ-
տենային. անծանօթ գոյգ էր. քաղաքը շատ պզտիկ է, աւելի պզտիկցած հիմա,
ու ամէնքը զիրար գէթ տեսած են. ասոնք նոր գոյգ են ու անշուշտ, մէկը՝ չի-
կահեր, աղջնակի մորթով, կապուտաչ, երկնային ժպիտը ճերմակ-վարդագոյն
դէմքին՝ սկանտինալցի, միւսը՝ թուխ, ճղճիմ, նոր հագուստի մէջ կորսուած, իր
երկնառաք բախտին դեռ չհաւատացող հայ փրկուած՝ մը: Մնաց գլխահակ:
Անոնք քովը դանդաղեցան:

- Բարեւ ձե՛զ,- հայերէնի շատ կոկիկ հնչումով ու ժպիտով ըսաւ հիւսիսի գա-
ւակը. քովի հայը անորոշութեան կը ժպտէր: Ինք չպատասխանեց. սա իր պայ-
քարի դաշտն է ահա քանի տարի. քաղաքի մէջ յայտնի է հայ եկեղեցւոյ պաշտ-
պանի իր ծայրայեղութեամբ. ասոնք կ'երեւի թէ նոր որսորդներ են՝ մեռնողի
գլխուն վրայ կեցած ու հոգիին ելլելը սպասող՝ խիստ հոգատար ու բարեկիրթ
ազնւաներ... Բայց որքանո՞վ ճիշդ է ամբողջ մեղքը ասոնց վրայ բարդել: Ամ-
բողջ ներսէն կ'առնուի: Գէթ մեր ամբողջները այդպէս առնուած են: Եթէ քեզի
կաթին հետ այլ արժէքներ ծծել կու տան, եթէ մեծ բառերու հեղեղին տակ

մոռցնել կը ջանան քու բուն էութիւնդ, կ'աղաւաղեն, կը մանրեն, եթէ դուն ալ ջանք չես ըներ անցեալիդ նայելու, քանի շա՛տ յառաջադէմ ես, ուրեմն... ուրեմն խոպան մնացած դաշտը այլ հերկողներ կը յայտնուին ու իրենց ուզածը կը ցանեն: Իսկ դուն ազատ մարդ կը խաղաս՝ մանուկի մը կարծատեսութեամբ: Ազատութեան քու սահմանդ այս է. ինքնառնչացում:

Ուրիշ ատեն անոնց օձիքը կը բռնէր. հիմա ամէն ինչ այլ է. ինք եւս որոշած է միանալ «Դասալիքներուն»։ Բայց ո՛չ այս ճամբով, այս մէկը՝ ո՛չ:

Անոնք զգացին բան մը ու հեռացան: «Ուժեղ հոտարութիւն ունին, վարժեց-ուած չնե՛ր. հարցնող լինի, թէ քո շէն ու հարուստ երկիրը թողած՝ ի՞նչ անելու ես եկել, չէ՛կ աղուէ՛ս. նոր-նոր մեզ քրիստոնեա՞յ պիտի դարձնես, թէ՞ աղբերդ թափելու տեղ ես փնտռում: Հասկանո՞ւմ են արածները, թէ խաբուածներ են: Ի՛նչ չահեր պիտի ունենան, որ դեռ հայերէն էլ են սովորում: Իսկ հա՞յը՝ խղճա-լի՛, մուրացկա՛ն, ծախուա՛ծ հոգի. սպիտակ շապիկ է հագնում...»:

Սրտխառուք կը զգար այս բոլորէն ու դիմադրելը այլեւս՝ աւելորդ. ջուրն ի՛ր ճամբան պիտի գտնէ, քանի պարտիզպանը քնացած է: Ձուկին գլո՛ւխը հո-տած է, իսկ ինք ու իր նմանները ընդամէնը անապատի մէջ կանչողներ՝ անար-ձագանգ: Որոշումը աւելի ու աւելի յստակ էր՝ հեռանալ երկիրէ մը, որու գա-ւազները իրենց շուրջ կը նային, թէ դեռ ինչ մնաց որ կրնան ծախել:

* * *

Երեւան ընկերը խորհուրդ տուաւ մէկէն դեսպանատուն չդիմել, քանի որ անգամ մը մերժուելէ ետք դժուար կ'ըլլայ վիզա ստանալը: Միջնորդը խոստա-ցաւ, «խաթրի համար» չորս հազար եւրոյով գործը գլուխ բերել: Միջնորդ՝ եւ-րոպական «օրինաւոր» դեսպանատուներու հետ...: Արամը չուէր այդ դրամը: Մարդը բարի եղաւ ու խորհուրդ տուաւ՝ Թուրքիոյ վրայէն փախստականի կարգավիճակով մտնել Եւրոպա: Ճամբաներ ցոյց տուաւ:

Պոլիս հասած էր, բայց Եւրոպա մտնելը կը դժուարանար: Ապա անցաւ կղզի մը: Ծանօթին ծանօթ յոյնը կը խոստանար, բայց կը քաշքշէր, թէ եւ դրամին մէկ մասը առած էր: Ծովափին կը գիշերէր: Յերեկը հոս-հոն գործեր կ'ընէր, բեռ-ներ կը շալկէր:

Օր մըն ալ, երբ այցելեց յոյնին, ան յայտնեց, թէ հայու անձնագիրով գործը չի քալեր, պէտք է որպէս թուրք երթայ: Մինչ այդ չէր նկատած պատերուն անշ-քութիւնը, թափած ներկը, աթոռներուն մաշածութիւնը, նստածներուն ափան գլանիկներուն հանած գարշահոտ ծուխը: Թուրք, քիւրտ, արաբ, ասորի՝ արեւ-ւելքի գաւազներէն քանի՛ հոգի եկած է հոս՝ դուրս փախչելու երազով, որ յետոյ ալ «վաթան»ի կարօտէն միայն:

Արամ նստած էր անոնց շարքին, կը դիտէր ու կը յիշէր ուսուցիչին հետ իր վերջին հանդիպումը: Այս արեւելքցի երիտասարդները հացի կամ ինչ-ինչ երազ-ներու ետեւէ կը ձգտին Եւրոպա: Հոն, եթէ անտէր չնիկի պէս իրենց վիզէն բռնած դուրս չնետեն, օրերը կը յղկեն անոնց արեւելքցիի արտաքին կոշտու-թիւնը, տանելով նաեւ անոնց յախուռն անմիջականութիւնը ու բաներ, որոնք այլապէս արժէքներ էին...

Միտքերը ընդհատուեցան բարձր խօսակցութենէն: Յոյնը տղու մը նոյն նա-

խաղասուլթիւնը կը կրկնէր, ինչ որ ըսաւ իրեն՝ թուրքի՛ անձնագիրով կրնաս մտնել Եւրոպա: Մինչ պատանին շուրջը կը նայէր, կարծես յոյնին ըսածը բացատրողի կամ կարծիք տուողի պէտք ունէր:

Արամը տղուն մէջ հարազատ բան մը զգաց: Նստողները, որ սպասումէ յոգներ էին, հետեւելու արժանի բան մը գտած եղան: Տղան ըսուածը դեռ չհասկըցած՝ զարմացած նայեցաւ յոյնին ու անգլերէն ըսաւ.

- Ի՛նչ, թուրքի անունո՞վ, ասիկա՛ ուրկէ ելաւ:

- Տղա՛ս, - թրքերէն կը խօսէր յոյնը, - կարելիս աս է, եթէ կ'ուզես երթալ, ա՛ս է:

- Ես հայ մըն եմ, դուն ալ՝ յոյն, ինծի կ'ըսես թո՞ւրք դարձիր...

- Տղա՛ս, անձնագիրին մէջ գրուելով դուն թո՞ւրք դարձար, - ան իր առնելիք դրամի մասին կը խորհէր:

- Ձեզի ալ, ձեր Եւրոպային ալ..., - հայերէն հայհոյեց, ապա նետեց անգլերէն, - ես թուրքի անուն չեմ առներ վրաս, աւելի լաւ է Հալէպ համալըլլամ, քան թէ թուրքի անուն առնեմ վրաս...

Արամ յանկարծ հասկցաւ եղածը. կարմրեցաւ. ինք թուրքի անունին տակ մտնելը առած էր թէեւ տհաճութեամբ, բայց կարծես նպատակի մղումին տակ՝ մեքենաբար. միայն գործը յաջողէր. հիմա անդրադարձաւ. այդ պատանին ժամանակի պէտք չունեցաւ անդրադառնալու համար:

- Դո՛ւն գիտես, գործիս արգելք մի՛ ըլլար, անցի՛ր, - պաղարիւնութեամբ կը խօսէր յոյնը, մինչդեռ երիտասարդը կատղեր էր. սեղանէն առաւ իր փաստաթուղթերը ու հայհոյելով ելաւ: Նստողները պահ մը միայն նայեցան անոր ետեւէն ու մոռցան:

Կ'ուզէր ետեւէն երթալ, խօսիլ, անոր ըրածը ընել, բայց չունէր այդ կիրքը: Մէջը կարեւոր բան մը փշրուած էր: Ինք հայրենիքէն կը փախչի, ան, ընդամէնը՝ ծննդավայրէն, բայց չընդունեցաւ այս միջոցը: Իր անունը դեռ բան մը կ'ըսէ անոր: Պատանին չեչտուած ազգային դիմագիծ, խոշոր ու մտացի աչքեր, կրակոտ շարժումներ ունէր. նման արտաքինով տղաքը ինք մտքին մէջ միշտ հիթիթ, նայիրցի, ուրարտացի ու մանաւանդ՝ Արտաշէ՛ս կը կոչէր. հիմա ալ անոր մէջ հեռաւոր նախնիներու արիւնը զգաց ու ընկճուեցաւ: Իր Արամ անունը պիտի փոխարինէ թուրքի անունով... որքա՞ն ժամանակով. թերեւս ալ՝ ընդմիշտ... արդեօք անունը ազդեցութիւն ունի՞ մարդուս էութեան վրայ...

Ուրկէ ուր՝ պարզորոշ յիշեց մանկութեան բարտիին արմատները փորող մեքենան ու ծառին ճռնչոցով տապալիւր...

Երեկոն կ'իջնէր, երբ առաւ նոր անձնագիրը: Նկարէն իրեն նայողը ըսաւ.

- Սալա՛մ, Չինկի՛զ...

Վանաճոր

ԿՈԼԵԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԵԻԱ

Չորս տարուայ բացակայութիւնից յետոյ տան շեմքից ներս անցնելիս Եւան չզգաց սովորական խանդավառութիւնը: Իր գալու առթիւ մայրն աշխատել էր կարգի բերել տունը, նոյնիսկ ծաղիկներ էր դրել միջանցքի սեղանին, բայց տեղ-տեղ զգացում էին մօր՝ կենցաղային մանրութեան հանդէպ անուշադրութեան ու անփութութեան հետքերը:

- Հանուի՛ր,- գրկից բաց թողնելով Եւային՝ ասաց մայրն ու մատի ծայրով մաքրեց չլարուած աչքերի անկիւնները:

Աղջիկը կռահում էր, որ մայրը յատուկ իր համար չի պատրաստուել ու սպասում է հիւրի. նրան վաղուց յայտնի էր, որ մայրը կապուած է մի տղամարդու հետ: Այնուամենայնիւ չկարողանալով զսպել իրեն՝ հարցրեց սովորական թոնով, հենց այնպէս.

- Մա՞րդ է գալու:

- Ինչի՞ց եզրակացրիր,- չարածճի ժպտալով՝ հարցին հարցով պատասխանեց նա:

- Քո գեղեցիկ արտաքինից, հագնուածքից. ասես նոյնիսկ ամուսնացած չես եղել:

Եւան անթաքոյց հիացմունքով նայում էր մօր կանացի, անթերի կազմուածքին ու գեղեցիկ դէմքին:

- Դու էլ չատ ես փոխուել, հրաշալի տեսք ունես:

- Հա՛, չա՛տ, մանաւանդ էս վիճակով, ճանապարհից յոգնած...

- Ես դա նկատի չունեմ, իսկապէս գեղեցկացել ես, լցուել:

Եւան մօր օգնութեամբ պայուսակները տարաւ իր սենեակը եւ կարօտով նայեց չորս կողմը: Գրասեղանի վրայից վերցրեց զոհուած հօր շրջանակուած նկարն ու շուրթերը հպեց սառն ապակուն: Աչքերից ցած գլորուեցին արցունքի տաք կաթիլներ:

- Սոված չե՞ս,- հարցրեց մայրը գորովանքով,- համեղ բաներ եմ պատրաստել:

- Ձէ, ընթրել եմ օդանաւի մէջ: Գուցէ մի քիչ պառկեմ:

- Դէ լաւ, պառկիր, հանգստացիր:

Եւան ուրախութեան երանգ որսաց մօր ձայնի մէջ: «Երեւի չի ուզում երկու անգամ ընթրիք գցել ու հաւաքել,- անցաւ մտքով: Իսկ գուցէ միջանցքի ծաղիկներն էլ նրա համար են...»:

- Լոյսն անջատե՞մ,- հարցրեց մայրը դրան կիսաբացուած քից:

- Հա, անջատիր,- խնդրեց նա ու փռուեց մահճակալին: «Աշխարհի ամենահանգիստ անկողինը», - մտածեց նա միտումնալից: Մարմինը նստում էր յոգնածութիւնից, բայց նրան աւելի շատ տանջում էր տղամարդու ներկայութիւնը մօր եւ... ուզէր-չուզէր իր կեանքում: Երբ օտարութեան մէջ հայրենիքից նոր ժամանած ընկերուհուց առաջին անգամ լսեց այդ մասին, ճիշդ է, յանկարծակիի եկաւ, բայց այնքան էլ հանճանգստացաւ, սրտի խորքում միշտ սպասել էր մօր կեանքում նման մի իրադարձութեան: Ասենք, դա շատ սովորական երեւոյթ էր համարուում Ամերիկայում, հենց իր գործատեղիում կային երկուսը, մէկը՝ ամերիկուհի, միւսը՝ հայ, որ իրենց ամուսիններից բաժանուելուց յետոյ սիրեկաններ էին պահում ու շատ էլ երջանիկ էին...: Մայրը ջահել է, գեղեցիկ, կանացի ու բնաւորութեամբ... այդպիսին: «Ինչպիսի՞ն»։ Եւան մի պահ խղճի խայթ գգաց: Ո՛հ, ինքը, հարկաւ, դա վատ մտքով չի ասում. աւելի շուտ մայրը սիրում էր միշտ լինել ուշադրութեան կենտրոնում, լսել իր հասցէին շռայլուած հաճոյախօսութիւններ. հօր մահից յետոյ երբեմն նոյնիսկ իր ներկայութեամբ սեթեւեթում էր օտար տղամարդկանց առջեւ: Այո, մայրն «այդպիսին» էր, բայց պետական բարձր պաշտօնի բերումով միշտ մնում էր իր կոչման ու հասարակական դիրքի բարձրութեան վրայ: Հիմա ինքն էլ չգիտէր, թէ ինչու այդքան մեծ կարեւորութիւն է տալիս մօր եւ իրեն անծանօթ այդ տղամարդու յարաբերութեանը: Ի հարկէ, ինքը հաւատացել էր ընկերուհու պատմածին, սակայն, ասես, ոչ ամբողջութեամբ. իրականութիւնը չէր տեղաւորուել ուղեղում, չէր ընկալել խնդրի ողջ լրջութիւնը: Գուցէ հեռուում դա այնքան էլ առարկայական ու շօշափելի չէր, ինչքան այստեղ՝ հարազատ տանը, ուր իւրաքանչիւր իր կամ անկիւն իր մէջ պահած ունէր անցեալի անմոռանալի մի յուշ: Նա ակամայ բարձրացրեց գլուխն ու փորձեց նայել հօր նկարին, սակայն պատուհանից ներս թափանցած ու ապակու մէջ արտացոլուած լոյսի բեկորը խանգարում էր տեսնել հօր դիմագծերը. միտումնալից միջից հայրն իրեն էր նայում ասես լուսէ շղարչի ետեւից...: Վերջին տարիների միայնակ կեանքը, տիրող օտար բարքերը Եւային մասամբ դարձրել էին անզգացմունքային. վաղուց չէր արտասուել: Իսկ հիմա տան միջնորդի ջերմութիւնը, կենարար աւիշի պէս կաթիլ-կաթիլ լցուելով իր էութեան խորքը, հալեցնում էր քարացած զգացմունքները... Նա, դարձեալ հօր նկարի կողմը նայելով ու յիշելով նրան, զգաց, որ կոկորդը սեղմւում է:

Եւան արթնացաւ դրան զանգի ձայնից ու լարուեց ողջ մարմնով: Լսեց դրան բացուելու եւ փակուելու ձայնը, ապա մօր շշուկը.

- Աղջիկս է եկել:

Եւան զսպանակի պէս վեր թռաւ անկողնուց ու ոտքերի թաթերի վրայ մօտենալով դրանը՝ կիսաբաց փեղկի արանքից տեսաւ մօրը՝ երկու առնացի բազուկներ փաթաթուած մէջքին...: Մայրը շուռ եկաւ ու նայեց իր սենեակի կողմը, բայց կասկածելի բան չնկատելով՝ շրջուեց ու համբուրուեց յաղթանդամ, բարձրահասակ տղամարդու հետ: Եւան ցնցուեց, այսպիսի տեսարան մէկ էլ

տեսել էր կինոյում... Չէր ուզում հաւատալ, որ համբուրողը իր հարազատ մայրն է...

- Աչքդ լոյս,- ասաց տղամարդը հաճելի պասով՝ գրկից բաց թողնելով նրան։ Մայրը ժպտաց։

- Գնամ, նայեմ, եթէ Եւան քնած չէ, կանչեմ գայ, ընթրենք։

Աղջիկն իրեն գցեց անկողնում վրայ եւ աչքերը փակեց։ Առայժմ իր մէջ ուժ եւ համարձակութիւն չէր գտնում անցանկալի հանդիպման ու ծանօթութեան համար։ Նա սիրում էր մօրը եւ վախենում էր իր ակամայ աննրբանկատութեամբ, ինչին յաճախ ընդունակ էր, վշտացնել նրան։ Մայրն անձայն բացեց դուռը, նայեց աղջկան ու հեռացաւ։ Ինչո՞ւ այլի կամ բաժանուած կանայք միշտ ձգտում են նոր կողակից գտնել. ամուսնական կենակցումի կորսուած հաճո՞քն է նրանց մղում այդ քայլին, արու մէկին նեցուկ ունենալու սովորութեան ո՞ւժով։ Ինչքա՞ն միայնակ աղջիկներ կան, որ ապրում են առանձին կեանքով ու չեն կարեւորում տղամարդու ընկերակցութիւնը։ Գուցէ եւ կարեւորում են, բայց չեն յանդգնում գնալ ... այն քայլին ու յաճախ սպասում են յոյսով, որ մի օր կը յայտնուի իրենց երազների արքայազնը։ Այս երկրում թապուները սահմանւած են միայն աղջիկների համար, հասարակութիւնն անտարբերութեամբ կամ մատների արանքով է նայում ամուրի կանանց մտերիմ խնդիրներին։ Միայն հռչակի հասած աստղերն ու նշանաւոր դէմքերն են յայտնում լրագրողների թիրախում՝ զարդարելով որոշ հանդէսների էջերը։ Մարդիկ կարդում են՝ դրդուած քաղքենիական հետաքրքրութիւնից, երբեմն նոյնիսկ հաճոյքով, կարդում են, պատմում սրան, նրան ու մոռանում։ Գուցէ մօր մասին էլ գրեն...։ Ո՛չ, դա ահաւոր է...։ Չի դիմանայ, թէեւ ինքը ո՛չ մեղադրում ու ո՛չ էլ արդարացնում է մօրը։ Սակայն ինչո՞ւ չի կարողանում ընդունել երրորդ անձի ներկայութիւնը իրենց տան մէջ։

Եւան նստեց անկողնում ու գրկեց ծնկները։ Չկար հայրը, բայց կար հօր նկարը, որ նայում էր իրեն լուսէ շղարչի ետեւից։ Հայրն ամէնուրեք կար, անգամ տան օդի մէջ... Աշխատեց պատկերացնել հէրը, բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ մտապատկերում միայն յառնեցին նրա անկենդան, խաղաղ դէմքը, ծաղիկներով ու շքանշաններով զարդարուած կուրծքը, սրճագոյն, փայլուն դագաղը։ Ի՞նչ չուքով թաղեցին հօրը՝ հերոս հրամանատարին...։ Նա ձեռքի շարժումով ասես իրենից վանեց այդ տեսարանը։ Հիմա կողքի սենեակում նստած է մի անծանօթ տղամարդ, որը ... փոխարինում է հօրը...։ Մայրն ինչպէ՞ս է գնացել այդ քայլին...։ Եւան զգում էր, որ աստիճանաբար նսեմանում են մօրն արդարացնող իր բոլոր վարկածները, թէեւ հոգու խորքում դարձեալ ճգնում էր արդարացուցիչ նոր տարբերակներ մոգոնել։ Նա ցաւով զգում էր, որ լարում է մօր դէմ, եւ սրտի խորքում բռնկում ու ահագնանում է չարութեան բոցը, որը նրան մղում էր ձեռնարկել դրութիւնը փրկող ինչ-որ բան...

Յանկարծ նա ցած իջաւ անկողնուց ու ճամբորդական պայուսակի միջից մահճակալին թափեց հագուստները։ Պայուսակի խորքում երեւում էր կանացի

ընտիր ձեռքի ժամացոյցի մոլգ կապոյտ տուփը. ժամացոյցը մօր համար էր գնել, սակայն դեռ չէր յանձնել նրան: Եւան մի պահ կարկամեց. ի՞նչ սիրով ու ցանկութեամբ էր գնել դա ու իր ձեռքով տուփը կապել խաչաձեւ՝ փայլուն ոսկեգոյն ժապաւէնով ու կենտրոնում ամրացրել ոսկեգոյն փոքրիկ վարդ: Չէ՞ որ այն ժամանակ էլ գիտէր մօր ու նրա կապի մասին... Ի՞նչն է փոխուել, այս ի՞նչ է պատրաստուում անել հիմա... Ինչո՞ւ...:

Եւան վհատութեամբ փլուեց մահճակալի եզրին ու գլուխն առնելով ափերի մէջ՝ նորից խորասուզուեց մտքերի յորձանուտը: Ճաշասենեակից լսուում էին գինու բաժակների՝ իրար զարկուելու, սպասքի, մօր եւ տղամարդու ծիծաղի խուլ ձայները: Աւելի քան կէս ժամ նա մնաց նոյն դիրքով. յետոյ ընդոստ վեր կացաւ տեղից, նայեց մահճակալի վրայ թափուած հագուստների կոյտին ու դրանց միջից ընտրեց սեւ գոյնի սաթինէ շրջագգեստը՝ լանջաբաց ու կարճ՝ ծնկներից շատ վեր: Մթութեան մեջ հագնուեց ալարկոտ շարժումներով ու յետոյ միացրեց լոյսը. անհետացել էր հօր նկարը պարուրած լուսէ շղարշը: Հայրը հիմա նայում էր նրան իր բարի, խրախուսիչ ժպիտով...: Եւան հաւաքեց ուսերին թափուած երկար սեւ մազերն ու ամրացրեց սեւ ականակուռ հերակալով՝ ի ցոյց դնելով երկար պարանոցը, թեթեւ չալարուեց ու թանկագին օժանելիքով ցօղեց պարանոցն ու դաստակները: Հանդարտ դուրս եկաւ իր սենեակից ու միջանցքի հայելու մէջ գոհունակութեամբ նայելով իրեն՝ բացեց ճաշասենեակի դուռը:

Թէ՛ մայրը եւ թէ՛ տղամարդը, ընդհատելով իրենց զրոյցը, արագ շուռ եկան: Եւան մօր դէմքին նշմարեց զարմանքի արտայայտութիւն, որը, պարզ չէր, վերաբերում էր իր յանկարծակի ներխուժմանը, թէ՞ տեսքին:

- Բարեւ ձեզ,- սիրալիր ասաց նա ու ձեռքը նազանքով պարզեց հիւրին: Նա սիրալիր ու թեթեւ խոնարհումով սեղմեց աղջկայ ձեռքը, որը Եւան տղամարդու ափի մէջ թողեց ընդունուած պահից աւելի երկար...

- Նստի՛ր, նստի՛ր,- ասաց մայրը՝ դեռեւս Եւայի շրջագգեստը տնտղելով,- ի՞նչ կը կամենաս:

Եւան չհրաժարուեց քաղաքի լաւագոյն սրճարանից բերուած խորովածից ու մօր պատրաստած խորտիկներից: Տղամարդը բարձրացաւ տեղից, սովոր շարժումով բացեց պահարանի ապակեպատ դուռը եւ բերելով մի յախճապակէ բաժակ՝ վարժ շարժումով կարմիր գինի լցրեց Եւայի գաւաթը:

- Խմէ՛ք, հիանալի գինի է,- ասաց նա իր հաճելի թաւ ձայնով:

- Շնորհակալ եմ, սիրով,- ասաց Եւան ու նայելով տղամարդու աչքերի խորքը՝ ժպտաց պչրանքով: Նա զգաց, որ իր ժպիտը չվրիպեց մօր հայեացքից:

Խօսակցութիւնը պտտուում էր Եւայի կեանքի շուրջ: Եւան խօսում էր իր ապրած երկրի ազատ ու անկաշկանդ կենցաղի, յատկապէս կանանց տրուած ազատութեան եւ այլ առաւելութիւնների մասին: Մայրը դա համարում էր արեւմտեան սանձարձակութիւն: Գինու երկրորդ բաժակից յետոյ նա սկսեց պատմել իր՝ տղաների հետ ունեցած որոշ ծիծաղելի արկածների մասին...: Մայրը երբեմն խո-

Ժողովում էր դէմքը եւ աշխատում փոխել խօսակցութեան թեման, բայց Եւան չա-
րունակում էր՝ ասես ոգեւորուած տղամարդու քահ-քահ ծիծաղից...

Ընթրիքից յետոյ նրանք անցան հիւրասենեակ ու ընկողմանեցին բազկաթոռ-
ներին. անփութօրէն նստած աղջկայ կարճ շրջագոստի տակից երեւան եկան
նրա բարեձեւ սրունքները: Եւան զարմանքով նայում էր շուրջը: Մայրը սենեա-
կը կահաւորել էր նորագոյն ոճով: Ընդարձակ հիւրասենեակը լուսաւորւում էր
միայն անկիւններում դրուած լուսամփոփների դեղին լոյսով: Պատերից կախ-
ուած վերացական գեղեցիկ կտաւները, յատակին փռուած բաց գոյնի գորգերն ու
նորագոյն մեղմօրէն դեղին, թեթեւ կահոյքն առինքնող էին եւ ախորժելի մթնո-
լորտ էին ստեղծում: Եւան ցուցադրաբար շրջուեց բազկաթոռի մէջ ու երկար դի-
տում էր խորհրդաւոր, կիսամերկ մի կնոջ պատկերող ընտիր կտաւը, որ կախ-
ուած էր իր ետեւի պատից: Տղամարդու հայեացքը երբեմն հպանցիկ կանգ էր առ-
նում Եւայի՝ շրջուելու հետեւանքով աւելի բացուած ազդրերի վրայ: Եւան մի
պահ արագ շրջուեց ու նայեց մօրը. նա այդ պահին ակնկալում էր տեսնել մօր
նեարդայնացած, յանդիմանական դէմքը: Սակայն բացի զարմանքից, որը չէր իջ-
նում մօր դէմքից իր յայտնուելու պահից ի վեր, նրա ոչինչ չասող հայեացքն ու
հաստատ ինքնավստահութիւնը հունից հանում էին աղջկան:

Մայրը զնաց խոհանոց՝ սուրճ պատրաստելու: Եւան զնահատող հայեացքով
վերից վար չափեց տղամարդուն ու նորից ժպտաց՝ ինքն էլ զարմանալով իր ան-
պատկառութեան վրայ: «Ի՛նչ էլ բարետես է, մայրս գուր տեղը չի ընտրել հենց
սրան...»: Նա ամէն կերպ աշխատում էր տղամարդու ուշադրութիւնը հրաւի-
րել իր մարմնական բարեմասնութիւնների վրայ, եւ թւում էր, թէ դա մասամբ
իրեն յաջողւում է, բայց, այնուամենայնիւ, տեսնելով նրա բարակ շրթերի վրայ
գծազրուած բարի ժպիտը՝ նեարդայնանում էր: Եւային հանգիստ չէր թողնում
նաեւ այն միտքը, որ տղամարդը հասկացել է իր թաքուն մտադրութիւնն ու
խուսանաւում է: «Զգիտես, կարգի՞ն, լա՞ւ մարդ է, թէ՞ փորձ-
ւած արկա-
ծախնդիր...»:

- Դուք ի՞նչ մասնագիտութիւն ունէք,- հարցրեց Եւան:
- Ճարտարապետ եմ,- ալարկոտ պատասխանեց տղամարդը:
- Իսկ ինչպէ՞ս հանդիպեցիք մօրս:

Տղամարդը լուռ էր: Նա մի պահ ակնդէտ նայեց Եւայի աչքերի մէջ, որից աղ-
ջիկը սարսուռ զգաց, եւ արտաբերեց.

- Դա ձեզ չա՞տ է հետաքրքում:

Եւան գլխով արեց:

- Մենք ուսանողութեան տարիներից ճանաչել ենք իրար: Նա սովորում էր
երկրորդ, իսկ ես՝ վերջին քուրսում, երբ առաջին անգամ հանդիպեցինք,- կարճ
դադարից յետոյ պատասխանեց տղամարդը:

- Ուրեմն վաղուց սիրահարուած էք եղել...

Տղամարդը քմծիծաղեց. նա ակնյայտօրէն նեղւում էր խօսակցութեան նման
ընթացքից, բայց չէր կորցնում ինքնատիրապետումը: Աղջկայ հարցը մնաց

օգուտ կախուրած...

- Ամուսնացել:

- Ամուսնացել եմ,- ասաց նա ու չսպասելով աղջկայ յաջորդ հարցին՝ աւելացրեց,- ու բաժանուել: Դա՞ էիր ուզում իմանալ,- միանգամից «դու»ի անցնելով՝ հարցրեց նոյն քմծիծաղով:

- Հա: Իսկ ինչո՞ւ բաժանուելիք...

Տղամարդը ծիծաղեց:

- Չստացուեց,- կարճ ասաց նա,- ես սիրում եմ ձեր մօրը...

Մարտահրաւէր յիշեցնող, հատ-հատ ասուած բառերը շամփրեցին Եւային ու կնիքի շրխկոցով դաշուեցին նրա գիտակցութեան պաստառին: Նա բացուկութիւնով արեց բերանը, ուզեց մի բան ասել, բայց ոչինչ դուրս չեկաւ... Եւան զգում էր իր անգօրութիւնն ու պարտութեան դառը համը, բայց չէր ցանկանում տեղի տալ...

Մայրը, սկուտեղը ձեռքին, ներս մտաւ: Սենեակում տարածուեց սուրճի ու կոնեակի հաճելի բուրմունք: Եւան բարձրացաւ տեղից ու օգնեց մօրը, ընդ որում սուրճի գաւաթը տղամարդու առջեւ դնելիս կռացաւ՝ ցուցադրելով կրծքի բացուածքն ու իր արածի արդիւնքն իմանալու աշակերտական հետաքրքրութեամբ նայեց տղամարդու դէմքին. այնտեղ տեսաւ միաժամանակ նախատինք ու ներողամտութիւն՝ թաքցուած բարի կիսաժպիտի տակ: Մայրը լցնում էր կոնեակի բաժակները ու չնկատեց կամ չնկատելու տուեց աղջկայ շարժումը:

Խօսակցութիւնը չէր ստացւում:

Հակառակ մօր ընդդիմութեանը՝ Եւան իր համար լցրեց կոնեակի նաեւ երրորդ բաժակը:

- Չգիտե՞ս՝ ինչքան եմ կարօտել մեր գինիներին ու կոնեակին,- թեթեւ օրօր-ւելով՝ ասաց նա.

- Կը հարբես, գինի էլ չատ խմեցիր,- զգուշացրեց մայրը:

- Չեմ հարբի, չէ...,- ասաց, մի կում անելով կոնեակից՝ ծամածռելով երեսն ու զգաց, որ գլուխը սկսուեց պտտուել,- չոր... չորս տարի ինձ չես ասել՝ էս արա, էն մի արա...: Թող...

- Եւա'...

Անուշադիր մօր սաստող կանչին՝ Եւան մի կերպ բարձրացաւ տեղից ու միացրեց նոր ձայնարկիչը: Հնչեց «Կարապի լծից» մի հատուած: Եւան, նախ դանդաղ, բայց յետոյ հագլիւ ոտքերի վրայ իրեն պահելով, սկսեց պարային շարժումներ անել: Յոգնածութիւնը, խմիչքի ազդեցութիւնն ու առաջին օրուայ ապրումները իրենց դրոշմն էին դրել աղջկայ շարժումների վրայ: Մայրը մօտեցաւ ու փորձեց նրան տանել իր սենեակը: Նա հրեց մօր ձեռքն ու շարունակեց պարել: Պարին համընթաց նա բացեց հերակալը. մագերի խիտ խուրճը թափւեց մերկ ուսերին: Ի զարմանս իրեն ու մօր՝ աստիճանաբար նրա շարժումները դառնում էին աւելի սահուն. յետոյ սկսեց պտոյտներ գործել ու այլեւս չկարողանալով պահել հաւասարակշռութիւնը՝ անսպասելիօրէն իրեն գցեց տղա-

մարդու գիրկը, ծնկները հաւաքեց փորի մէջ, արմունկներով օղակեց տղամարդու առնական վիզը ու դէմքը հպեց նրա սափրուած ողորկ այտին: Տղամարդուց գալիս էր օծանելիքի ու ծխախոտի հաճելի հօտ:

- Հայրի՛կ, իմ սիրելի՛, նո՛ր հայրիկ,- բացայայտ հեզնանքով, ջղագար ձայնով կրկնում էր նա՝ աւելի ամուր սեղմուելով տղամարդուն:

Մայրը չչմած ու լուռ նայում էր. ասես չէր ճանաչում իր հարազատ դստերը...

Տղամարդը զգուշօրէն հեռացրեց աղջկայ ձեռքերն իր պարանոցից ու գրկից իջեցնելով՝ նստեցրեց բազկաթոռին:

- Հայրի՛կ..., իմ նո՛ր հայրիկ,- մրմնջում էր նա ջղագրգիռ...

- Ես գնամ, բարի գիշեր,- ասաց տղամարդը:

- Բարի գիշեր,- ասաց կինը եւ նրան ուղեկցեց մինչեւ դուռը:

Եւան մի պահ ցաւով զգաց իր ներկայացման անհեթեթութիւնն ու լրբութիւնը: Նա, այլեւս չկարողանալով զսպել իրեն, սկսեց լացել: «Ես սիրում եմ քո մօրը», - սենեակում տարածուած երաժշտութեան կշռոյթի հետ անդադար կրկնում էր այս բառերը եւ շարունակում էր հեկեկալ...: Արցունքի իւրաքանչիւր կաթիլի հետ մեղմանում էր լարուածութիւնը. Եւան սկսում էր հանդարտւել ու վերագտնել իրեն: Մայրը մօտեցաւ ու նստելով բազկաթոռի թիկնակին՝ սկսեց գորովալից շոյել նրա երկար վարսերը:

- Եւա՛, սիրելի՛ս...

- Մա՛, ա՛խ, մա՛, ների՛ր ինձ..., - ասաց Եւան ու փաթաթուեց մօրը:

Մօրից առաւ տղամարդու ծխախոտի ու օծանելիքի հաճելի բոյրը...

Հոկտեմբեր, 2010

Էսլինգէն, Գերմանիա

ԱՐԹՈՒՐ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՏԵՂԱԲՆԻՔ Է, ԱՐԴԵՕՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԸ,
«ԷԹՆՈՍ»Ը, ԿԱՄ՝ ԲԱՌ ԿԱՅ
ՈՐ ԱՇԽԱՐՀ ԱՐԺԷ

Հասկանալի է, որ 14.5 հազարամեակ առաջ գետը Հրազդան անուանած լեզուն հայերենն է, իսկ այդ լեզուն կրողը՝ հայ ժողովուրդը: Յետպատերազմեան երկրաբանական ճշգրիտ տուեալների հիման վրայ, կառուցուած այս փաստարկը հայերիս ծագումնաբանութիւնը տանում է անյիշելի ժամանակներ. բառ կայ, որ աշխարհ արժէ:

Կարճառօտ այս յօդուածում չի վիճարկուում, առաւել եւս քննութեան չի առնուում հայ ազգի, «էթնոս»ի, տեղաբնիկ լինելու հարցը: Յօդուածում փաստարկուում է, որ հայկական «էթնոս»ը դեռեւս անյիշելի ժամանակներում տեղաբնիկ էր Հայկական Լեռնաշխարհի հիւսիս-արեւելքում, ապա եւ ողջ Հայկական Լեռնաշխարհում: Արդէն իսկ վարկածային սոյն դրուագների բացայայտման բանալին է Սեւանայ լճի երկրաբանական փոփոխութեան պարզաբանումը, ինչպէս նաեւ Հրազդան գետանունը:

Ինչպէս յայտնի է, Սեւանայ լիճն առաջացել է հրաբխային արտավիթումների եւ լաւային պատուարի գոյացման հետեւանքով: Նրան շրջափակող Արեգունի, Սեւանի, Վարդենիսի, Գեղամայ եւ Փամբակի լեռնաշղթաներն աստիճանաբար բարձրացել են եւ ստացել ժամանակակից պատկերը: Երկրաբաններն այս հնագոյն լիճն ու նրանից սկիզբ առնող Հրազդան գետը պայմանականօրէն անուանում են նաեւ պալէոսեւան եւ պալէոհրազդան, քանզի, ըստ էութեան, հենց նրանց տարածքում են առաջացել «նոր լիճ» ու «նոր գետ»:

Մինչեւ Արարատեան դաշտավայր հասնելը Հրազդանը հոսել եւ հոսում է «տեկտոնական» (tectonique) ճեղքուածքով, տեղ-տեղ 100 եւ աւելի միթր խորութեան հասնող կիրճով:

Ինչպէս նշուեց, Սեւանայ լիճը պարփակուած է հինգ հոծ լեռնաշղթաներով, որոնց պարագծում եւ ողջ ջրաւազանում երկրաբանական Չորրորդական շրջանից ի վեր ամենացածր գոգաւորութիւնը բաժին է ընկնում Փամբակի եւ Գեղամայ լեռնաշղթաների միջանկեալ հատուածին: Վերջինս ծածկուել է հրաբխային նորագոյն ժայթքումների ու լաւային գոյացումների զանգուածային շերտով՝ մօտաւորապէս 14.5 հազարամեակ առաջ: Գոգաւորութեան բարձրացման հետեւանքով, բնականաբար, բարձրացել է լճի մակարդակը, եւ նոյն հատուածից սկիզբ առնող գետը վերստին հոսել է հին «պալէոհոսնով», քանի որ գոգաւորութիւնը բարձրացումից յետոյ էլ մնացել է լճի աւազանի ամենացածր հատուածը:

Հենց այս ժամանակ սկսւում է այն իրողութիւնը, որին պէտք է կառչի հալադիտութիւնը:

Ինչպէս յայտնի է, գետն ունեցել է մի քանի անուանումներ, որոնցից առաջինն ու վերականգնուած վերջինը Հրազդանն է:

Կարեւոր ու խիստ հետաքրքրական է սոյն ջրանուան ստուգաբանութիւնը, որի երեք բաղադրիչները պատմաերկրաբանական պատկերը ներկայացնում են ամբողջութեամբ: Ստորեւ ներկայացուող այդ բաղադրիչները միանգամայն մեկնելի են ու հասկանալի հայերէնով եւ հնդեւրոպական լեզուներով:

Եւ այսպէս՝ Հրազդան...

Հուր - ըստ Աճառեանի, բնիկ հայերէն բառ է, որ ծագել է հնդեւրոպական նախալեզուի Պուրո-կրակ ձեւից: Ցեղակից բառերն են յունարէն՝ Պիռ, լատիներէն՝ Ուռ, հին պարսկերէն՝ Հուռ, գերմաներէն՝ Ֆեուեր, հին ֆրանսերէն՝ ֆեուր, քրդերէն՝ Ուր-կրակ նշանակութեամբ, եւ բոլորն էլ, հայերէնի հետ համեմատած, առաւել ուշ շրջանի կազմութիւններ են:

Ազ (Ազն) - ազգ, սերունդ, ցեղ, ծագում նշանակութեամբ, օրինակ, Թագաորազն, արքայազն, իշխանազն, դիւցազն, երկազն, Հայկազն եւ հայկազն՝ հնդեւրոպական Զան-ծնել արմատից, որի ցեղակից բառերն են իրան. Զանա, յուն. Գնոս, լատ. Գնս, Գնուինոս - ծնունդ, ծագում նշանակութեամբ, դրանից էլ վրաց. փոխառութեամբ Ազնաուրի՝ Թամարա Թագուհու արքունիքում ազնական ծագումով հայ ազատանի կամ ազնուական նշանակութեամբ:

Դան - ըստ գերմանացի նշանաւոր լեզուաբան Մաքս Ֆասմերի, հնդեւրոպական նախալեզուում, վեդո կամ դոն-գետ, ջուր, որից էլ Դոն գետանունը, նոյնի յունարէնը՝ Տանայիս Հերոդոտոսի եւ Ստրաբոնի երկերում, զենդ Ավեստայի դանու-գետ, որից՝ Դանուք, Դունայ գետանունները հնդեւրոպական լեզուներում, օտերէնում՝ դոն, դան (վերջինը հիւսիսային բարբառով) - գետ, սանսկրիտ Ուդա-գետ եւ այլն:

Ստացւում է, որ Հրազդան՝ Հուր-ազ(ն)-դան ջրանունը - հիդրոնիմը - նշանակում է հրից, իմա՝ հրաբխից ծագած ջուր կամ գետ: Անուանումը միանգամայն համապատասխանում է երկրաֆիզիքական անցեալ իրադարձութիւններին: Նման անուանումը կարող էր տալ միայն այն ժողովուրդը, որն ականատեսն էր եղել 14.5 հազարամեակ առաջ տեղի ունեցած հրաբխի ժայթքումին, իսկ այնուհետեւ՝ այդ նոյն փակուղուց գետի նոր ելքին:

Անշուշտ, երեւոյթն ունեցել է նաեւ աղէտաբեր հետեւանքներ, որի պատճառով այն դաջուել է տեղաբնիկ ժողովրդի յիշողութեան մէջ, ջրանուան միջոցով փոխանցուելով սերունդէ սերունդ:

Հասկանալի է, որ 14.5 հազարամեակ առաջ գետը Հրազդան անուանած լեզուն հայերէնն է, իսկ այդ լեզուն կրողը՝ հայ ժողովուրդը:

Հայ ժողովրդի տեղաբնիկութեան մասին վաղուց ի վեր որեւէ կասկած գոյութիւն չունի, քանզի ապացուցուած իրողութիւն է, սակայն յետպատերազմեան երկրաբանական ճշգրիտ տուեալների հիման վրայ կառուցուած սոյն փաստարկը հայերիս ծագումնաբանութիւնը տանում է անյիշելի ժամանակներ:

Բառ կայ, որ աշխարհ արժէ:

Երեւան

«ՂԱՐԱԲԱՂ» ԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ

Սոյն յօդուածը գրուել է դեռեւս 1997թ. եւ արժանացել հայ մեծ լեզուաբան՝ ակադ. Գէորգ Զահուկեանի դրուատանքին:

Նոյն՝ 1997թ. Երեւանում հրաւիրուել էր «Պարմանի» համահայկական ուսանողական երկրորդ վեհաժողովը, որի մասնակից մեր երիտասարդների նախաձեռնութեամբ յօդուածը տարածուել էր հայկական գաղթօջախներում եւ տպագրուել սփիւռքահայ բազմաթիւ թերթերում ու հանդէսներում:

Հայրենիքում, սակայն, այն տպագրուեց աւելի ուշ՝ 1999թ. Երեւանի «Երկիր» օրաթերթում, իսկ 2004թ.՝ Ստեփանակերտի «Լուսարար» շաբաթաթերթում:

Կարծում ենք յօդուածի լրացուած ու նորացուած տարբերակի վերահրապարակումը ներկայումս կարեւոր է ու տեղին, քանզի հայրենական պետական դէմքերը, ինչպէս նաեւ սփիւռքահայ շահագրգիռ կազմակերպութիւնները, որ մինչ օրս ուշադրութեան չէին արժանացրել պատմական այս իրողութեանը՝ օտարին ներկայացնելու սոյն հնարաւորութիւնը, յուսանք որ այն, ըստ պատշաճի, կ'օգտագործուի:

Հարկ է արժանին հատուցել եւ ըստ պատշաճի օգտագործել թշնամուն դիմակայելու ցանկացած միջոց ու հնարաւորութիւն:

Հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնից յետոյ Լենինի եւ Թուրքական կառավարութեան (1918թ.), այնուհետեւ՝ Մուսթաֆա Քեմալի (1920թ.) փոխհամաձայնութեամբ ստեղծուեց արհեստական մի պետութիւն, հետեւաբար՝ ազգ, որոնց պայմանականօրէն անուանեցին Ադրբէջան (Ատրպատականի արաբերէն արտաբերմամբ) եւ ադրբէջանցի:

Ադրբէջանը խորհրդային տիպի, այսինքն՝ «սոցիալիստ»ական «մինի» կայսրութիւն էր: Ադրբէջանը, պարսկերէն՝ Ատրպատականը՝ Իրանի ծայրագաւառներից մէկի սոսկ վարչական անուանումն է, հետեւաբար, ներկայիս «Ադրբէջան» անուանումն ակնյայտօրէն շինծու է:

Ընդհանրապէս, ադրբէջանցի կոչուած ժողովուրդը, ազգագրական («էթնիկ»ական) իմաստով, երկրագնդի վրայ գոյութիւն չունի եւ չի էլ ունեցել: Անգամ եթէ նկատի ունենանք զուտ պարսկական հանգամանքը, յունական այդ եզրը կապուում է Ալեքսանդր Մակեդոնացու զօրավար Ատրոպատոսի անուան հետ, որն այնուհետեւ դառնալով Ալեքսանդրի կայսրութեան այդ հատուածի տիրակալը, իր անուամբ կոչեց այն: Իսկ ներկայիս Ադրբէջանի հանրապետութեան տարածքում դեգերող ցեղախումբը կամ ժողովուրդը դարասկզբին կոչւել է անդրկովկասեան թուրք կամ անդրկովկասեան թաթար՝ չչփոթելու համար թուրքերի կամ թաթարների հետ:

Այսպիսով, այդ ցեղը կամ ժողովուրդն ունի երեք գուգահեռ անուանում, որոնցից եւ ոչ մէկն իրեն չի պատկանում՝ ո՛չ թուրք, ո՛չ թաթար, ո՛չ, առաւել եւս՝ ադրբէջանցի:

Սոյն ժողովուրդը տարածաշրջան մուտք է գործել վերջին հարիւրամեակներին եւ, տեղի հետ ոչ մի կապ ու առնչութիւն չունենալով, ջանում է տեղաբնիկ ժողովուրդների ազգագրական («էթնիկ»ական), հոգեւոր ու նիւթական մշակոյթը, տարածքը իւրացնել կեղծիքների եւ պատմական փաստերի աղաղակող աղաւաղումների միջոցով: Չէ՞ որ ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան տարածքի զգալի մասը պատկանել է Կովկասեան Ալբանիային (Ադուանք): Վերջինիս կազմի մէջ մտնող մօտ երկու տասնեակ մեծ ու փոքր ժողովուրդների բեկորները (մի մասը ՌԴ-ի Դաղստանի ինքնավար հանրապետութեան տարածքում) ներկայումս գոյատեւում են որպէս «լեռնային» կամ «ոչ լեռնային» ադրբեջանցի: Նրանց պապենական տարածքն ու մշակոյթը բռնաբարուած է ու անարգուած «ադրբեջանցիների» կողմից:

Նոյն եղանակով արդէն 90 տարի շարունակ Ադրբեջանի Հանրապետութեան գիտնականներն աճաբարութեան են ենթարկում Ղարաբաղի ու նրա տեղաբնիկ հայ բնակչութեան հնադարեան մշակոյթը, կատարում «յայտնագործութիւններ»՝ ապաւինելով արեւմտեան բարեացակամութեանը:

Աւելորդ է յիշել, որ այդ ժողովրդի, աւելի ճիշդ՝ անանուն ժողովրդի, լեզուով գրաւոր առաջին յուշարձանը պատկանում է 17-րդ դարավերջին եւ 18-րդ դարասկզբին, իսկ սեփական գրեր ստեղծել են սոսկ 20-րդ դարի առաջին քառորդում:

Արդէն 20-րդ դարասկզբին Ղարաբաղ տեղանունը դարձաւ քաղաքական շահարկումների առարկայ, քանի որ այն պատահականօրէն նմանում էր թուրքերէն սեւ (կարա, դարա) եւ այգի (քաղ) բառերին:

Պատմագիտական եւ աղբիւրագիտական բազմաթիւ նիւթեր վկայում են, որ Ղարաբաղի տարածքն ունեցել է հայերէն երկու զուգահեռ անուանումներ, վարչատարածքային Արցախ եւ ազգագրական («էթնիկ»ական)՝ Ղարաբաղ: Անուանումների նման զուգորդումը միանգամայն բնական ու սովորական է համաշխարհային սովորութիւններում, եւ կարեւորը ազգագրական Ղարաբաղ անուանումն է, որը համեմատական լեզուաբանութեան հիման վրայ ուսողական ճշդութեամբ մատնացոյց է անում տարածաշրջանի տիրոջ՝ տեղաբնիկ ժողովրդին:

Այդ առումով «ադրբեջանցի» ժողովրդին կը դիմէի այսպէս. «Ով անանուն մեր հարեւան, ասա անունդ, եւ ես կ'ասեմ, թէ որտեղ է քո հայրենիքը, կամ՝ ասա, թէ ո՞րն է հայրենիքդ կ'ասեմ կամ կը յօրինեմ անունդ»:

Ղարաբաղ տեղանունն տարրերը առկայ են ու բացայայտ հնդեւրոպական լեզուներում եւ յատկապէս՝ հայերէնում, որից ինքնըստինքեան, հետեւում է, որ տարածաշրջանի տեղաբնիկ տարրը պէտք է հանդիսանայ հնդեւրոպական եւ ոչ թէ թուրքական ազգագրական միաւոր:

Ղարաբաղ տեղանունն առաջին անգամ յիշատակուել է արաբ պատմիչի կողմից 1319 թուականին. նրան հետեւել է հայ պատմիչ Թովմա Մեծփեցին՝ նոյն դարավերջին, իսկ 15րդ դարասկզբին՝ պարսիկ պատմիչ Ղազուինը: Եւրոպացիների կողմից առաջին յիշատակութիւնը պատկանում է 19րդ դարի ուսս (ազգութեամբ ֆրանսիացի) ճանապարհորդ Շոփէնին:

Իսկ ի՞նչ անուանում է ունեցել վերոյիշեալ տարածաշրջանը մինչեւ 14րդ դարը, այսինքն՝ արաբական առաջին յիշատակութիւնը: Ինչպէս կը տեսնենք, հազարամեակների ընթացքում անուանափոխութիւն տեղի չի ունեցել: Պարզապէս Ղարաբաղ տեղանունը հայոց լեզուի հետ միաժամանակ կրել է զարգացման անկասելի ու միանգամայն բնականոն փոփոխութեան հազարամեակների կնիքը: Բայց եւ պէտք է ընդգծել, որ լեզուաբանութեանը յայտնի են նմանատիպ բազմաթիւ փաստեր, երբ միմեանց հետ ոչ մի առնչութիւն չունեցող, տարբեր լեզուաընտանիքներից պատկանող լեզուների առանձին բառեր երբեմն ունենում են արտաքին պատահական նմանութիւն, թէւ իմաստային կապ գոյութիւն չունի:

Ղարաբաղ տեղանունը հեշտութեամբ ստուգաբանութեամբ է հայերէնով եւ հնդեւրոպական մի շարք լեզուներով՝ կապ չունենալով թուրքական լեզուաընտանիքի որեւէ լեզուի հետ:

Եզրի («տերմին») բաղկացուցիչ մասերն են՝ դարա եւ բաղ արմատները:

Սկսենք բաղ-ից:

Յիշեցնենք, որ հայոց լեզուի Ղ հնչոյթը համապատասխանում է հնդեւրոպական Լ հնչոյթին, թէեւ յայտնի է նաեւ, որ մինչամաշտոցեան շրջանում մեր լեզուում այդ Ղ-ն ընդհանրապէս բացակայել է:

Հայ ժողովուրդը, ինչպէս եւ ցանկացած ժողովուրդ, բաղկացած է ազգագրական տարրերից, մեր պարագայում՝ հայասացիներից, արմէններից եւ այլն: Հայկական ազգագրական կարեւոր այդ տարրերից բացի, մէկն էլ բալայի (բալայ, բաղայ) ցեղախումբն է: Վերջինիս ցեղանունը պատմական Հայաստանի Մեծ Հայքի տարածքի գրեթէ բոլոր 15 աշխարհներում (նահանգներում) թողել է հարիւրաւոր տեղանունական հետքեր: Թուարկենք դրանցից մի քանիսը՝ Բալու, Բալախովիտ, Բաղէշ, Բաղաց Տուն, Բալալէոն, Բալաց (նաեւ՝ Բաղաց) սար, Բալուլ, Բալուկ, Բալաքոյրուկ եւ այլն: Ղարաբաղը կոչուել է նաեւ Բաղք, որպէս 15 աշխարհներից մէկի զուգահեռ անուանումը: Այստեղ Ք մասնիկը ցոյց է տալիս որեւէ ցեղախմբի կամ ժողովրդի հաւաքականութիւն, ինչպէս նաեւ նրա զբաղեցրած տարածքը (օրինակ՝ վիրք նշանակում է վրացիներ, իսկ Վիրք՝ Վրաստան եւ նոյն ձեւով աղուանք ու Աղուանք, փխազք ու Ափխազք եւ այլն), իսկ գրաբարեան սեռական հոլովով՝ Բաղաց աշխարհ (համապատասխանաբար՝ Վիրաց կամ Վրաց երկիր, Աղուանից երկիր եւ այլն)՝ արմատական նոյն եզրով:

Յիշարժան է, որ Բալու քաղաքի եւ Բալա ցեղանունն միջեւ ընդհանրութիւնն առաջին անգամ նկատեց Ջոն (Կարստոնը) դեռեւս 1923 թուականին, իսկ 1947թ. Գրիգոր Ղափանցեանն իր «Հայասան՝ հայերի բնօրրան» աշխատութեան մէջ հարեւանցիօրէն է անդրադառնում նոյն խնդրին: Յաւօք, հայագիտութիւնն այլեւս չանդրադարձաւ դրան: Դեռ աւելին՝ որոշ հայ գիտնականներ գտնում են, որ իրականութիւնից պէտք է ջնջել օտարածին Ղարաբաղը եւ ոգեկոչել ու որդեգրել միայն Արցախը:

Հայերէնում բալ եւ բաղ արմատներով ազգագրական (էթնոկազմական) հազարաւոր բառեր են պահպանուել, որոնք այգի հասկացութեան հետ չունեն որեւէ առնչակցութիւն:

Իսկ Ղարաբաղ տեղանուն միւս՝ «ղարա» (կարա) մասնիկը, որպէս արմատական բառ, պահպանուել է հնդեւրոպական մի շարք՝ ալբաներէն, պարսկերէն, լատիշերէն, լիտուներէն, լատիններէն ու, վերջինիս միջոցով, ռումանական որոշ լեզուներում:

Հին յունարէնում ունեցել է գլուխ, գլխաւոր, ղեկավար իմաստը, որը եւ տարածուել է սլաւոնական որոշ լեզուներում, օրինակ՝ բուլղարերէնում, սլովներէնում (դա ակնյայտ է անգամ սլովենական վաղ ֆէոդալական Կարատանիա կոչուած պետութեան անուն մէջ՝ 7-11-րդ դդ. սկիզբ, երբ թուրքերը դեռեւս մոտաք չէին գործել տարածաշրջան): Կարատանիա-ի մէջ կարա-ն յատկօրէն ցեղախումբ եւ ժողովուրդ իմաստն ունի, իսկ տան(իա)-ն հնդեւրոպական վեդօ, դոն, որից յուն. տանայիս՝ գետ, ջուր իմաստով է (նաեւ՝ Դոն գետի հնագոյն անուանումը): Այսինքն՝ Կարատանիա-ն գետերի ժողովուրդ կամ գետերի երկրի ժողովուրդ իմաստն ունի, որից էլ հետեւում է նրանց ինքնանուանումը՝ կարատանիացիներ կամ կարատանցիներ:

Այդ առումով կարա-ն յատկապէս կարեւոր է հին հայերէնում՝ գրաբարում, հին ալբաներէնում, հին պարսկերէնում, որ սլովներէնին համահունչ՝ նշանակում է զօրք, զօրախումբ, բանակ, ցեղ, ցեղախումբ, ժողովուրդ կամ մարդկային որեւէ հաւաքականութիւն՝ տարբեր բառակապակցութիւններում:

Հայերէնում այն բազմիցս հանդէս է գալիս ճիշդ դարի առաջին իսկ գրաւոր աղբիւրներում, օրինակ՝ Աւետարանի առաջին թարգմանութեան մէջ, որտեղ Յովհաննէս Մկրտչի մասին կայ հետեւեալ արտայայտութիւնը. «Ով զօրաւոր սուրբ Կարապետ...»: Կարապետ այստեղ նշանակում է ցեղապետ, իսկ կրօնական իմաստով՝ հովուապետ: Բազմաթիւ օրինակներ կարելի է բերել բառաբարդութեամբ, օրինակ՝ նախակարապետ, կարապետել եւ այլն: Իսկ կարապետել, նշանակում է՝ ղեկավարել հօտը, ցեղը, ժողովուրդը կամ զօրքը:

Հետեւաբար, Ղարաբաղ՝ նշանակում է. ղարա(կարա) - ցեղ կամ ժողովուրդ, իսկ բաղ <բալ> - այլ՝ հայկական «էթնոս»ին պատկանող միաւոր, այսինքն՝ բալայիների ցեղ կամ ժողովուրդ: Ապա հետեւում է առաւել հակիրճ բառակազմական ձեւը՝ Բաղք-Բաղերի «Բալ-այի-ների» երկիր կամ նրանցով զբաղեցրած տարածք:

Վերոյիշեալ բառարմատներով կազմուած բառակապակցութիւնը, որ դարձել է տեղանուն, նոր չէ եւ աշխարհագրական սոյն միջավայրում հանդէս է եկել հազարամեակներ առաջ, երբ գոյութիւն չունէր ոչ թուրք, ոչ թաթար:

«Էթնո»կազմական գործընթացով պայմանաւորուած վերոնշեալ բացայայտումներն ակնյայտօրէն ցուցադրում են նաեւ ղարաբաղցիների շրջանում լայնօրէն տարածուած ազգանունները՝ Բալայան, Բալեան (նաեւ Բաղեան), Կարաբալեան (նաեւ Կարաբաղեան), Ղարաբաղցեան, Կարայան, Կարեան եւ այլն:

Անանիա Շիրակացին 7րդ դարում շարադրած «Աշխարհացոյցի» («Աշխարհագրութեան») մէջ Ղարաբաղի տարածքը յիշատակում է որպէս Բաղք, Բաղասական, Բալասական, Բաղաց աշխարհ: Մինչ այդ նոյն տեղանունական եզրերն օգտագործել է ճիշդ դարի պատմիչ Մովսէս Խորենացին իր «Պատմութիւն հայոց»ում: Աւելի վաղ՝ 2րդ դարի յունահռոմէական աշխարհագրագէտ Կլաւդի-

ոս Պտղոմէոսն իր «Աշխարհագրութեան» 5րդ գրքում Ղարաբաղն անուանել է Կարաբալլա: «Աղբբեջանցիները» սոյն յիշատակումներից առնուազն մէկ կամ մէկուկէս հազարամեակ յետոյ պէտք է յայտնուէին:

Ղարաբաղ-Արցախը, ինչպէս նշուեց, հանդիսացել է Մեծ Հայքի ծայրագաւառը՝ ծուարած բարձր լեռներում ու յարակից հովիտներում: Իր գոյութեան ողջ ընթացքում դեռեւս ոչ ոքի չի յաջողուել ծնկի բերել Ղարաբաղցիներին եւ կոտրել նրանց ազատասիրական ոգին: Մշտապէս գէնքը ձեռքին՝ նրանք պաշտպանել են իրենց կեանքն ու արժանապատուութիւնը:

Օտար նուաճողները, հաշտուելով սեփական պարտութեան հետ, Ղարաբաղին շնորհել են անկախ կամ կիսանկախ կարգավիճակ՝ հարկ հաւաքելու, դրամ հատելու, գէնք կրելու եւ զօրք ունենալու արտօնութեամբ, որից զրկուած էին Հայաստանի գրեթէ միւս բոլոր աշխարհներն ու գաւառները:

Մինչեւ 19րդ դարասկիզբը Ղարաբաղում պահպանուել էին հայկական 5 իշխանութիւնները՝ Գիւլիստանում, Խաչէնում, Ջրաբերդում, Վարանդայում եւ Դիզակում, որոնք միասնաբար կոչւում էին Խամսայի Մելիքութիւններ (արաբերէն բառացի՝ հինգ իշխանութիւն):

Ղարաբաղը հնուց ի վեր եղել է հայ ազատագրական շարժման միջնաբերդը: Այդ շարժումները գաղափարախօսական եւ ռազմավարական առումով սկսուել են հենց Ղարաբաղից:

Մէկ անգամ եւս բռնակցելու մարմաջով համակուած մեր ժողովրդի «ինտերնացիոնալիստ բարեկամները» նպատակաուղղուած են գործել՝ չէզոքացնելու Ղարաբաղցիների եւ ողջ հայ ժողովրդի ազատասիրական ոգին, գէնքով կռուելու եւ պայքարելու կորովը:

Կարգախօս չէ, թէեւ կրկնում ենք, որ Ղարաբաղցուն ոչ ոք չի յաղթել, անգամ 1920-1921թթ. մինչեւ ատամները գլինուած 11րդ Կարմիր բանակի զօրամասերը, մոսաւաթական աւազակախմբերի հետ համատեղ, որոնց թուակազմը Ղարաբաղի այն ժամանակուայ բնակչութեան համեմատ զգալի թիւն էր կազմում, չյաղթեցին: Այն ծանր կացութեան մէջ Ղարաբաղցիները գէնքը վայր դրեցին՝ աւելորդ արիւնահեղութիւնից խուսափելու համար միայն:

Ղարաբաղի բնակչութեան 95-97 տոկոսը մշտապէս կազմել են հայերը, իսկ նրա վարչական կենտրոն Շուշին մինչեւ Առաջին Աշխարհամարտը հանդիսացել է Անդրկովկասի միատարր հայաբնակ ամենախոշոր քաղաքը:

Ղարաբաղի տարածքում պահպանուել են մի քանի հազար պատմամշակութային յուշարձաններ, այնինչ՝ «աղբբեջանական» յուշարձանները ընդամէնը մի քանի միաւոր են կազմում եւ պատկանում են վերջին 100-150 տարիներին:

Քաջարի Ղարաբաղցիները տուել են համամարդկային ընդգրկման բազմաթիւ մեծութիւններ՝ գիտնականներ, արուեստագէտներ: Սակայն նրանց շարքում մեծ թիւ են կազմում զինուորականները եւ ռազմական գործիչները: Յայտնի է, որ Նափոլէոնի մերձաւոր ու քաջարի համհարզ Մամլուկ Ռոստանը (Ռոստոմ) եւ Ֆելդմարշալ Մուրատը Ղարաբաղցի հայեր են:

Ղարաբաղը տուել է նաեւ խորհրդային երեք մարշալ՝ Յովհաննէս (Իւան) Բաղրամեան, Արմենակ Խուդեակով-Խանփերեանց, Համազասպ Բաբաջան-

եան, մի քանի տասնեակ զօրավարներ ու հերոսներ, մօտ 45 հազար զինուոր, որոնք Փաշիգմի դէմ մղուած համամարդկային պայքարում պատկառելի ներդրում ունեցան:

Ներկայիս «ադրբեջանցի» կոչուած ժողովուրդը երբեւէ պետականութիւն չի ունեցել եւ ծնունդն է ու հետեւանքը «Չարեաց կայսրութեան»՝ Խորհրդային Միութեան:

Յաղթողի իրաւունքով եւ պատմական արդարութեան դրօշի ներքոյ, Ղարաբաղը վաղուց ի վեր ինքնիշխան է: Ինչո՞ւ նա պէտք է հանդէս գայ հայցողի դերում: Անցեալում մէկ անգամ արդէն՝ մօտ 100 տարի առաջ, ռազմի դաշտում յաղթելով, պարտուել ենք դիւանագիտօրէն եւ տարածքներ զիջել պարտուածին: Մեր պատմութեան աննախագէտ սոյն դրուագը չպէտք է կրկնուի: Մի՞թէ 130-ամեայ վաղեմութեան բեռինեան Վեհաժողովից դաս չենք առել:

Համաշխարհային հանրութեանը ճշմարտութիւնը, եւ այն էլ մեր ճշմարտութիւնը, ներկայացնելը սարսափելի դժուար խնդիր է՝ ի դէմս շահագրգիռ կեղծիքի: Սակայն հզօրագոյն կեղծիքների դէմ կռուելը, այն էլ գաւառական գերանդիներով, մեղմ ասաց, անլուրջ զբաղմունք է:

Վերջապէս օգտագործենք եւ վերոնշեալ ճշմարտութիւնը, ե՛ւ յաղթանակի գերհզօր գործօնը:

Մենք յաղթել ենք անհամար զոհերի արեան գնով, եւ մե՛նք պէտք է թելադրենք պարտուածին...

Երեւան



ՄԵՐԻ ՀԵՐՈՒՆԻ-ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆԸ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ

Հին լեզուները փոշոտ հայելիների նման արտացոլում են վաղնջական ժամանակների մարդկային կապերի ու առնչությունների աղօտ ուրուագծերը: Հազարամեակների ընթացքում պետութիւններ են գոյանում ու կործանուում, սերունդներ են փոխուում, իսկ լեզուներում ընթացող փոփոխութիւնները շատ աւելի պահպանողական են ու դանդաղ: Մենք չենք զգում լեզուում կատարուող փոփոխութիւնները, լեզուն, հիմնականում, օգտագործում ենք ինքնաբերաբար, այնպէս, ինչպէս օդն ենք շնչում, ինչպէս ջուրն ենք խմում: Իսկ լեզուներն ապրում են իրենց կեանքով: Նրանք կենդանի չեն, բանական չեն, բայց զարգացնում են մեր բանականութիւնն ու յիշողութիւնը, ձեւաւորում մեր մտքերը: Մարդկանց յաջողուած ամենաբարդ գիտերը կարող են կայանալ միայն յենուելով նախորդ լեզուական ձեւակերպումների վրայ: Նրանք մասնագիտական նախանկարներն են, որ գումարուելով մարդկանց յիշողութեանն ու հանճարին, թոյլ են տալիս ձեւակերպել ու իրար հաղորդել մարդկային ուղեղի նորանոր նուաճումները:

Լեզուները «յիշողութիւն» ունեն: Երբեմն մարդիկ իրենց առօրեայից հանում ու դուրս են նետում որոշ գաղափարներ, բայց դրանց անուանումները մնում են լեզուների մէջ որպէս ժամանակաւորապէս չօգտագործուող, յետոյ, մէկ էլ տեսար, նորից վերադառնում են ու գործածելի դառնում: Օրինակ, ստիպողական անաստուածութեան տարիներին «հոգի» բառը ընդունուած չէր օգտագործել իր ուղիղ իմաստով: Տարածուած դարձուածքներում (հոգիս դուրս եկաւ, հոգիս հանեցին, հոգատուն, հոգեհանգիստ, հոգեհաց եւայլն) այս բառի իմաստն ընկալուում էր խորհրդանշական: Ուղղակի լեզուն յիշում էր դարձուածքները, նրանք ունէին որոշակի ճշգրտած նշանակութիւն, այդ պատճառով էլ օգտագործուում էին, չնայած տիրող գաղափարախօսութիւնը հերքում էր հոգու առկայութիւնը: Բայց լեզուն մի բան «գիտէր», մի բան «յիշում» էր, քանի որ մի ինչ-որ ժամանակ այդ բառը մարդիկ անհրաժեշտաբար ստեղծել էին: Մարդիկ էլ օգտագործում էին այդ դարձուածքները որպէս թեւաւոր խօսք, ոչ ոք ուշ չէր դարձնում այն բանին, որ սրանից գոյացած հոգատար, հոգեգմայլ, յոգնութիւն, (բնագրին մէջ գրուած է և տառով, ուղղագրութեան փոփոխման հետեւանքով չեղտելով չփոխները - Բ.) հոգեակ եւ շատ այլ բառեր այս արմատով «թոյլատրելի» էին ու վնաս չէին տալիս գաղափարախօսութեանը:

Լեզուի յիշողութիւնը շատ հետաքրքիր գիտական առարկայ է, որովհետեւ

կարող է պարունակել այնպիսի իրադարձությունների վկայություններ, որոնց մասին պատմությունը չի գրել:

Հին ժամանակների գաղտնիքները բացայայտող բազմաթիվ նիւթերում հանդիպում են անուանումներ, որոնք անսպասելի կերպով ուղղակի հայերէն են հնչում, նրանց արմատները ստուգաբանում են հայերէն: Երբ փորձում ենք այդ բառերը ստուգաբանել այն երկրի լեզուով, ուր գտնուում են այդ յուշարձանները, պարզուում է, որ անուանումներն այդ երկրի լեզուի հետ կապ չունեն եւ իրենց լեզուով թարգմանելի չեն: Օրինակ, Կասպից ծովի հին անուանումը կարգացի մի հին քարտէզի վրայ: Այնտեղ ռուսերէն գրուած էր «GIRKANSKOYE MORE»: Ոչ ռուսերէնով, ոչ էլ մի որեւէ այլ լեզուով այս բառը չի ստուգաբանուում, այնինչ եթէ հայերէն ասենք Գրկանայ ծով, անմիջապէս կը հասկանանք, որ խօսքը գնում է մի հսկայ լճի մասին, որն իր մեծութեամբ ծով է, բայց ելք չունի դէպի ովկիանոս, որովհետեւ գրկուած է ցամաքով:

Մեր լեզուն պարունակում է պատմութեան գրքերից դուրս մնացած տեղեկություններ, անհերքելի վկայություններ հազարամեակների ընթացքում աշխարհի տարբեր ծայրերում հայերի ներկայութեան ու վճռորոշ դերի մասին մարդկութեան զարգացման ակունքներին:

Խօսքը վերաբերում է այնպիսի բառերի, բառարմատների մասին, որոնք վաղուց ի վեր գոյություն ունեն բազում լեզուներում, այդ լեզուների կրողները վաղուց ընտելացել են դրանց, դարեր շարունակ օգտագործում են, բայց ոչ իրենց լեզուով են կարողանում ստուգաբանել, ոչ էլ յիշում են, թէ երբ եւ որ լեզուից են դրանք փոխառուած: Հայոց լեզուի հարստութեան ու հնութեան մասին է վկայում նրա բուն սեփական արմատների ահռելի թիւը՝ 10 հազարից աւելի, որովհետեւ հայերը առաջինն են եղել, առաջին արիացիները եւ ստիպւած են եղել առաջին անգամ անուանել շրջակայ իրերը, ստեղծել նորերը ու դրանք էլ անուանել: Հետագայում ծագած ցեղերն ու ազգերը, յատկապէս շատ երիտասարդ ազգերը, արդէն կարողացել են իրենց լեզուները զարգացնել փոխառումների հաշուին, հին լեզուների օրինակով կառուցել իրենց լեզուների քերականությունը:

Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հայերէնի բառարմատները կարելի է գտնել վաղընջական, արդէն մոռացուած ժամանակներում մարդկանց կատարած գործերի հետ կապուած անուանումներում: Հնում էլ մարդիկ ձգտել են իմանալ բնութեան գաղտնիքները, չափազրել Երկրագունդը, ստեղծել օրացոյց, թափանցել աստղերի ու մոլորակների շարժման գաղտնիքների մէջ, եւ այդ նրանց յաջողուել է: Ոչ ոք այսօր չի յիշում, թէ ովքեր են կառուցել երկրագնդի տարբեր մասերում գտնուող խորհրդաւոր հսկայ կառոյցները, որոնք այսօրուայ գիտնականները համարում են աստղադիտարաններ: Նրանք իմացել են, որ Երկիրը կլոր է:

Այժմ փորձենք կատարել տարբեր լեզուներից վերցուած եօթ հետեւեալ բառերի համեմատական ստուգաբանությունը. **ՔԱՐԱՀՈՒՆՋ, ՍԹՈՈՒՆՀԵՆՋ, ՔԱԼԵՆԻՇ, ՔԱՐՆԱԿ, ԿԱԼԱԿՈԶԱ, ՎԻՐԱԿՈԶԱ, ԿԱԼԱՍԱՍԱՅԱ:**

ՔԱՐԱՀՈՒՆՔ

Ականաւոր գիտնական - ռադիոֆիզիկոս, ակադեմիկոս Պ. Հերոնու առաջարկով Հայաստանի Սիսիան քաղաքի մօտակայքում գտնուող հինաւուրց յուշարձանն անուանուել է Քարահունջ: Յուշարձանը բաղկացած է մեծ շրջան ու երկար թեւեր կազմող կանգնած քարերից, որոնցից շատերի վրայ անցքեր կան: Ակադեմիկոսը յայտնաբերել է, որ յուշարձանը կառուցուել է 7500 տարի առաջ, եղել է մեծ ու հզօր աստղադիտարան:

Քարահունջ անունը հնուց կրում են Հայաստանի եւ Արցախի երեք գիւղեր:

Քարահունջը բարդ բառ է, կազմուած է քար եւ հունք արմատներից: Հայերէնում քար արմատը շատ տարածուած ու օգտագործելի է բազմաթիւ բառերում, հայերէնից անցել է աշխարհի բոլոր լեզուները եւ կասկած չկայ, որ բուն հայկական արմատ է: Հունք բառը նոյնպէս բուն հայկական է, ինչպէս էլ որ ուզենանք այն վերծանել: (Յայտնի է, որ հայոց այբուբենը հարուստ է հնչեղանքներով: Եթէ շատ լեզուներում հնչիւնն ունի մէկ կամ երկու տառ, որոնց միջոցով արտաբերուում են հնչերանգները, ապա հայերէնը շուրջօրէն երեք եւ աւել տառ է մատուցում: Օրինակ, բ, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք, ջ, ճ, չ եւ այլն: Վերջին եռեակին նման են նաեւ ծ-ն եւ ց-ն): Հազարամեակների ընթացքում ջ-չ հնարաւոր հնչիւնափոխութեամբ այդ բառը կարող էր հնչիւն, կանչ, կոչ նշանակել, ինչպէս հիմա է նշանակում հունչ ձեւով: Եթէ արմատն ընդունենք հուն, ապա անդրադառնալով Հ. Աճառեանի «Արմատական բառարանին», կարդում ենք՝ ելք, հնարք, ճամբայ, անցք, բացուածք: Իսկ անհո՞ւն անվերջի իմաստով... Ունջ արմատն ըստ Հ. Աճառեանի խորք է նշանակում: Այսպիսով, ծագումնաբանական իմաստով կասկած չի մնում, որ հունքը նոյնպէս հայերէն բառ է: Բերուած այս բոլոր իմաստները շատ բանաստեղծականօրէն գալիս ու միաձուլուում են Քարահունջ անուան մէջ որպէս հազարամեակների խորքից հնչող, խօսող, կանչող քարեր, ելք դէպի անհունը մարդկային հնարքով, կոչ դէպի նոր հնարքների ճամբան: Մտածելու բան է:

ՍԹՈՈՒՆՀԵՆՔ

Այսպէս է կոչուում Անգլիայում գտնուող հանրայայտ յուշարձանը [3], որը ըստ անգլիացի գիտնականների, 4000 տարեկան է, սակայն նրանք ասում են, որ իրենց յայտնի չի, թէ ովքեր են այն կառուցել, քանի որ, իրենց ասելով, դա բերուած կուտուրա է, բայց իրենց յայտնի չի, թէ ում կողմից է բերուած: Կառույցը հսկայ քարերից է, բայց քարերն անցքեր չունեն: Ակներեւ է, որ Անգլիայում գտնուող յուշարձանի անուանումը նոյնն է ինչ որ է - վերցնել համազօր մեր Քարահունջին: Սթոուն նշանակում է քար, իսկ հենց բառ անգլերէնում չկայ: Սակայն այս հենջ-ը շատ նման է հունք-ին: Հենց-հունք-հունչ - նոյն բառն է, որը կարող է հազարամեակների ընթացքում մի քիչ փոփոխուել: Այսպիսով, Սթոունհենջը նոյն Քարահունջ բառն է:

ՔԱԼԵՆԻՇ

Շոտլանդիայի (Սկոտլոնդ) հիւսիս-արեւմուտքում, Հեբրիդեան կղզիներից մէկի վրայ, Քարահունջը յիշեցնող յուշարձան կայ, բայց աւելի փոքր է, կոչւում է Քալեմիշ: Նորից դիմենք հնչիւնաբանութեանը: Յայտնի է, որ լ, դ, ր, ու հնչիւնները նոյնն են համարւում: Այսպիսով, Քալեմիշ բառի առաջին արմատը նոյն քար-ն է, եթէ նշենք, որ դ, կ, ք տառերն էլ միեւնոյն հնչիւնն են արտայայտում, իսկ նիշ արմատը, կամ բառը նոյնպէս հայերէն է- նիշ նշան: Այսինքն Քալեմիշը կարող ենք կարդալ Քարենիշ, որն, ըստ ամենայնի, նոյնն է ինչ որ է Քարահունջը, որովհետեւ կառոյցներն են նման:

ՔԱՐՆԱԿ

Ֆրանսիայի հիւսիս-արեւմուտքում, Բրետանում նոյնպէս կան շատ կանգնած քարեր, (Թուագրուում են մ.թ.ա. 1876 թ.), որոնք, ինչպէս եւ մօտակայքում գտնուող քաղաքը, կոչւում են Քարնակ: Բրետոներէն Քարնակը Քարնիս է, ինչը վերը վերծանուած Քարեմիշն է, կամ Քարնիշը: Նոյն անունն է կրում Եգիպտոսում գտնուող Ամոն- Բա -ի հսկայ տաճարը եւ Եգիպտոսի հնագոյն աստղադիտարանը այժմեան Ասուան քաղաքի մօտ:

ԿԱԼԱԿՈՉԱ

Կենտրոնական Ամերիկայի Անդերում, Տիտիկակա լճի աւազանում մի հինաւուրց յուշարձան կայ, որը բաղկացած է շրջան կազմող մեծ քարերից: Ենթադրում են, որ այն եղել է կրօնական եւ աստղադիտական կենտրոն: Ամերիկեան հնդկացիների այմարա լեզուով այն կոչւում է Կալակոչա: Այս անուանումն էլ է հայերէն կարդացուում: Կալ-քալ-ն, ինչպէս ասուեց, քար-ն է, կոչա-ն-կոչ է այսինքն, Կալակոչան եւս մի քարահունջ է:

ՎԻՐԱԿՈՉԱ

Նոյն Տիտիկակա լճի աւազանում է գտնուում ծովով Անդեր եկած Վիրակոչա աստծուն նուիրուած մեծ համալիր-յուշարձանը: Յանկալի կը լինէր իմանալ, թէ Անդեր անուանումը ո՞ր լեզուով է եւ ի՞նչ է նշանակում: Գուցէ էլի հայերն են անուանել այդ սարերը. ա՞նդ, անդի՞ն, ա՞նդր, ասել է թէ Երկրագնդի հակառակ կողմում գտնուող տե՞ղ:

Հազարամեակներ առաջ (ըստ հանրայայտ ամերիկեան հնագէտ Հենքոքի 15 հազար տարի առաջ (Graham Hancock «Fingerprints of the Gods. Quest for the beginning and the End») Կենտրոնական Ամերիկայի Անդերում գտնուող Տիտիկակա լճի աւազանում ապրում էին տարբեր ժողովուրդներ, որոնք նախքան ինկերի եւ աստեկների գերիշխանութիւնը ունեցել են իրենց լեզուները, ստեղծել են առասպելներ իրենց անցեալի մասին: Այդ ժողովուրդների առասպելները

Համընկնում են բովանդակութեամբ: Առասպելներում պատմություն է, որ շատ վաղուց իրենց երկիր ծովով եկան սպիտակամորթ մարդիկ: Ծովով երթեկեկելն արդէն հրաշք էր բնիկների համար: Բայց բուն հրաշքն այն էր, որ եկողները սովորեցրին բնիկներին ձուլագործութիւն, շինարարութիւն եւ այլ արհեստներ, պատուիրեցին հաւատալ Արդար Արեգակին, չգոհաբերել աստուածներին մարդկային կեանքը, ապրել մի ընտանիքով եւ այլն: Այդ մարդիկ շիկահեր էին, կապտաչեայ, ունէին ալիքաւոր ընչացք ու մօրուք, այսինքն արտաքինով տարբերուում էին բնիկներից: Տարիներ յետոյ նրանք հեռացան (էլի ծովով), ու դրանից յետոյ հնդկացիները սպասում են իրենց ուսուցիչների վերադարձին: Իսկ եկողների ղեկավարին, որին Վիրակոչա էին անուանում, պաշտում էին որպէս աստուած: Վիրակոչայի արձանը ես տեսել եմ հեռուստատեսութեամբ ու համաձայն եմ ռուս ժուռնալիստ Պ. Լիւբիմցեւի հետ, որն ասաց. «Ուշադրութիւն դարձրէք Վիրակոչայի ալիքաւոր ընչացք ու մօրուքին, եւ այն հանդամանքին, որ նրա աչքերը բոլորովին շեղ չեն: Յատկանիշներ, որոնք բնորոշ են արմենոյիդ ցեղին: Կարելի է ենթադրել, որ եկուորները բացի գիտելիքներից ու հմտութիւններից տեղաբնակների լեզուներում էլ ինչ-որ հետք են թողել:

Եթէ փորձենք Վիրակոչա անունը հայերէն կարդալ, կը ստացուի Ի Վերուստ Կոչում:

Տարբեր ժողովուրդների առասպելներում Վիրակոչային անուանում էին նաեւ Պաչական, Պաչաքամակ:

ԿԱԼԱՍԱՍԱՅԱ

Վիրակոչայի արձանը կանգնեցուած է մի մեծ հրապարակում, որի չափերն են 150x150սմ: Հրապարակը կոչւում է Կալասասայա: Այմարա հնդկացիների լեզուով այս բառը նշանակում է կանգնած քարեր[3]: Դարձեալ ունենք կալ-քալ եւ սասայա արմատը, որն այմարերէն նշանակում է կանգնած: Հայերէնում կան Սասուն, անսասան բառերը: Յիշենք «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպում Սանասարն ու Բաղդասարը խնդրում են դաշտում աշխատող ծեր հողագործին անուն տալ իրենց նորակառոյց բերդաքաղաքին, տանը, որն իրենք կառուցել էին ահռելի մեծ քարերով: Երբ ծերունուն գրկած պտտեցնում են կառոյցի ցանկապատի շուրջը, նա հիացած ու զարմացած ասում է, որ սա Սասունն է: Անկասկած, Սասուն նշանակում է կանգուն կառոյց մեծ քարերից: Այլ կերպ ասած, Կալասասայա: Ուրեմն սասայա արմատն էլ է հայերէն ստուգաբանում:

Ամփոփելով այս 7 բառերի լեզուաբանական վերլուծութիւնը, մենք հաստատում ենք ակադեմիկոս Պ. Հերունու յօդուածներում արտայայտուած այն միտքը, որ հայերն անյիշելի ժամանակներից չրջել են աշխարհը ցամաքով ու ծովով, տարածել են իրենց գիտելիքներն ու հմտութիւնները, ազնիւ մղումները, ի բնէ լինելով շինարար, գիտնական, ուսուցիչ, նուիրող: Ոչինչ չեն քանդել, չեն տիրապետել, որ իշխեն, այլ կառուցել են աստղադիտարաններ, Արեւի տաճարներ, փառաբանելով ու իրենց աղօթքն ուղղելով Արդար Արեգակին [4]: Ի դէպ, մեր քրիստոնէական տաճարներն էլ կառուցուած են այնպիսի ճարտարապե-

տական հնարանքով, որ Արեւի շողքը օրագիշերահաւասարին կամ արեւադարձի հաշուարկուած օրերին ընկնում է ուղիղ բեմի սեղանին տեղաւորուած ոսկուց կամ արծաթից պատրաստուած ճաճանչազարդ ու ճաճանչափայլ Արեւը պատկերող սկաւառակներին, իմաց անելով օրացոյցի կարգը: Ճիշդ այնպէս, ինչպէս հազարամեակներ ի վեր արել են արիացի հայերը:

Այսպիսով, եթէ մի կողմ դնենք որոշ հնչիւնափոխութիւններ, այս անուանումների նմանութիւնն, ըստ ամենայնի, պատահական չի, որովհետեւ կառոյցներն էլ, ըստ գիտնականների գրածի, նման են իրար ու ծառայել են միեւնոյն նպատակին:

Ինչպէս վերը ասուեց, ըստ Հենքոքի, այդ առասպելը ունեն անդեան շատ ժողովուրդներ:

Այժմ արան այդ ժողովուրդներից մէկն է: Այժմ էլ այժմարներն ապրում են Անդեան բարձրաւանդակի կենտրոնական մասում գտնուող պետութիւններում: Բոլիվիայում, Պերուում եւ Չիլիում: Այսօր այժմարների թիւը 1 միլիոն 600 հազար է: Բոլիվիայում եւ Պերուում այժմարեէնը իսպաներէնի կողքին հռչակուած է պետական լեզու: Յաւօք, այսօր ոչ բոլոր այժմարներն են կարողանում խօսել իրենց մայրենիով, բայց պնդում են, որ շարունակում են իրենց այժմարներ համարել:

Որոշ գիտնականներ գտնում են, որ այժմարեէնն աշխարհի ամենահին լեզուն է:

Հետաքրքրութիւնը աստղադիտարանների անուանումները հայերէն վերծանելու նկատմամբ ստիպեց մեզ դիմել հայերէնի եւ այժմարեէնի համեմատական ուսումնասիրութեանը:

Պրպտելով անգլերէն-այժմարեէն ընդամէնը 600 բառանոց բառարանը [6], մենք գտանք մի ամբողջ շարք այժմարեէն բառեր, որոնց արմատների համեմատական ուսումնասիրութիւնը համապատասխան հայ բառարմատների հետ բացայայտեց նրանց հնչիւնական եւ իմաստային նմանութիւնը:

Նման պնդումը լիիրաւ դարձնելու համար, անշուշտ, անհրաժեշտ է այժմարեէնն ուսումնասիրել լեզուաբանական առումով, ձեռք բերել եւ մանրամասն զննել շաղկապուած գրութիւններում լեզուի շարահիւսութեան կանոնները, ինչպէս Պ. Ֆլորենսկին է ասում, գտնել բառերն իրար կապակցող ձգողական ուժերը: Մտադիր ենք օգնութիւն խնդրել այժմարեէնին տիրապետող գիտնականներից պարզաբանելու համար, թէ մեր ընտրած բառերից ծագումնաբանական առումով որ բառերն են ստոյգ բուն այժմարեէն եւ որոնք կարող են լինել ենթադրեալ փոխառութիւնները: Այս յօդուածում մենք առայժմ բերում ենք այն բառային համընկնումները հայերէնի հետ, որոնք նման են իրար եւ հնչիւնական կարգով, եւ իմաստի նմանութիւններով:

Պարզ է, որ այս կարգի ուսումնասիրութեան նպատակը զուտ լեզուաբանական չի: Եթէ մեզ յաջողուի ապացուցել, որ այժմարեէնում կան շատ հին ժամանակներից (15 հազար տարի առաջ) պահպանուած գոնէ մէկ-երկու-երեք տասնեակ հայարմատ բառեր, ուրեմն կարելի կը լինի խօսել այն մասին, որ դեռ այդ ժամանակներում հայերը ծովով ու ցամաքով զնացել են աշխարհի տարբեր

Ժայրերը, այդ թուում Կենտրոնական Ամերիկա, կապեր են ստեղծել, թողել են իրենցից յետոյ բարի յիշատակ ու շուայլօրէն տարածել են իրենց պատկանող ձուլագործութեան, շինարարութեան եւ այլ հմտութիւնների գաղտնիքները:

Այսպիսով, ընթերցողի դատին ենք յանձնում մեր գատողութիւնները իւրաքանչիւր առանձին գոյգ բառի մասին:

Սկսենք աշխարհի ամենակարեւոր բառից: Sira այմարերէն բառը թարգմանում է սէր, ինչպէս հայերէնում է:

Անցնենք բնութեանն ու աստուածներին:

Warawara այմարերէն նշանակում է աստղ: Հնչողութեամբ նման է մեր վառ բառին, իսկ իմաստն այն է, որ աստղերն իրօք վառ են:

Qala նշանակում է քար: Այս հայերէն բառը «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարանում» իր գոյացումներով գրաւում է 7 էջ: Պէտք է ասել, որ նա աշխարհն էլ է գրաւել, այդ պատճառով այմարերէնումն էլ է նոյնը:

Qarqa նշանակում է Ժայռ, թարգմանութեան իմաստով գալիս է ապացուցելու նախորդ պնդումը:

Uma - ջուր է նշանակում: Հայերէնն ունի ումպ, կում եւ խում արմատները: Երկու լեզուներումն էլ ակներեւ է ում արմատը:

Lallawa նշանակում է հոյակապ:

Wak'a նշանակում է երկրպագութեան վայր : Այնտեղ հաստատ վախ կայ:

Ուտելիքին վերաբերող բառեր:

Chira նշանակում է սերմ: Պատկերացնենք հետեւեալ տրամաբանական շարքը. պտուղ - չիր - սերմ: Արդեօ՞ք օրինաչափ չէ:

Qita նշանակում է սերմաջուր, այսինքն «սպերմա»: Այմարերէնը բացարձակ նոյնն է, համազօր է հայերէնին, այսինքն կիթ բառին (հայերէնում ունենք ձկնկիթ, հաւկիթ) :

K'awna, ճիշդ է, այմարերէնում ձու է նշանակում, բայց նման է մեր հաւին, եթէ արմատը awn- ն է:

Khutuna նշանակում է աղանձ, իսկ բառի արմատը համընկնում է հայերէն կուտ բառի հետ: Աղանձն էլ կուտից այսինքն հատիկից են պատրաստում:

Կենդանիներ:

Phisi - նշանակում է կատու, կարծում ենք, մեկնաբանութեան կարիք չկայ:

Chiwchi նշանակում է հաւի ճուտ, իսկ հայերէն ասում ենք հաւ ու ձիւ: Ակներեւ է, որ այս բառը գոյացել է միջարկութիւնից: Հայերէն ասում ենք, որ ճուտիկները ճիւ-ճիւ են անում:

Khuchi նշանակում է խոզ: Հայերենում ունենք գոջի բառը: Կարծում ենք, որ այս դէպքում էլ մեկնաբանութեան կարիքը չկայ:

Համեմատենք մի քանի այլ բառեր

Tapa նշանակում է բուն: Հայերէնում ունենք տապան բառը, որը նշանակում է՝ արկղաձեւ մեծ կամ փոքր շինուածք, կառույց: Նոյի տապան, դագաղ, շիրիմ (տապանաքար), կայ նաեւ տափել բայը, որը նշանակում է մի յարմար տեղում պատսպարուել:

Tunu նշանակում է ծառի բուն:

Laqa նշանակում է հող, փոշի, իսկ հայերէնում ունենք նոյն հնչողութեամբ լաքա բառը, որը նշանակում է որեւէ բանի կամ նաեւ փոշու հետք՝ շորի կամ որեւէ իրի վրայ:

Paya նշանակում է երկու ու շատ նման է փայ բառին, օրինակ, եղածը բաժանել երկուսի միջեւ:

Ari նշանակում է սուր, որից աւամա կապ է ծագում հայերէնի արի ածականի հետ:

K'ari նշանակում է սուտ: Սուտը չարիք է կամ չար -իցն է (կ-չ հնչիւնափոխութեամբ):

K'umu այմարերէն նշանակում է կամար: Աճառեանի բառարանում կայ կումբ, որը նշանակում է վահանի մէջտեղի ուռած մասը, այստեղից՝ կմբթայ, կմբաւոր ու նշուած է, որ Պ. Դ. Լազարզի, «Gesammelte Abhandlungen» աշխատութեան մէջ, Leipzig, 1866 կայ նաեւ կամար նշանակութիւնը: Եթէ այս վերջինը չասէինք էլ, կարծում ենք, գմբէթն էլ կամարաձեւ է: Kumri այմարերէն նշանակում է ծիածան: Իսկ ո՞վ գիտէ, ի՞նչ է նշանակում մեր Գիւմրի-Կումայրին: Կարելի է դատողութիւններն սկսել նրանից, որ Գիւմրին գտնուում է գմբէթաձեւ բարձրաւանդակի վրայ, ասել է թէ՝ կամարին: Իսկ եթե բառը փորձենք տրոհել, կը ստացուեն կում եւ այր-ար արմատները: Այսինքն Արեւի կամա՞ր, - այն է ծիածան: Ուրեմն ինչի՞ հասանք: Հասանք այն մտքին, որ այմարերէնի յիշողութիւնն օգտագործելով կարողացանք վերծանել այս վերջին երկու հայերէն բառերի մոռացուած նշանակութիւնները: Կում արմատը հայերէնում տուեալ իմաստով որոշակիօրէն կամ-ի է վերածուել (կամար), իսկ Կումայրի - Գիւմրի հնագոյն հայկական քաղաքի անուանման վերծանումն այսօր չկայ ոչ մի բառարանում: Եւ ի՞նչ պայծառ անուն է, ծիածանափայլ:

Ikina - քնել: Արմատներն են. Kin - kn - քն:

Phusana - փչել: Արմատն է phus - փրչ չ-ս հնչիւնափոխութեամբ, գոյացել է ձայնարկութիւնից:

Որոշ բայեր

Achuna նշանակում է հասունանալ: Հայերէնում ունենք աչուն, ժամանակ, երբ հասունանում են պտուղները եւ հասուն. եւ հնչում է միանման, եւ արմատն է ընդհանուր, եւ իմաստն է նոյնը:

Arkana նշանակում է հետեւել: Հայերէն արկանել նետել, ձգել, դնել, մտցնել, տարածել, փռել, սփռել, հանել, զրկել եւ այլն: Անշուշտ, արկան - օղապարան

բառը, որն այսօր միջազգային բառ է, ենթադրում է օղապարանով որսին կամ թշնամուն հետեւել, հետապնդելու նաեւ բանտարկելու իմաստը: Այս բայը նոյնպէս շատ գոյացումներ ունի ու ծաւալուն տեղ է գրաւում Աճառեանի արմատական բառարանում:

Apaqana - մեր ձեռքի տակ եղած բառարանում այս բառը թարգմանուում է տեղափոխուել իսկ Հենքոքի «Աստուածների հետքը» գրքում բերուած է այդ նոյն բառի վատ տեղ իմաստը: Մնում է հայերէն աւելացնել ապականուած տեղ, ինչին նման է բերուած այմարերէն բառը:

Imana նշանակում է թաքնուել: Այստեղ այմարերէնում պահպանուել է հայերէնի տրամաբանական շարքի վերջին օղակը: Թաքնուել-փնտուել-տեղն իմանալ: Այս ենթադրութիւնը հաստատուում է յաջորդ բառի թարգմանութեամբ, ուր ինչպէս եւ այստեղ, տեղի է ունեցել տրամաբանական շարքի խախտում:

Thaqana նշանակում է փնտուել: Հայերէնում թաքնուել բառն է նման բերուած այմարերէն բառին իր հնչեցմամբ, իսկ իմաստը տրամաբանական շարքում մի քայլ առաջ է՝ նախ հարկաւոր է թաքնուել, որ յետոյ փնտուեն:

Amtana նշանակում է յիշել: Հայերէն մտ-միտ արմատն է, այստեղից՝ մտքում պահել, յիշել խտացումը:

Այո՛, այմարերէնը իր յիշողութեան մէջ պահել է երբեմնի ներմուծուած հայկական տարրը: Չի գրուել ու մեզ չի հասել վաղնջական ժամանակներին վերաբերող մեր պատմութիւնը, սակայն վկայութիւնները մնացել են հեռաւոր երկրի աշխարհի ամենահին ժողովուրդներից մէկի լեզուի յիշողութեան մէջ: Այմարա լեզուի յիշողութիւնն է, որը կարող է պատմական փաստեր վերծանել, օգնել փնտուելու հայկական հետքը Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների պատմութեան մէջ որպէս վկայութիւն հին հայերի տեղափոխումների առաքելութեան, նրանց գիտելիքների ու առաքելութեան մասին Կենտրոնական Ամերիկայում ու ամբողջ աշխարհում:

Այս առումով անչափ հետաքրքիր կը լինէր պետականօրէն խրախուսուող երկարատեւ, մանրամասն ուսումնասիրութիւն կատարել, համեմատելով Տիտիկակա լճի աւազանում ապրող այմարների լեզուն հայերէնի հետ:

Բանասիրական Գիտութիւնների թեկնածու
ք. Երեւան, 2004 թ. /կրճատումներով/

ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

«ԱՐԴԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ - ՍՓԻՒՌՔ»

Միշտ ալ հաճելի է տեսնել սփիւռքահայ ժամանակակից բանաստեղծները ի մի բերուած, բեմադրուած աչքերով դիմաց: Նման փորձ մըն է վերջերս Երեւանի մէջ հրատարակուած ժողովածուն՝ «Արդի հայ քնարերգութիւն - Սփիւռք» խորագրով (հրատ. ՀՄ, 2010, կազմող՝ Արեւշատ Աւագեան, խմբագիր՝ Լեւոն Անանեան): Թէեւ, ըստ իս, «քնարերգութիւն» բառը հոս ճիշդ չէ: Սովետահայ գրականագիտութեան կողմէ հարչրկուած այս բառը կարելի էր պարզապէս փոխարինել «բանաստեղծութիւն»ով, այսինքն՝ ոչ թէ «Արդի հայ քնարերգութիւն», այլեւ «Արդի սփիւռքահայ բանաստեղծութիւն»:

Հատորը ունի յաւուր պատշաճի եւ բաւականին քլիշէ յառաջաբան մը: Բայց, խնդրեմ՝ ինչո՞ւ «քնարերգութիւն» եւ ոչ «բանաստեղծ»: Լաւ է, որ Ա. Աւագեան ինքզինք կը սրբագրէ երբեմն ու կը գրէ «բանաստեղծ»: Նուա՞զ լաւ է արդեօք...: Օրինակ՝ «Սփիւռքահայ բանաստեղծները դարձան...» կամ «Զմոռնանք որ արտերկրում ապրող մեր բանաստեղծներից չատերը...»:

Եւ այսպէս, սփիւռքի բանաստեղծները «ներկայացնում են իրենց անձնական ու անանձնական խօսքը, ներկայացնում են գրական հայերէնով, դասական ուղղագրութեամբ...»: Այս բոլորը լաւ, սակայն անմիջապէս կը հետեւի արդէն գլուխ-գործոցը: Կը մէջբերենք.

«Ցաւով պիտի նկատենք նաեւ, որ երբեմն տարբեր երկրներից, տարբեր լեզուներից ու բարբառներից փոխառած բառամիջերքը գործածւում է շարահիւսական, ուղղագրական ու կէտադրական ոչ մի կանոնի չենթարկուող արտայայտչաձեւերով: Բայց ինչպէս ասում են՝ լոյսն առանց ստուերի չի լինում»:

Ի՞նչ օտար լեզուի մասին է խօսքը: Ի՞նչ բարբառի: Ի՞նչ բառամիջերքի: Շարահիւսական, ուղղագրական թէ կէտադրական ո՞ր կանոններն են որ չեն յարգուիր եղեր: Հին սովետական մտայնութեան հզօր վերադարձն է ու տիրապետութիւնը: Օրէնքները չեն յարգուիր եղեր... Իսկ մենք՝ արդի սփիւռքահայերս՝ կը կարծէինք թէ այս հարցերը լուծուած են վաղուց: Գոնէ համաշխարհային մշակույթին համար՝ այդ հարցերը լուծուած են նուազագոյնը դարէ մը ի վեր: Մենք դեռ կը կասկածինք...: Իսկապէս կարելի՞ է այսօր գրել առանց կէտադրութեան, առանց քերականական շարահիւսութեան: Ո՞ր կ'երթաս, Օ՛ բանաստեղծութիւն: Ամօթ է, յարգարժան Պրն. Աւագեան, Չ՛արդ դարը կ'ապրինք բոլորս...:

Նմանօրինակ քանի մը ժամանակավրէպ խոհեր կը խանգարեն յառաջաբանի ընդհանուր միջնորոտը, որ կը փափաքէր (չեմ կասկածիր) ըլլալ գրական: Անցնինք:

Երբ առիթով մը Հրանդ Մաթեոսեանի հետ կը քննարկէինք «Նոր Դար»

գրական հանդէսի մէկ համարը, Հրանդը յանկարծ բացագանչեց «տոպրակ է, տոպրակ»։ Երբեք չեմ մոռնար այդ պահը։ Այս ժողովածուն եւս կը նմանի «տոպրակ»ի մը, ուր ժողովրդական ըսելաձեւով թացն ու չորը խառնուեր են իրարու։ Լոս Անճելոսեան փաղանգը կամ պարսկահայ մեծաթիւ ներկայութիւնը կը նեղեն տեղ մը ընթերցողը։ Ա՛յ ամէն տաղաչափի՝ գրող կամ բանաստեղծ անո՞նք պիտի տանք։ Կարելի չէ՞ր աւելի ընտրովի մօտենալ հեղինակներուն եւ անոնց թեքսթերուն։ Ինչո՞ւ չբաւարարուիլ որոշ անուններով՝ որոնց գծով consensus մը կայ արդէն։ Ինչո՞ւ հատորը խճողել տասնեակներու տաղաչափութեամբ։ Դժբախտաբար միշտ չէ որ հայաստանեան ժողովածուները կը փայլին իրենց ճաշակով։

Այլ ղիտողութիւն մը՝ որ կրկին անգամ կապուած է կազմողի եւ խմբագրողի գեղագիտական ճաշակին հետ։ Անուններ չեմ տար, միայն անանուն օրինակ մը։ Յայտնի բանաստեղծ մը կը գրաւէ երեք էջեր, մինչ բոլորովին անյայտ մը նստած է հինգ-վեց էջերու վրայ։ Պիտի ըսուի թէ ամէն մէկ բանաստեղծէ տպուած է այն ինչ ղրկած է։ Շա՛տ լաւ։ Բայց միթէ կազմողի (եւ խմբագրողի) պարտականութիւնը չէ՞ արժեւորել գրողները եւ անոնց ներկայութեան չափերը հատորի երկայնքին։ Համաչափութեան պակաս մը ակներեւ է։

Յետոյ ի՞նչ ըսել վրիպակներու եւ թէքնիք սխալներու գծով։ Նամանաւանդ արեւմտահայերէն գրողներու պարագային։ Արեւմտահայերէնը դեռ կը մնայ արեւելահայերէնի խորթ եղբայրը։ Հայաստանցիին համար՝ քիչ մը անհասկնալի լեզուական տարբերակ եւ որ կարելի է երբեմն շփոթել գաւառաբարբառի մը հետ (տե՛ս յառաջաբանի մէջջերուած տողերը)։ Տխուր է սա հաստատումը։ Տակաւին շատ ջուրեր պէտք է հոսին մինչեւ որ արեւմտահայերէնը Հայաստանի մէջ գտնէ իր իսկական, արդար տեղը։

Անճնապէս գոհ եմ որ լիբանանահայ գաղութը իր ներկայացուցչական կազմով ներգրաւուած է այս հատորին մէջ։

Վերջի վերջոյ այս ժողովածուն կրնանք համարել մեր սփիւռքահայ բանաստեղծութեան բաւական հարազատ մէկ հայելին, իր լաւով ու իր գէշով, իր զօրութեամբ թէ երբեմն թուլութեամբ։ Ամէն պարագայի, հաճելի ընթերցում կը մաղթեմ բոլորին։

ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ


23 Հոկտեմբեր, 2010

Պէյրութ

Յ. ՊԱԼԵԱՆ

ՌԷՅՆԸՐ ՄԱՐԻԱ ՌԻԼՔԷ

Poèmes à la nuit, 2008, Editions Verdier



Ռէյնըր Մարիա Ռիլքէ ծնած է 1875ին, Փրակա եւ մե-
ռած է 1926ին, Զուիցերիա: Գրած է գերմաներէն եւ կեան-
քի վերջաւորութեան՝ ֆրանսերէն: Ծնողքը ուզած էին որ զինուորական ըլլայ: Կը սիրահարի,
երբ քսաներկու տարեկան է, Լու Անտրէաս-Սալոմէի որ երեսունվեց տարեկան էր: Բուռն սէր մը
որ կը վերածուի փոխադարձ բարեկամութեան: Լու Սալոմէի եւ անոր ամուսնին հետ կը ձամ-
բորդէ Իտալիա եւ Ռուսիա, ուր կը հանդիպի Լէոն Թոլսթոյի: Լրագրող է եւ կը գրէ իր առաջին
երկերը: Կը ծանօթանայ քանդակագործ Օկիւսթ Ռոտէնի, Փարիզ, կ'ըլլայ անոր քարտուղարը,
կը գրէ անոր մասին: Կ'ամուսնանայ Ռոտէնի բնորոշներէն Քլարա Վեսթհոֆի հետ, որմէ կը
խզուի: Կը ձամբորդէ Հիւսիսային Ափրիկէ, Եգիպտոս, Պերլին, Վենետիկ, Էքս-ան-Փրովանս,
Արլ, Ավինեոն: Կը դադրի արձակ գրելէ եւ կը նուիրուի բանաստեղծութեան, որ, ըստ իրեն, աւե-
լի հակուած է հետեւելու հոգիի ոլորուն գիծերուն: Կը ծանօթանայ իշխանուհիի մը որ իր պաշտ-
պանը եւ բարերարը պիտի ըլլայ, որուն համար պիտի գրէ իր բանաստեղծական գլխաւոր եր-
կը Տուիմոյի Եղերեգները: Առաջին Աշխարհամարտին բանակ կը կանչուի, բայց շուտով կը վե-
րադառնայ: Զուիցերիա կը հաստատուի 1919ին եւ կը գրէ ֆրանսերէն բանաստեղծութիւններ:
Վեց տարի կը կենակցի ուրիշ կնոջ մը հետ: 1921ին հարուստ գերմանացի մը իրեն համար կը
գնէ առանձնացած աշտարակ մը, Վէյրասի մէջ, որ կը դառնայ իր բնակարանը:

Poèmes à la nuit բանաստեղծութիւններուն ներկայացման համար ինքնատիպ երեք էջեր գրած
է մեծ գրող Մարկըրիթ Եուրսընար: Այնքան յուզիչ են Մարկըրիթ Եուրսընարի տողերը, իրենց
կարգին բանաստեղծութիւն, որ անոնք լաւագոյն դռներն են հաղորդուելու համար մեծ բանաս-
տեղծի մը աշխարհով:

«Եթէ այս բանաստեղծը, վարժ հրեշտակային այցերու ուղեց ըլլալ աննիւթական, համեստ,
թափանցիկ ըլլալու չափ մերկ, գիտէր որ ծնած էր փոխանցելու, լսելու, թարգմանելու, իր կեան-
քին գնով, այն գաղտնի պատգամները զորս իր հանձարի ալեհաւաքները թոյլ կու տային որ
բռնէր: Փակուած իր մարմնին մէջ ինչպէս մարդ մը ունկնդիր խորտակուող նաւու մը, ան պա-
հեց այս կապը հաղորդման այդ դիրքին հետ՝ որ կը գտնուէր իր երազներու կեդրոնը» (Մարկը-
րիթ Եուրսընար):

Բանաստեղծութիւն «Թարգմանել» կամ «Վերծանել» միշտ դժուար է, ապերախտ աշխա-
տանք, հարազատութիւնը երբեք ամբողջական պիտի չըլլայ, քանի որ բանաստեղծի աշխարհը
կը կառուցուի նաեւ բառերու թովչանքով, որոնք մէկ լեզուէն միւսը չունին նոյն լարային ձայնե-
րը եւ իմաստի երանգները:

Ռիլքէի «Տաղ Գիշերին»էն փրցուած պատառիկները կարդալ այս համեստութեամբ:

Բ.

ՏԱՂ ԳԻՇԵՐԻՒՆ

Ո՛հ, ինչպէս, ի՛նչ հծծիւնով
Ջիրար շոյեցինք, ուսեր եւ կոպեր:
Եւ գիշերը սենեակներու մէջ կը կծկուէր
Ջերթ անասուն մը զոր ցաւով խոցած ըլլայինք:

Դուն ընտրեալն էիր բոլորէն՝ ինծի համար,
Բաւարար չէ՞ր քոյրը ըլլալ:
Գոյութիւնդ ինծի համար հովիտ մըն էր հեշտալի,
Եւ այժմ, ան կը թեքի երկնի ցռուկին

Որպէս յայտնութիւն մը անսպառ
Եւ կը տարածէ տիրակալութիւնն իր: Ո՛ւր երթալ:
Անա՛ղ, ամիսսանքի դիրքով
Կը հակիս դէպի ինձ, դուն որ չես մխիթարեր:

Երբ քու դէմքդ զիս այսպէս կը հիծէ,
Ինչպէս արցունք մը՝ արտաստուողը,
Որ ձակատս ու բերանս կը բազմապատկեմ
Գիծերու շուրջ որոնք քուկդ են գիտեմ,

Գիշեր մը ձեռքերուս մէջ առի
Դէմքդ: Լուսինը զայն կը պայծառացնէր,
Օ՛, իրերու ամենէն անբռնելի յորդող արտասուքի տակ:

Ան գրեթէ իր մըն էր հլու, պարզապէս հոն,
Ինչպէս առարկայ մը ամփի մէջ, հանդարտ:
Բայց եւ այնպէս, ցուրտ գիշերին, չկար
Այլ էակ մը ինձմէ անհունօրէն հեռացող:

Օ՛, ասոնք այն վայրերն են ուր կը փութանք,
Կը մղենք դէպի մակերեսը նեղ
Բոլոր ալիքները մեր սրտին,
Տենչ եւ տկարութիւն,
Եւ վերջապէս, որո՞ւ կը ձօնենք:

Անաղ, օտարականին որ մեզ թիւր ըմբռնեց,
Միւսին, աւաղ, զոր մենք երբեք չգտանք,

Այս սպասաւորներուն որոնք մեզ կապեցին,
Գարնան հովերուն՝ որոնք այդպէս ալ փախան,
Եւ լռութեան, այդ պարտեալին:

Դէմքէ դէմք,
Օ՜ վերացումն այս:
Մեղանշողներէ, կը ժայթքեն
Հրաժարումներ եւ ներում:

Յուրտ չէ՞, շունչը շքեղօրէն
Հեռաւոր գիշերներու
Որոնք կ'անցնին դարերով:
Բաժրացո՛ւր կալը սրտիդ:
Հրեշտակներն յանկարծ
Բերքը կը տեսնեն:

Տե՛ս, հրեշտակները կը տարածեն տարածքի ընդմէջէն
Դադար չունեցող զգացումներն իրենց:
Մեր հուրը շէկ ցուրտ է իրենց համար:
Նայի՛ր, հրեշտակները կը բոսորին տարածքի ընդմէջէն:

Նոյն ատեն մեզի, որ այդ մասին ուրիշ ոչինչ գիտենք,
Երբեմն բան մը կը զլացուի, երբեմն ի զուր կը տրուի,
Անոնք կը քալեն, խանդավառ անով զոր կ'ուզեն իրագործել,
Իրենց կալուածին մէջ լիովին ամբողջացած:

Նման շունչ չէի՞ գտած մակընթացութեան մէջ կէսգիշերային
Քու սիրոյդ համար, որպէսզի վերջապէս գաս
Օր մը:
Որովհետեւ կը ցանկայի անեղծ ուժի
Շռայլութիւններով դէմքդ խաղաղեցնել,
Անգամ մը որ անհունութեան մէջ զոր կ'ենթադրեմ
Ան պիտի հանգչի իմ դէմքիս դիմաց:
Անաղմուկ, տարածքէն կը հասներ իմ գիծերուս,
Որպէսզի բաւէ քեզմէ բարձրացող մեծ հայեացքին,
Արիւնս կը ցոլար եւ կը խորանար:

Երբ ձիթենիի տժգոյն բաժանման ընդմէջէն
Գիշերը կ'իշխէր աւելի ուժգին, իր ամբողջ աստղերով,
Կը կանգնէի, ոտքի կը կենայի եւ
Ինքզինքս ետ կը նետէի, եւ կը ստանայի այն
Ջոր հետագային երբեք չհասկցայ որ կու գար քեզմէ:

Օ՜հնչ ուժեղ խօսք իմ մէջս սերմանուեցաւ
 Որպէսզի եթէ երբեք ժպիտ գար,
 Նայուածքովս վրադ փոխանցեմ տարածքն աշխարհի:
 Բայց դուն չես գար, կամ կու գաս շատ ուշ:
 Նետուեցէք, հրեշտակներ, այս վուշի դաշտին վրայ
 Կապոյտ: Հրեշտակներ, հրեշտակներ, հնձեցէք:

Այսպէս ուրեմն, հրեշտակն պէտք էր
 Որ ըմպէր դանդաղօրէն իմ գիծերէս
 Գինին այժմ աւելի վճիտ դէմքերուն:
 Ծարաւի, ո՞վ քեզ կանչեց որ գաս:

Որ դուն ծարաւ ըլլաս: Դուն որուն հեղեղն աստուածային
 Կը յորդի իւրաքանչիւր երակի մէջ: Որ
 Դուն, դեռ ծարաւ ըլլաս: Յանձնուի՛ր
 Ծարաւին: (Ինչպէ՞ս կը հասկնաս զիս):

Ինծի համար որ իմ մէջ կը հոսիմ, կը զգամ թէ որքա՜ն
 Նայուածքդ չոր է, եւ կը կը հակիմ դէպի արիւնդ այնքան
 Որ թարթիչներդ կը ծածկեն,
 Անոնց բիւրեղ կամարը, ամբողջութեամբ:

Էջ 13էն 25

Հատուածներ՝ ՏԱՂԵՐ ԳԻՇԵՐԻՆ, ՌԷՅՆՐ Մարիա Ռիլքէ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
ԱՐԾՈՒԻ ԲԱԽԶԻՆԵԱՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏԸ ԵՒ ՀԱՅ ՊԱՐՈՒՀԻՆ

2007 թուականին Երևանի մէջ լոյս տեսաւ մեր համատեղ հեղինակած «Շամախեցի պարուհին. Արմէն Օհանեանի կեանքը եւ գործը» հատորը, նուիրուած հայ մեծահամբաւ պարուհի եւ գրող Արմէն Օհանեանին (1887-1976): Ներկայիս կը շարունակենք մեր պրպտումները այդ արտակեղրոն տիկնոջ կենսագրութեան յաւելեալ հետաքրքրական մանրամասներ եւ անոր շուրջ տարբեր լեզուներով ստեղծուած հարուստ գրականութիւնը վերհանելու համար: Ի շարս այլ նիւթերու, գտած ենք նաեւ ֆրանսացի ձանչցուած երաժշտագէտ Լուի Լալուայէն շահեկան գրութիւն մը Օհանեանի մասին: Ստորեւ կը ներկայացնենք անոր թարգմանութիւնը, կատարուած՝ Վ. Մատթէոսեանի կողմէ:

Ֆրանսացի երաժշտագէտ եւ երաժշտական քննադատ Լուի Լալուայի (1874-1944) անունը երաժշտագիտութեան պատմութեան մէջ ծանօթ է մասնատրապէս իբրեւ հռչակատր երաժիշտ Գլոտ Տէպիւսիի առաջին կենսագիր: Ան նաեւ երաժշտագիտութեան առաջին տոքթորներէն է պատմութեան մէջ: Մօտէն հետաքրքրուած ըլլալով նաեւ հայ երաժշտութեամբ (ան ամուսնացած էր հայ դաշնակահարուհի Շուշիկ Բաբայեանի հետ) եւ անձամբ ծանօթ ըլլալով Կոմիտաս վարդապետին, Լալուա մեծապէս գնահատած է նաեւ հայ երաժշտութիւնը: Իր անունը հայ երաժշտական շրջանակներուն մէջ յայտնի է, մասնատրապէս, 1906 թուականին Փարիզի մէջ Կոմիտաս Վարդապետի համերգին առիթով գրուած յօդուածով, ուր հայ երաժշտութիւնը կը բնորոշէ որպէս՝ «իսկապէս ոչ եւրոպական եւ ոչ արեւելեան, այլ ունի նկարագիր մը, աշխարհի մէջ մէկ հատիկ, խորաթափանց յուզումի, շնորհալի քաղցրութեան եւ ազնիւ գորովի: Եղանակներ՝ փափուկ եւ սակայն որոշ թաւալումներով, ձկուն ու կենդանի կշռոյթներ, երաժշտութիւն մը՝ որ ամբողջովին սրտէն կը բխի եւ կը հոսի ինչպէս զով՝ թափանցիկ եւ պայծառ գետ մը: Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ոչ Արաբիոյ լափող եւ Պարսկաստանի անապատներու արեւը, այլ ոսկեզօծ լոյս մը՝ համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու ձերմկութեան եւ կարկաչող առուակներու ցոլքերուն» (մէջբերումն ըստ Էջմիածին հանդէսի, 1969, թիւ ԺԲ, էջ 21):



ԱՍԻԱԿԱՆ ՊԱՐԵՐ

ԼՈՒԻ ԼԱԼՈՒԱ

Շատ տարիներ է ի վեր, մեզի կը թուի, որ մեր դասական թատերապարը (ballet), հակառակ շնորհքի ու թեթեւութեան իր արժանիքներուն, սոսկ անբովանդակ հռետորութիւն մըն է, եւ անձկալից հետաքրքրութեամբ կը հետեւինք բոլոր ճիգերուն, որոնք կը փորձեն դարմանել այս թերացումը: Մեր յոյսը դրուած է, միաժամանակ, թէ՛ Այգատորա Տունքանի հելլենիստական պատշաճեցումներուն եւ թէ՛ այն նկարչագեղ տարրերուն վրայ, որոնցմով ռուսերը կը յարեան անթրաշաները, ինչ որ չէինք տեսած Վեսթրիսէն ի վեր: Բայց առաւելաբար ողջոյն մը կ'ակնկալենք Ասիայէն. մենք գիտենք, թէ ի՞նչ իմաստութիւն թաքնուած է այս aïeulին մէջ եւ թէ ինչպէս ան, մեզմէ պակաս բանական, աւելի յաջողութեամբ կը կռահէ գոյութեան գաղտնիքները: Պարսկական մանրանկարները, ճափոնական պատկերները, չինական գեղանկարները մեր արուեստագէտներուն ուսուցանած են աւելի կենդանի գոյներ, աւելի ամփոփ գծեր, միաժամանակ աւելի յստակ ու ճոխ յորինում մը: Չինական բանաստեղծութիւնները, որոնց այլապէս կամայական թարգմանութիւններու միջոցով կը սկսինք ծանօթանալ, մեզի կը պարզեցնեն լիութեան բնորոշները, որոնց դեռ հետամուտ են մեր լաւագոյն գրողները: Ճալական եւ Քամպոնիոյ թագաւոր Ն. Վ. Սիսովաթի պարուհիները մեզի ցոյց տուած են ո՛չ թէ կապակից շարժումներ, որոնց զարգացումը շարժուճեւեր կը գծէ, այլ կերպարանքներ՝ աչքերով լսուած մեղեդիի մը նման:



Ներկայիս, մոլսոլմանական Արեւելքը, իր կարգին, կը ներկայացնէ արւեստ մը եւ պար մը, որոնք հաւասար են անոր բանաստեղծներուն ամենանուրբ ներշնչումներուն: Անակնկալ մըն է մեզի համար, քանի որ ցարդ մենք միայն ծանօթ էինք միջերկրականեան Արեւելքին եւ իր գալարումներուն, որոնք կը զուարճացնեն բեռնակիրները Գահիրէի կամ Թունուզի խցիկներուն մէջ: Արմէն Օհանեանը, որ զանոնք մեզի կը բերէ, ծնած է երկու աշխարհներու սահմանագծին: Յեղով՝ հայ, կը թուութեամբ՝ ռուս, ան լիովին ծանօթ է այն բոլորին, ինչ որ եւրոպական քաղաքակրթութեան կրնայ առաջարկել: Բայց Մերձաւոր Արեւելքը մօտիկ էր անոր երազին եւ ուրախութեամբ 1910ին ան ընդունած է Թեհրան երթալու հրաւերը՝ վերածնող Պարսկաստանին կանոնաւոր

Թատրոնի քանի մը օրինակներ տալու, որոնք փոխարինեն հին խորհուրդները: Խանդավառ ընդունելութենէ ետք, ան մղուած է իր կեցութիւնը երկարաձգելու: Արքայական ընտանիքէ իշխանուհի մը հիւրընկալած է զայն. բազմաթիւ ամիսներու ընթացքին, հարեմի մտերմական շուքին տակ, եւ խանդակաթ սիրով փայփայուած իր արգելափակեալ քոյրերէն, ան ուսումնասիրած է կախարդական կշռոյթները, զորս Օլիմփիայի շատ գեղարուեստասէր ղեկավարութիւնը մեզի կը թոյլատրէ դիտել այսօր:

Օտալիսկը կը պարէ քնոտ տիրոջ հաճոյքին համար իր փխրուն մարմինը երկշոտութեամբ կ'արձակուի, ապա կը զարթնի: Շրջան առ շրջան փախստական կամ ենթակայ, կամ ինքն իր վրայ պրկած՝ զրգուիչ խոնջէնքով, ան կը ժպտի իր երիտասարդութեան եւ զայն կը մատուցէ անոր, որ միայն պէտք ունի ձեռքը բարձրացնելու՝ բռնելու համար:

Մէրը սեփականացուցած է զայն, սէր մը արգիլեալ, ահարկու եւ ոչ-զգայական, քանի որ Արեւելքի մէջ հաճոյքը զգայական է, ոչ թէ սէրը. մտածումի սեւեռում մը, յափշտակութիւն մը զոր ան կը վայելէ՝ աչքերը կիսափակ, խոր կատաղութիւն մը որ կը ցնցէ ողջ մարմինը, երջանկագոյն երազ զոր ան ոյժ չունի մերժելու եւ որմէ կ'արթնայ՝ տառապանքի եւ զուր ըմբոստութեան համար: Ան կալանաւոր մըն է, որուն սիրեցեալը երբեք պիտի չհանգչի անոր կողքին:

Ի վերջոյ, ան նորէն կը պարէ տիրոջ համար: Հպարտօրէն մերժելով իր քողերը, ան զայն վկայ կը դարձնէ իր կիրքէն կլանուած գեղեցկութեան, ապա կ'անիծէ ու կ'աղաչէ, եւ ի վերջոյ, յուսահատ, կը գլտորի անոր ոտքերուն տակ, պաղատելով ազատարար մահուան գալուստը:

Անոր ճաշակաւոր շարժումները կանգ կ'առնեն ճիշդ այն կէտին վրայ, ուր ողբերգական յուզումը պիտի դառնար բռնի կամ կեղծ: Անոր նուրբ գիծերը կը վկայակոչեն միաժամանակ եգիպտացի թագուհիներուն ուժեղ նրբութիւնը եւ պարսիկ իշխանուհիներուն զգաստ նուաղումը: Բայց ամէն բանէ վեր՝ ան կը մնայ ինքն իրեն հաւատարիմ: Մոգական պարուհի, Արեւելքի երկիր մը անոր մատուցած է իր կախարդանքի բանաձեւերը՝ թոյլ տալով յայտնաբերել ու արտայայտել անոր հրապոյրը: Իւրաքանչիւր կեցուածք դաշնաւորում մըն է, որ այլ դաշնաւորումներու հետ կը լուծուի՝ մեր երաժիշտներուն յատուկ ներդաշնակութեան չափ ճիշդ: Այս ներդաշնակութիւնը զուր խաղ մը պիտի ըլլար, մեր երաժշտութեան պարագային պէս, եթէ անծանօթ ուղիներով զգացումը չարտայայտուէր: Միայն մեր աչքին տեսանելի դառնալու համար է, որ հոգին զգեցած է այս ջինջ ձեւը, որուն դիւրաշարժութիւնը գերբնական ծագումը կը վկայէ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԻՈՍԵԱՆ (ԱՄՆ)
ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ (Հայաստան)

ԲԱԳԻՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ



Հայերէն գիրքը միայն ցուցափեղկի համար չէ: Ան իմաստ կ'ունենայ իր ընթերցողներով, որոնք միայն կրաւորական չըլլան: ԲԱԳԻՆԻ ընթերցման հանդիպումները շարունակուեցան այս տարեշրջանին եւս, թիով տասն, նոյնքան հեղինակ, նոյնքան ներկայացնողներ եւ հետեւող ու մանաւանդ մասնակցող գրասէրներու խումբ մը: Դժբախտաբար ուսանող երիտասարդութիւնը կարելի չեղաւ ներգրաւել: Այս ընելու համար ակնկալութիւններ ունինք հայ ուսուցիչներէն, որպէսզի ցոյց տան նորերուն որ հայ գրականութիւնը սոսկ անցեալ չէ, այլ ապրող իրականութիւն, Հայաստանի Հանրապետութիւն եւ Սփիւռք: Այդ ձեռնարկներուն անդրադարձաւ, օրը օրին, ԱԶԴԱԿ օրաթերթը:

Այս հանդիպումները ակադեմական ամպիոնէ տրուած դասախօսութիւններ չեն, այլ առիթներ գրականութեան ծանօթանալու եւ տպաւորութիւններ բաժնելու: Կը յուսանք որ գրասէրներու շրջանակը կ'ընդլայնի եւ այդ կ'ըլլայ նպաստ հայ գրողին եւ գրականութեան տարածման:



2010 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

10 Փետրուար «Կոստան Զարեան», ներկայացուց էլ չէր կէտէն

10 Մարտ Դոկտ. Երուանդ Քասունի ներկայացուց իր՝ «Հայկական սիւնակ... անհաճոյ ըլլալու երանութիւնը...» գիրքը:



14 Ապրիլ Լոս Անճելըսէն Պ. Ալահայտոյեան «Բագին»ի գրասէր շրջանակին ներկայացուց «Ազգագրական երգերու հետազօտական եւ հաւաքագրման աշխատանքը. խոչընդոտներ եւ դժուարութիւններ» նիւթը:

12 Մայիս Ստ. Ալաջաջեանի «Յորձանուտ»ը ներկայացուց Յ. Պալեան:



9 Յունիս, Սեդա Գրիգորեան ներկայացուց «Ծաղկաքաղ արեւմտահայ գրականութեան» (Խմբագիր՝ Պօղոս Մնայեան) եւ «Ծաղկաքաղ սփիւռքահայ գրականութեան» (Խմբագիր՝ Յարութիւն Քիւրճեան) զոյգ հատորները:

11 Օգոստոս Յ. Պալեանի «Անանուններու Կեանքի Շերտը», ներկայացուց Արամ Սէփէթճեան:



8 Սեպտեմբեր Արմէն Յարութիւնեանի «Նամակներ Պէյրութէն» գիրքը:

13 Հոկտեմբեր Շահանգուլիսի «Մեռած Լեզուն Խօսեցաւ» գիրքէն ընթերցումներ կատարեց Արմէն Ապտալեան:

10 Նոյեմբեր «Հայ Արգի Քնարերգութիւն — Սփիւռք» հաւաքածոն քննարկեց Շուշիկ Տասնապետեան:

15 Դեկտեմբեր Յակոբ Նալպանտի «Անմաշ փրփուրներ» քերթողագիրքը ներկայացուց Յ. Պալեան:

ՀԵՏԵՒԻԼ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԵՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԱՂԱՍԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



Իր տարիքի եւ տաղանդի լիութեան մէջ գտնուող ստեղծագործող մըն է Աղասի (Պօղոս Թասլաքեան), Սփիւռքի իր անցեալով հպարտ հայկական գիւղի մը ծնունդ (1964), ուր ապրած է

իր մանկութիւնը եւ պատանութիւնը, տարիք մը՝ երբ կը կազմուին հարազատութիւն եւ խորք: Առաջին տպաւորութեամբ իսկ կը զգացուի արւեստագէտներու համար այնքա՛ն



բնորոշ «աշխարհաքաղաքացիական» կամ «համաշխարհայնացման» անխուսափելի դրոշմը որ իր պարագային ինքնատիպ ազգային ենթահողի վրայ կը գտնուի: Հաւանօրէն նաեւ ժառանգականութիւն մը, ծիներով եւ տեսադաշտով, քանի որ մեծ հայր եւ հայր փորագրած են փայտի վրայ:

Հետզհետէ ընդհանրապէս բարեկեցիկ դարձած կեանքը առիթ ընծայած է որ օժտուած տղան իր տաղանդի իրականացման համար բացուի աշխարհի վրայ, արհեստի նմանող փորագրութենէն բխի արուեստ քանդակագործութիւնը:

Տասնըմէկ տարեկան է արդէն երբ

կը սկսի նկարել եւ քանդակել:

Զրոյցը անզգալաբար հուն կը փոխէ: Կը խօսի մարմարի, մարմարներու իւրայատկութիւններու մասին: Անոնք գոյն եւ հմայք կու տան քանդակին, անոր իմաստը կը փոխեն ըստ իրենց գոյնին, երանգներ կ'աւելցնեն, գործածուած մարմարի տեսակը կ'ազդէ, աւելի հարազատութիւն կու տայ ստեղծագործութեան:

Ուրիշներու պարագային ալ, կինը աւելի ներշնչման աղբիւր է քանդակագործին համար: Այդպէս չէր յոյներու պարագային, անոնք աւելի ներդաշնակ կը գտնէին տղամարդու մարմինը, իր համաչափութիւններով: Իսկ Աղասի կ'ըսէ, որ կնոջ մարմինը «ըսելիք ունի»: Այս երբ կ'ըսէ, կ'անդրադառնամ որ քանդակուած են կիներու մարմիններ են միայն, առանց գլուխի: Իրեն համար այս ընտրանք մըն է, որ ունի իր բացատրութիւնը, իմաստը, քանի որ այլ բաներով պէտք չէ ուշադրութիւնը վրիպեցնել «ըսելիք ունեցող» մարմինէն: Իսկ այդ մարմնի ընթերցումը կը կատարէ արուեստասէրը, նիւթ որ սառած չէ, կը վերածնի իւրաքանչիւրի հայեացքով:

Աղասի կնոջ մարմինը որպէս նիւթ չի վերածեր մարդակազմական ուսումնասիրութեան, չի մանրամասներ, մկաններու գծագրութիւն չի փորձեր: Միաժամանակ այդ մարմինը հոն է որպէս այդպիսին, վերացական չէ, եթերայինի մէջ չի ձուլուիր, որպէս մեկնակէտ կոչ կ'ընէ երեւակայու-

թեան: Կինը՝ հրաւէր կեանքի եւ երազի:

Ի հարկէ, կնոջ մարմինէն տարածուող ըսելիքը, պատգամը, ստեղծագործողը ինք կը տեսնէ եւ կը լսէ իր զգայարանքներով, իր տրամադրութեամբ, կ'ապրի զանոնք վերծանելու ճիգը, իսկ արուեստասէրը կը տեսնէ եւ կը զգայ ի՛ր զգայարանքներով, չի կրկներ գեղանկարիչի ներշնչանքը, ապրումները: Արուեստասէրի ըմբռնումը արուեստագէտի ըմբռնումին պատճէնը է:

Հայ արուեստագէտին համար անխուսափելի եւ բնական է ազգային «նիւթ»ը, ինչպէս Սասունցի Դաւիթը կամ Վարդան Մամիկոնեանը: Ի հարկէ, նման նիւթեր եթէ ընտրուին, գործի ազգային բնոյթը կը շեշտուի, նոյնիսկ երբ քանդակը արուեստի կոթող ըլլայ: Այլ պարագաներու, ստեղծագործողի ազգային եւ մշակութային ենթահողը ուղղակի կամ անուղղակի կերպով կը դրսեւորուի իր գործերուն մէջ, առաւել կամ նուազ շեշտուածութեամբ:

Ստեղծագործութիւնը, աւարտելէ ետք, կը հետեւի իր ուղիին, անկախ է գեղանկարիչէն, կրողն է իր պատգամին որ սառած է, իր ուրոյն կեանքը կը շարունակէ: Լուսանկարը կրկնութիւնն է մեր բոլորի տեսածին: Մեկնաբանութիւն չի պահանջեր: Տարբեր բաներ չենք տեսներ: Գեղանկարը եւ քանդակը իրականութեան վերատադրութիւնը չեն անպայման, անոնց ուժգնութիւնը կը բխի իրենց թաքուն թելադրական հմայքէն, որուն համար կրնանք

ըսել որ արուեստագէտին ներաշխարհն է:

Աղասի կ'ըսէ թէ ինք արուեստասէրին ուղղակի թելադրութիւն չ'ըներ, ան պիտի տեսնէ եւ պիտի զգայ: Արուեստի գործին կցուած անուն կամ ստորագրութիւն կարեւոր չեն, այլ գործն է կարեւոր, թէեւ մարդիկ երբեմն գործեր կը գնեն... ստորագրութեան համար:

Երբ հարց կը ծագի իր սէրերուն եւ ընտրանքի մասին, Աղասի անվարան կը յիշէ մեծ քանդակագործ Օկիւսթ Ռոտէնը: Բայց կը խօսինք նաեւ Միքէլ Անճելոյի «Մովսէս»ին եւ Քոչարի «Սասունցի Դաւիթ»ի մասին:

Աղասիի նկարները իւրայատուկ են: Կիներ, որոնց այրող կամ այրած բոսոր մարմինները կը պատմեն անօրինակ հզօրութեան մը մասին, որ երկխօսութեան մէջ է իրենց ընկերացող ձիերու կերպարներուն հետ, ձին՝ գեղեցիկ, ուժ, խոյանքի հրաւէր: Անոնք խօսող մարմիններ են, ուժի բնագանգական պատկերներով:





Աղասի կը խօսի Հայաստանի եւ Վենետիկի իր ուսանողութեան տարիներուն մասին, որոնք որպէս երկու լրացուցիչ թեւեր նպաստած են իր կազմաւորման:

Ժամանակակից արուեստի իրականացումները արգելք չեն եղած որ

Աղասի իր արմատներէն եկող պատգամները լսէ: Ան նաեւ խաչքար ստեղծող արուեստագէտ է: Ոչ փորագրող, այլ ժանեակ հիւսող: Տեսակ մը վկայութիւն՝ որ յիշողութիւն պահած եւ ջարդուած խաչքարերը կը վերածնին, առհաւական ճիգը շարունակելու, շա-

րունակուելու եւ վերականգնելու,
մայր երկրի մէջ ըլլայ թէ հոն ուր
հայ կայ:

Ի հարկէ Աղասի դեռ սկիզբն է
իր արարման ճամբուն վրայ: Ազ-
գայինի եւ համամարդկայինի
իմաստուն համադրութեամբ, ան
ունի բոլոր տուեալները մեծ ըլլա-
լու:

Յուցահանդէսներ ունեցած է
բազմաթիւ քաղաքներու մէջ, Պէյ-
րուս, Երեւան, Նիւ Եորք, Ֆիլա-
տելֆիա, Սան Տիէկո, իր գործերը
մնայուն կերպով կը ցուցադրուին
կարգ մը ցուցասրահներու մէջ, Պե-
վըրլի Հիլզ, Փրովիտենս, Չելսի...:

Չսպասել ցուցահանդէս մը հա-
ղորդուելու համար բազմաշերտ ար-



ւեստագէտին հետ:

Ինչ կը վերաբերի ցուցահանդէսնե-
րու, ստորեւ կը գտնէք ցանկ մը, որ
խօսուին է :



Mostra di Artigianato Artistico del Littorale,
Cavalino Venezia.

«Mourad Raphaelian» college of the
Mekhitarian congregation, in Venice.

«Artuel 2000» Beirut-Hall, Lebanon.

«Artuel 2001», Phoenicia Intercontinental
Beirut.

«Euroart 2001», Spain.

«Europ'Art 2002», Geneva.

«Noah's Ark art gallery» in Beirut.

«Art Expo 2003», New York.

«Naregatsi Art Institute», Yerevan 2006.

«Art Expo 2007», New York.

«Gallery Savarese», San Diego 2007.

Private Exhibition, San Francisco 2007.

«Lineart 07», Belgium.

«Artexpo 2008», NY.

«Artexpo 2009», New York.

«Gallery Piquel», New Hope PA, 2009.

«Gallery Z», Providence RI, 2009.

«Rebecca Molayem Gallery, Beverley Hills
CA, 2009.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

2010 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1, 2, 3, 4 ԹԻՒԵՐՈՒ

ԲԱԳԻՆ

ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ -	1	1
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ	2	1
ԲԱԳԻՆԻ ԱՅՍ ՀԱՄԱՐԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՌԻԹՈՎ ԼՍԵԼ՝ ԵՐԲ ԲԱՌԵՐԸ ԿԸ ՊԱՏՄԵՆ ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ԱՆՑԱԾ ՈՒՂԻ	3	1
	4	1

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ	ԷՋ
ՍԱԳՕ ԱՐԵԱՆ	ԱՄԵՐԻԿԱ՝ ՔՈՅՐՍ -	1	32
ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ			
ՆԱՅԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ	ԱՆԴՐՇԻՐԻՄԵԱՆ ԽՕՄՔԵՐ/ ՄՐՏԱՅՈՑՁ ԽՕՄՔԵՐ -38		
ԿԱՄԻԼԱ	ՄԵՏԱՄՈՐՖՈՁ	1	42
ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ	ԱՆՇԱՐԺ ԱՌԱՒՕՏ (ՇԱՐՔԻՑ)	2	22
	ՈԳԵՇՈՒՆՁ ԽՕՄՔԵՐ		
ԽԱԶԻԿ ՏԷՏԷԵԱՆ	ՖԼՈՐԱՆՍ ՆԱՅԹԻՆԿԷՑԼԻՆ	2	25
	ԱԶՔԵՐ, ԱՆԺԱՄԱՆԱԿ, ՔՆԱՐԻԴ...,		
ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	ՆԿԱՐԻԴ..., ՔԱՂՑՐԻԿ...	2	27
Ռ. ԵՍԱՅԵԱՆ	ՅՈՑՍ ԱՌԱՒՕՏ - ԾԱՂԿԱԶՈՐ	3	17
	«ԵՒ ՀՈՐԻՁՈՆԻՑ ՔԱՄԻՈՒՄ Է ԲԱՌԸ»		
ԱՐՈՒՍԵԱԿ ՕՀԱՆԵԱՆ	ՆՈՒՌԸ ԵՐԿԵՔԻ» ՇԱՐՔԻՑ	3	19
ՎԱՀԱՆ ՄԻՍԱԿԵԱՆ	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	3	25
ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ	ԵՐԿՈՒ ՔԵՐԹՈՒԱԾ	3	30
ՎԱՀԷ ԱՐՄԷՆ ՓԱՐԻՁԸ ԵՐԲԵՔ	FAUSSES NOTES	3	31
ԿԱՐՕ ԱՐՄԷՆԵԱՆ	ՆՈՐ ՁԻ ԼԻՆՈՒՄ...	3	33
Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	ՕՐ ՀԱՍԱԿԱՆ	4	3
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	«ՀԱՄՅՔԻ ՏՂԱՅ»	4	10
	ԿՂԷՈՊԱՏՐԱՅԻՆ	4	13

ԱՐՁԱԿ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	ԾՈՎԸ, Ա՛Խ ԱՅՍ ԿԱՊՈՅՏ ԽԱՅՏԱՆՔԸ...	1	3
ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ	ՄԱԹՈՍ ԵԱՂՈՒՊ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ	1	1
ՊՕՂՈՍ ԳՈՒԲԷԼԵԱՆ	ՖՐԻՎԷՑ	1	22
ԼԱԼԱ ՄԻՍԿԱՐԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ	ՋՐՈՅՑ ԿԱՊԻԿԻՆ ՀԵՏ	2	8
Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	ՋՈՒԱՐԹ ՄԱՅՑՐԻԿԸ	2	12
ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԸԼԻՃԵԱՆ	ԿԱՐԱ-ՋՈՐՁԷ	2	17
ԱԲԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ	ՍԱՐԵԿԻՆ ԵՐԳԸ	3	
37			
ԱՐԱՄ ՊԱՅԵԱՆ	ԹՈՐՈՆԹՕ	3	42
Յ. ՊԱԼԵԱՆ	ՆԱԽԱՊՏՈՅՏԻ ՕՐԱԳԻՐ	3	47
ՋՈՀՐԱՊ ԳԻՐԷՋԵԱՆ	ՄԵՆԱԿԵԱՅԸ ԵՒ...	4	15
ԼԱԼԱ ՄԻՍԿԱՐԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ	ՍԱԼԱՄՔ «ՃԻՆԿԻՁ»	4	29
ԿՈԼԵԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	ԵՒԱ	4	38

ԹԱՏՐՈՆ

ՌՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՇՈՒՆ		1	44
ՄԱՐՕ ԽԱԶԱՏՐԵԱՆ	ԻՄԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ		
	ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԻՄ ԽՈՀԱՏԵՏՐԻՑ	1	46


ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՎԻԿ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ	ԱԶԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ	1	60
ԱԼԱ ԽԱՌԱՏԵԱՆ	ԿՆՈՋ ՅԵՂԱԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՅԹԸ		
	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ»		
	ԺՈՂՈՎԱԾ ՈՒՈՒՄ -	2	

ՆՈՐ ԳԵՐՔԵՐՈՒ ՀԵՏ

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ	«ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ. ԱՆՅԱՅՏ ԵՐԳԵՐ...»	1	65
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	ՋԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ»Ը	1	69


ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ	ՅԱԿՈԲ ԽԱԶԻԿԵԱՆԻ «ԼՈՒՍԱՍԻՒՆԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ» ԿԱՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ	2	39
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ			
ՄԻՐՎԱՐԴ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	«ԵՒ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԵՄ» (ՀԵՂԻՆԱԿ՝ Պ. ՀԵՐԿԵԼԵԱՆ)	3	67
ՇՈՒՇԻԿ ՏԱՄԵԱՊԵՏԵԱՆ	«ԱՐԴԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ - ՍՓԻՒՌՔ»	4	62
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ			
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ	ՄՈՒՍԹԱՅԱ ԼՈՒԹՅԻ ԱԼՄԱՆՅԱԼՈՒԹԻՆ..	1	72
ՄՈՒՍԹԱՅԱ ԼՈՒԹՅԻ			
ԱԼ ՄԱՆՅԱԼՈՒԹԻ	ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ	1	73
ՀԱՅԱՅՈՒՑ Զ. Պ	ՀԱՅԻԹԻՑԻ ԳՐՈՂԸ ՏԱՆԻ ԼԱՅԱՐԻԷՐ՝		
	ԻՐ ԵՐԿՐԻ ԱՐՁԱՆԸ ԵՒ ՀԱՅԵԼԻՆ	1	76
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	ՈՒՆՄԻ ԷԼ-ՀԱԺ	2	51
	ՈՒՆՄԻ ԷԼ-ՀԱԺ ԿԱՄ ՄԻՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՑՍԸ	2	52
	ՈՒՆՄԻ ԷԼ-ՀԱԺԷՆ ԵՐԵՔ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ		
	- ՀԱՅԱՅՈՒՑ՝ Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	2	54
ԹԱՐԳՄ.՝ Մ. ԵՐԱՄԵԱՆ	ՀՈՐՀԷ ԼՈՒԻ ՊՈՐԿԷՍ - «ԲԱՔԵԼՈՆԻ ՄԱՏԵՆԱԴՐԱՆԸ» -	2	64
ԱՐԾՈՒԻ ԲԱԽԶԻՆԵԱՆ	ՎԵՐԱ ՓԱԼԼՈՎԱ - ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	3	70
ՀԱՅԱՅՈՒՑ՝ Զ. ՊԱԼԵԱՆ	ՌԷՑՆԸՐ ՄԱՐԻԱ ՌԻԼՔԷ	4	64
ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ (ԱՄՆ)			
ԱՐԾՈՒԻ ԲԱԽԶԻՆԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)	ՅՐԱՆՍԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԳԷՏԸ ԵՒ ՀԱՅ ՊԱՐՈՒՀԻՆ	4	68
ՄՇԱԿՈՑ			
Ա. ՏԱԳԷՍԵԱՆ	ՏԵՒԱԲԱՐ ՎԿԱՑՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ Գ. ՆՈՐԻԿԵԱՆ	1	81
ԱՐԾՈՒԻ ԱԻՆԵՍՈՎ	ԱՐԴԻ ՀԱՅ ՅՕՐԻՆՈՂՆԵՐԸ	1	84
ԱՐԾՈՒԻ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ	ՏԵՂԱԲՆԻԿ Է ԱՐԴԵՕՔ ՀԱՅԿԱԿԱՆ		
	ԱԶԸ «ԷԹՆՈՍ»Ը... ,		
	«ՂԱՐԱԲԱՂ ԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ	4	45
ՄԵՐԻ ՀԵՐՈՒՆԻ-ՍԱՐԳՍԵԱՆ	ՀԱՅԵՐԷՆԸ՝ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ	4	53
«ՀԱՅ ԿԵՈՋ ՏԱՐԻ»			
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ	ՄԻ ՄՈՌԱՅՈՒԱԾ ԵՐԵՍԱԿԸ		
	ՀԱՅ ԿԵՈՋ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ	2	3
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	ՀԱՅ ԿԻՆԸ ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ՃԱՆԱՊԱՐ ՀԻՆ	3	15
ՈԳԵԿՈՉՈՒՄ			
Զ. ՊԱԼԵԱՆ	ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՄԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ	3	3
ՍԱԳՕ ԱՐԵԱՆ	ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՌԱՆՑ ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆԻ	3	5
ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ	ՎԵՐՋԻՆ ԲԵՌՆԱԿԻՐԸ	3	9
ԱՐՈՒԵՍ			
ԲԱԳԻՆ	ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԱՐԴԱՑՆՈՒԹԻՒՆ ԱԻԵԼՆՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ		
	ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ՝ ԳԱԼՈՒՍՏ ՊԱՊԵԱՆ	1	88
Զ. ՊԱԼԵԱՆ	ԵՈՒՐՈՋ՝ (ԵՈՒՐԻ ԳԷՈՐԳԵԱՆ) ՅԱԻ ՈՒ ԵՐԱԶ		
	ԴԱՋՈՂ ՄԵԾ ՆԿԱՐԻՉԸ	2	70
ԴՈԿՏ. ՄՈՎՍԷՍ ԾԻՐԱՆԻ	ԵՈՒՐՈՋԻ ԽՈՐԻՄԱՍՏ ԽՈՐՀՐԱՆՇԱՆՆԵՐԸ	2	73
ԲԱԳԻՆ	ՄԱՐԳԱՐ ԹՈՒՄԱՑԵԱՆԻ ՈՍՊԵՆԱԿՈՎ ՀԱՅԱՔԱՂԱՔԻ ՄԸ		
	ԵՒ ՀԱՄԱՑՆՔԻ ՄԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ	3	75
	ՀԵՏԵԻԼ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԵՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ		
	ԱՂԱՍԻԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ՃԱՆԱՊԱՐ ՀԻՆ	4	70
ԱՐԽԻԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ			
Զ. ՊԱԼԵԱՆ	ԻՆՉԵՐ ԿՐՍԵՆ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ	2	44
ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ	ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԷՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆԻՆ	3	68
ՆԱՄԱԿԱՆԻ-ԱՐՁԱԳԱՆԳ			
Բ.	ՆԱՄԱԿԻ ՄԸ ԱՐԾԱՐԾԱԾ ԽՆԴԻՐԸ	1	95
Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ	ՆԱՄԱԿ՝ ՆԱՄԱԿԱԳՐԻՆ	3	74
Բ. ԲԱԳԻՆԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ		4	75
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 2010 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ 1«2»3«4 ԹԻԵՐՈՒ		4	76
ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ 2010		4	71




A JOURNEY OF
FAITH, HOPE AND
VISION
Հեղինակ՝
ԱՐԱՄ Ա.
ԱՆԹԻԼԻԱՍ- 2010



ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ
ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԸ (ՎԷՊ)
ՀԵՂԻՆԱԿ՝ ՖԻԱՆՑ ՎԵՐՖԷԼ
ԹԱՐԳԱՆ՝
ՊԱՐՈՅՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Համազգայինի «Վահէ Սէրեան»
տպարան
Պէյրութ, 2010




ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒԷՏԱՀԱՅԵՐՈՒ
Հեղինակ՝ ՍԵՐՈՔ ՇԵՐՊԵԹՃԵԱՆ
(Խմբագիր՝ Եսայի Հաւաթեան)
Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարան
Պէյրութ, 2010




ԱՂԲԱՐԻՎ, ԱՓԻԿ ՄԸ ԶՈՒՐ
(Յկեանս նահատակութիւն-2)
Հեղինակ՝ ԳԷՈՐԳ Ժ. ԱՐԷԼԵԱՆ
Համազգայինի «Վահէ Սէրեան» տպարան
Այնճար, 2010


THE CONFISCATION OF
ARMENIAN PROPERTIES
By the Turkish Government
said to be abandoned
Հեղինակ՝ ԳԷՈՐԳ Գ. ՊԱՂՃԵԱՆ
Անթիլիաս, 2010



«ԱՄԱՌԱՆ ԵՒ ԶՄԵՌԱՆ»
ՀԱՏՈՐՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ
ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՔԱՐՈՋՆԵՐԸ
Թարգմանեց՝ ԹԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ
Անթիլիաս, 2010



ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ.
Անցեալի Իշխանուհիներ ու
գաղթականներ եւ
Ժամանակակից Համայնք
Խմբագիր՝
ԱՅՏԱ ՊՈՒՃԻՔԱՆԵԱՆ
Եռալեզու հրատարակութիւն՝
Հայկազեան Համալսարանի
եւ The Armenian Heritage Pressի
Պէյրուք, 2010




**ՄՏՈՐՈՒՄՆԵՐ
ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ**
Հեղինակ՝
ՊԵՐՃ ՖԱԶԼԵԱՆ
Պէյրուք, 2010




«ԿԱՐՕՏ ՈՒ ՄՈՐՄՈՔ»
(Բանաստեղծութիւններ)
Հեղինակ՝ ԶԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Պէյրուք, 2010

**ԺԽՈՐԻՆ ՄԷՋ
ԱՌԱՆՋՆՈՒԹԵԱՆ**
(Բանաստեղծութիւններ)
Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ֆրիմոնք, 2009



**ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱԿՆԱՐԿՆԵՐ, ՅՈՒՇԵՐ ԵՒ ԱՅԼ ԷՋԵՐ**
Հեղինակ՝ ՄԱՆՈՒԷԼ Ս. ՔԱՍՈՒՆԻ
(Խմբագիր՝ Երուանդ Հ. Քասունի)
Պէյրուք, 2010

ԽՈԿԱՄ
Հեղինակ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿՌԱՆԵԱՆ
Պէյրուք, 2010





ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ